ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Արցախը շրջափակված է

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(**76**-րդ տարի) **Թիվ-12** (1670) Դեկտեմբեր 2022

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Ինչի՞ է արժանի հայ ժողովուրդը (էջ 1-3)

2- Քաղաքական

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Հնարավորությունների պատուհանը դեռ բաց է (էջ 4-5)

Վարդան Հակոբյան
Խաղաղությո՞ւն, թե՞ խայտառակություն: Արտաքին քաղաքականությո՞ւն, թե՞ խեղկատակություն (էջ 6-8)

3- Տարածաշրջանային

Լիանա Պետրոսյան
Իրանի և Ադրբեջանի Հանրապետության հարաբերություններում վերսկսված լարվածության շուրջ (էջ 9-11)

4- Աշխարհաքաղաքական

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն
«Սյունիքի միջանցքը», «Գոբլի պլանը» և թուրք-ադրբեջանական տանդեմի շահերը (էջ 12-14)

Նարե Գևորգյան
Թուրքական «Ճանկ-սուր» օպերացիան և նոր քաղաքական զարգացումները (էջ 15-17)

5- Գաղափարական

Անի Մելքոնյան
Հայկական պետականությունների անկումը հայ ազնվականության ոչնչացման հետևանք (էջ 18-21)

6- Իրավաքաղաքական

Արմեն Մարուքյան
ՄԱԿ-ում Հայոց ցեղասպանության հարցի քննարկումները և ընդունված բանաձևերը (էջ 22-27)

Արփի Աբրահամյան
Եվրոպական միություն (Հոդված 1) (էջ 28-33)

7- Պատմության լուսարձակ

Սեդա Գալստյան
Գ. Նժդեհի կյանքի որոշ դրվագներ Բուլղարիայում ապրած տարիներից (էջ 34-38)

8- Հասարակություն

Մարգարիտա Մ. Խաչատրյան
Հայից սփյուռքահայ (Գևորգ Պետիկյանի «Սփիւռքը…» հատորի առիթով) (էջ 39-42)

9- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Կառավարե՞լ Սփիւռքը (էջ 43-44)

Ինչի՞ է արժանի հայ ժողովուրդը

Եզրափակվում է հայության ու հայոց պետականության համար փորձություններով ու անորոշություններով լի ևս մեկ տարի: Այս ընթացքում տեսանելի չեղան այնպիսի քայլեր, որոնց շնորհիվ պետք է ամրապնդվեին հայոց բանակը, Հայաստանի պետական վարչամեքենան, տնտեսությունը, արտաքին հարաբերությունների ոլորտը, Արցախի անվտանգությունն ու ինքնիշխանությունը, ազգային համերաշխությունն ու հայոց եռամիասնությունը: Ճիշտ հակառակը՝ կարելի է ասել, որ այս բոլոր ուղղություններով պահպանվել կամ ավելի են խորացել եղած ճգնաժամերը, որոնք ակնառու դարձան հատկապես 2020 թվականի ողբերգական պատերազմից հետո: Անցնող տարին հատկանշական էր ռուս-ուկրաինական պատերազմով ու ընդհանրապես աշխարհակարգերի սուր բախմամբ, որոնք դրսևորվում էին թե՛ ռազմական հակամարտությունների և թե՛ քաղաքական-դիվանագիտական առճակատումների, տնտեսական պատերազմների և այլ ձևերով՝ այդ խորապատկերում մեր դեպքում ընդգծելով Հայաստանի իշխանությունների քաղաքական վարքն ու կողմնորոշումները:

Ամրապնդվեց այն մտավախությունը (շատերի կողմից տարիներ շարունակ հնչող մեղադրանքը), որ 2018 թվականին Հայաստանում իշխանության եկած ուժն ունեցել է Արցախը հանձնելու նպատակ, որը դրսևորվեց 44-օրյա պատերազմում ծրագրված պարտությամբ: Իհարկե, մարդկության պատմության մեջ թերևս սա միակ դեպքն էր, երբ պատերազմում պարտված ղեկավարությունը պարտության մեղքը բարդում է նախկին իշխանությունների կամ դաշնակից երկրի վրա: Մի կողմ թողնենք, սակայն, պատերազմի ընթացքի մանրամասները: Անդրադառնալով 2022 թվականի զարգացումներին՝ ակնհայտ է դառնում գունավոր հեղափոխությամբ երկրի ղեկին տիրացած ուժի վերաբերմունքը վերջին տասնամյակների ազգային թիվ մեկ հիմնահարցի նկատմամբ: Հայաստանի ղեկավարը, որը, քաղաքական նպատակահարմարությունից ելնելով, ժամանակին հայտարարել էր, թե «Արցախը Հայաստան է և վերջ», պատերազմի ավարտից ցայսօր ոչ մի անգամ Արցախ չի այցելել: Նրա հրահանգով մի քանի անգամ խորհրդարանական մեծամասնությունը տապալել է Արցախի անվտանգության և այլ հարցերով ընդդիմության ներկայացրած բանաձևերի քննարկումը, պաշտոնական բոլոր փաստաթղթերից դուրս են բերվում Արցախի կարգավիճակը բնորոշող «հանրապետություն, ինքնորոշում» բառերը, Հայաստանի իշխանությունը Ռուսաստանին և այլ պետություններին է թողնում խնդրի կարգավորման հոգսը, համաձայնում է փաստաթղթերի հետ, ըստ որոնց՝ ինքնավարության ձևական կարգավիճակով Արցախը պետք է մնա Ադրբեջանի կազմում, և վերջապես՝



երկրի վարչապետը Պրահայում ստորագրեց պայմանագիր՝ ճանաչելով Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, ինչը, ըստ էության, պետք է նշանակեր Արցախը ճանաչել Ադրբեջանի կազմում: Այս դեպքում էլ «պարզվում է», որ վաղուց և այլ փաստաթղթերով խնդիրն այդ ձևով արդեն լուծվել էր: Հարց է մնում՝ իրենից առաջ ստորագրված կապիտուլյացիոն պայմանագրերի մասին մինչև պատերազմն ու պարտությունը նույն ղեկավարն ինչու չէր խոսում, ինչո՞ւ էր նա այն ժամանակ հայտարարում, թե ինքը բանակցությունները սկսում է իր զրոյական կետից, և «Արցախը Հայաստան է ու վերջ»:

Ակնհայտ է, որ Արցախի հարցում նա ենթարկվում է Ադրբեջանի նախագահի ճնշմանը, որը նրան ստիպում է բանակցություններում և առհասարակ մոռանալ այդ թեման: Նա և իր թիմը սեփական երկրում անգամ ի օգուտ Արցախի չեն ասում ու անում մի բան, որը կարող է դուր չգալ Ադրբեջանի ղեկավարին:

Քաղաքական գործիչների ու փորձագետների գնահատմամբ՝ 2020 թվականին հաջորդած ետպատերազմական շրջանը Նիկոլ Փաշինյան վարչապետի համար նույնքան պարտվողական է, այս անգամ, սակայն, ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի Հանրապետության առումով: Պարտության հասցված պետությունը թողնելով ծնկած վիճակում և ոչ մի բնագավառում ոչինչ չանելով իր թիկունքն ամրապնդելու համար, կախման մեջ լինելով արևմտյան հովանավորներից, որոնց քաղաքական նախագիծն է ինքն իր ապազգային թիմի հետ, չկարողանալով ձերբազատվել ռուսական ազդեցության բազմերես ու բազմամակարդակ լծակներից և միևնույն ժամանակ գտնվելով թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական գործոնի ճնշման ներքո՝

Հայաստանում ավտորիտար վարչակարգ հաստատած ղեկավարը ստիպված է ոչ թե քաղաքականություն վարել, այլ խուսանավել տարբեր ուժերի միջև՝ ամեն տեղ տալով խոստումներ, նրանց միջև հրահրել հակասություններ և, ի վերջո, իր երկրի անվտանգային ու մյուս բոլոր կենսական խնդիրների լուծումը բարդել նրանց վրա:

Նիկոլ Փաշինյան հոգեպես անհավասարակշիռ անձը ներքաշվել է իր իսկ սարքած արկածախնդրության մեջ և խաղում է վա բանկ, իսկ խաղասեղանին դրված գրավը հայոց պետականության ճակատագիրն է: Այդ արկածախնդրության դրսևորումներից մեկը արդեն հինգերորդ տարին հետևողականորեն իրականացվող հակառուսականության քաղաքականությունն է: Հակառուսականությամբ լցված է իշխանական ողջ քարոզչամեքենան, ինչի համար հատկապես հմտորեն օգտագործվում են ընկերային ցանցերի հնարավորությունները: Կատարելով հովանավոր ուժերի պատվերը՝ նա իր անփորձ ու թույլ ուսերի վրա է վերցրել Անդրկովկասի 200 տարվա քաղաքական կողմնորոշումը փոխելու առաքելությունը: Փաշինյանը կամ հավատում է, թե Ռուսաստանը շուտով կորցնելու է իր հզորությունը, կամ մտածում է, որ կհասցնի թշնամիների ու հովանավորների հետ իրավականորեն ձևավորել նոր իրողություններ և բոլորին կանգնեցնել կատարված փաստի առաջ, կամ այս ու այլ հաշվարկներ միասին: Միաժամանակ, գտնվելով ռուսական բազմաթիվ լծակների ուղղակի և անուղղակի ճնշման ներքո, որոնց բաղկացուցիչ տարրերն են և՛ խաղաղապահների գործոնը, և՛ Հայաստանում գործող ռուսական ռազմաբազան, և՛ քաղաքական ու տնտեսական տարբեր այլ լծակներ, Փաշինյանը, Արևմուտքի հետ գալով Ռուսաստանի շահերը շրջանցող համաձայնությունների (իրականում այդ համաձայնությունները նախ և առաջ մեծ զիջումներ են նախատեսում Հայաստանի հաշվին), խոնարհվում է Ռուսաստանի առաջնորդի առաջ և հավատարմության երդումներ տալիս: Իրականում տեղի ունեցող գեղջկական ճարպկությունները իրենց ողջ մերկությամբ տեսանելի են առաջին հերթին ռուսների համար: Հակառուսական հիստերիան բորբոքվում է հենց Նիկոլի թիմակիցների ու քաղաքական գործակիցների ու համացանցային «ֆեյքերի» բանակի ձեռքով: Հասկանալով կամ անգիտակցաբար Փաշինյանը Հայաստանը դարձնում է աշխարհաքաղաքական բախման նոր սահմանագիծ:

Իհարկե, մեր խնդիրը ռուսների կամ մեկ ուրիշի շահը պաշտպանելը չէ, սակայն խելագարություն է հաշվի չնստելը հարյուրամյակներով ձևավորված իրողությունների հետ: Այսօր Ռուսաստանն իսկապես գլխով-ոտքով խրված է Ուկրաինայի դեմ պատերազմի մեջ, և նրա որդեգրած պահի քաղաքականությունն է հայ-ադրբեջանաթուրքական գործընթացների սառեցումը, տարածաշրջանում իրեն փոխարինելու Արևմուտքի հավակնությունների կանխումը: Անշուշտ

ունենալով այն ինքնավստահությունը, որ Արևմուտքը խաղաղ պայմաններում չի համարձակվի մտածել այստեղ զինվորական ուժ տեղափոխելու մասին: Ինչ վերաբերում է Անդրկովկասում իր ազդեցության պահպանման հարցին, ապա Ռուսաստանն ատամներով պահելու է սեփական դիրքերը, որովհետև այստեղից նահանջելու դեպքում ստիպված է լինելու թուրքերի ու ադրբեջանցիների, ինչպես և Արևմուտքի հետ առճակատվել արդեն իր բուն տարածքը կազմող Հյուսիսային Կովկասում, ինչպես ելցինյան ոչ հեռավոր ժամանակներում: Ռուսաստանը ևս մեկ անգամ վճռականորեն կվերահաստատվի Անդրկովկասում Ուկրաինայի հետ հաշիվները մաքրելուց հետո: Իսկ Ուկրաինային նա երբեք չի պարտվի, որովհետև այդ դեպքում նրան սպառնալու է իշխանափոխությունների, քաղաքացիական խռովությունների ու երկրի մասնատման հեռանկարը:

Նկատի ունենալով, թե ինչպես ռուսները չնեղեցին արյունակից ուկրաինացիներին, մի պահ պատկերացնենք, թե ինչ կարող է պատահել փոքր Հայաստանի հետ, որի իշխանությունները որոշել են նրան դուրս վռնդել տարածաշրջանից և հակառուսական հիստերիայով են վարակել հայ հասարակության մի զգալի հատվածին:

Դրա փոխարեն, ավանդական կապերի ամրապնդմանը զուգահեռաբար, Հայաստանը պետք է շարունակի բարեկամական ու գործակցային հարաբերությունները Արևմուտքի, ինչպես և արևելքի պոտենցիալ դաշնակիցների հետ՝ ձևավորելով որոշակի հավասարակշռության դաշտ, ինչը, սակայն, խոսակցության առանձին նյութ է:

Նիկոլ Փաշինյանն իր իշխանական դիրքերն ամրապնդելու համար ճանապարհ է հարթել՝ ոտնահարելով օրենքն ու օրինականությունը: Արցախյան պատերազմի շրջանում թույլ է տվել արարքներ, որոնց դավաճանական բնույթը դեռ պետք է փորձի հերքել: Աճող դժգոհությունները չեզոքացնելու համար ներքին քաղաքականության մեջ նա ի սկզբանե որդեգրել է իրավական հետապնդումների

գործելաոճը: Հասկանալով, որ անցած տարիներին կատարած մեղքերի համար իրեն սպասվում է ծանր պատասխանատվություն, Փաշինյանը նպատակ է դարձրել ամեն գնով հնարավորինս պահպանել իշխանությունը: Այս ինքնանպատակ դարձած պայքարի ճանապարհին նա հետևողականորեն իրեն է ենթարկում դատական համակարգը, որն իշխանության երեք թևերից միակն էր, որն ինչ-որ չափով պահպանել էր անկախությունը: Նա դանդաղորեն իրեն է ենթարկում ողջ քարոզչադաշտը, հանրապետական ու տեղական ողջ իշխանությունը՝ այլևս խտրություն չդնելով միջոցների մեջ, մասնավորապես՝ բազմապատկելով ապօրինությունները ընտրական գործընթացների ժամանակ և դրանցից հետո:

Դրսում կամակատար, ներսում բռնապետ ղեկավարը իր իշխանությունը պահպանում է պետական ողջ համակարգի, մասնավորապես ուժային կառույցների անվերապահ ենթակայության և իր անձին կուրորեն ծառայելու միջոցով:

Պետք է նկատել, որ երևույթների խորքը չտեսնող Հայաստանի ներկա ամբոխապետության մեջ շատերն այն տպավորությունն ունեն, թե վարչապետի աթոռին նստած անձը միայնակ կարողանում է հաղթող դուրս գալ իր կառավարումը մերժող հայաստանյան հանրության, Արցախի ու Սփյուռքի, Հայ առաքելական եկեղեցու և մտավորականության նկատմամբ: Իրականում նա ընդամենը հոխորտում է թիկունքից, իսկ իրեն պաշտպանում ու պահպանում է իր գոյության շնորհիվ իշխանությունը վայելող ազգադավ համակարգը:

Պետք է արձանագրել նաև, որ ժողովրդավարական ճանապարհով երկրի համար փրկարար իշխանափոխություն իրականացնելու ընդդիմության գործունեությունը վերջին երեք տարիների ընթացքում չհանգեց հիմնական նպատակի իրականացմանը: Մյուս կողմից՝ այսօր երկրում չկա մեկ այլ առողջ ու իրական ընդդիմություն, որն ունակ է տանելու այդ պայքարը: Հետևաբար կրկին նույն ուժերի ուսերին է ընկած երկրի փրկության գործը: Այս դեպքում, սակայն, նրանք իրենց մեջ պետք է իրականացնեն այն ներքին որակական փոփոխությունները, որոնք հնարավորություն կտան կրկին ու կրկին չգնալու տրորված ճանապարհով, այլ նախաձեռնելու որակական նոր պայքար՝ նոր մարտավարությամբ և նոր գործիքակազմով: Իսկ ժամանակը կարճ է, քանզի երկրի ղեկավարը և նրա վրա առավել ազդեցություն ունեցող ուժերը շտապում են հասնելու Հայաստանի նոր և ճակատագրական կապիտուլյացիոն ակտի ստորագրմանը՝ խաղաղության պայմանագրի տեսքով: Երկրի վայ-ղեկավարը այս մասին սեպտեմբերի 14-ին Ազգային ժողով-կառավարություն հարցուպատասխանի ժամանակ հստակ հայտարարել է. «Մենք ուզում ենք ստորագրել մի թուղթ, որի արդյունքում մեզ լիքը մարդ կքննադատի, լիքը մարդ կհայհոյի, լիքը մարդ դավաճան կասի, նույնիսկ կարող ա ժողովուրդը որոշի մեզ իշխանությունից հեռացնել, էլի գոհ ու շնորհակալ կլինենք, որ դրա արդյունքում ՀՀ-ն 29.800 ք/կմ տարածքով ստանա տևական խաղաղություն և անվտանգություն: Ես շատ հստակ ասում եմ՝ էն որոշումը, որ սա ապահովելու ա, ես այդ որոշումը, շատ հստակ ասում եմ, ստորագրելու եմ: Ու ինձ չի հետաքրքրում՝ ինչ կլինի հետո ինձ հետ, ինձ հետաքրքրում է՝ ինչ կլինի հետո ՀՀ-ի հետ» («Դրօշակ», Եր., 2022, թիվ 10, էջ 5):

Այսօր, երբ անգամ բուն Հայաստանի Հանրապետության տարածքներ են գտնվում թշնամու իշխանության ներքո, այդ տարածքների բնակչությունը հեռացել է կամ գոյատևում է մշտապես վախը սրտում, լուծված չէ գերիների հարցը, իսկ նահատակված զինվորների դիերը մնում են ընկած բախման գոտում, և այս պայմաններում իշխանությունը թաղված է իր անհոգ ու զեխ կյանքի մեջ, ժողովրդին փորձում է շեղել կենսական հիմնահարցերից՝ կազմակերպելով Ամանորի շոուներ, անհեթեթ է հիարկե մտածելը, թե հայրենիքի և նրա սահմանների ճակատագիրը ինչ-որ բան է նշանակում ազգադավ իշխանության համար: Եթե բանակցային սեղանի շուրջ տեղի ունենա վատթարագույնը, դրանից հետո անիմաստ կդառնա ամեն ինչ: Անցնող և գալիք տարիների սահմանագծին հայ ժողովուրդը կանգնած է իր համար աննախադեպ փորձության առաջ, և հենց նա իր բազմազան շերտերով պիտի որոշի՝ արժանի՞ է արդյոք ունենալու իր անկախ պետականությունը, թե՞ ոչ: ■



Հնարավորությունների պատուհանը դեռ բաց է

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Քաղաքագետ, «Ոսկանապատ» վերլուծական կենտրոնի ղեկավար

Դեկտեմբերի 1-ին տեղի ունեցած մամուլի ասուլիսի ընթացքում Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը հայտարարել է, որ հոկտեմբերի 7-ին Պրահայում կայացած Փաշինյան-Ալիև-Մակրոն-Միշել հանդիպման հետևանքով ընդունված քառակողմ հայտարարությունը լուծում է Արցախի կարգավիճակի հարցը: «Երբ նրանք՝ Ադրբեջանի նախագահն ու Հայաստանի վարչապետը, ժամանեցին Սոչի, նրանք Պրահայից բերել էին հենց այն փաստաթուղթը, որտեղ ասվում էր, որ ցանկանում են խաղաղության պայմանագիր ստորագրել՝ առաջնորդվելով ՄԱԿ-ի Կանոնադրությամբ և Ալմա-Աթայի հռչակագրով:

ԱՊՀ ստեղծման մասին Ալմա-Աթայի հռչակագրում հստակ ասվում է, որ նոր պետությունների միջև սահմանները հիմնվելու են նախկին ԽՍՀՄ միութենական հանրապետությունների վարչական սահմանների վրա, իսկ այն ժամանակ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը միանշանակորեն Ադրբեջանական ԽՍՀ-ի մաս էր հանդիսանում: Դա հաստատվել էր Ադրբեջանի, Հայաստանի, Ֆրանսիայի և պարոն Միշելի կողմից՝ առանց որևէ վերապահումների, և դա լուծում է այն հարցը, թե ինչպես մոտենալ Ղարաբաղի կարգավիճակին»,- ասել է Լավրովը[1]:

Ռուսաստանի արտաքին գերատեսչության ղեկավարի այս խոսքերը միանգամայն նոր լույսի ներքո են ներկայացնում արցախյան հիմնախնդրի լուծմանը և հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորմանն ուղղված բանակցությունների ընթացքը: Այն, որ բանակցային գործընթացում լուրջ զարգացումներ կան, հայտնի էր դարձել արդեն իսկ Լավրովի հիշատակած Պրահայի հանդիպումից անմիջապես հետո: Իրականում եվրոպական կողմի միջնորդությամբ անցկացված հանդիպումից հետո նման բովանդակությամբ հայտարարության ընդունումը տհաճ անակնկալ է դարձել հայ հանրության համար: Խնդրահարույցը մասնավորապես հայտարարության այն ձևակերպումն էր, ըստ որի՝ Հայաստանն ու Ադրբեջանը ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունը: «Հայաստանն ու Ադրբեջանը հաստատեցին իրենց հանձնառությունը ՄԱԿ-ի կանոնադրությանը և 1991 թ. Ալմա-Աթայի Հռչակագրին, որոնց միջոցով երկու կողմերն էլ ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը»,- նշված է Պրահայի հայտարարության մեջ[2]:

Պետք է նշել նաև, որ Ալմա Աթայի հռչակագրում, որին հղում են անում Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարները, ինչպես նաև ՌԴ արտգործնախարարը, նշված չէ, որ այն ստորագրող կողմերը միմյանց տարածքները ճանաչելիս հիմք են ընդունել ԽՍՀՄ միութենական պետությունների վարչական տարածքները, ինչպես դա իր ասուլիսում ներկայացրել է Սերգեյ Լավրովը: Այս խնդրի առնչությամբ հռչակագրում միայն հետևյալ ձևակերպումն է արված՝ «ճանաչելով և հարգելով միմյանց տարածքային ամբողջականությունն ու գոյություն ունեցող սահմանների անխախտելիությունը….»[3]: Մինչդեռ հայտնի է, որ հռչակագրի ստորագրման պահին՝ 1991 թ. դեկտեմբերի 21-ին, Արցախն արդեն անկախ պետություն էր, դիմակայում էր Ադրբեջանի ռազմական ագրեսիային և որևէ կերպ չէր տեղավորվում Ադրբեջանի «գոյություն ունեցող սահմանների» մեջ: Եվ հետևաբար հարց է ծագում, թե ինչու է Ռուսաստանի արտգործնախարարը, մեկնաբանելով Պրահայի քառակողմ հայտարարության մեջ Ալմա Աթայի հռչակագրին հղվելու փաստը, խոսում այն մասին, թե իբր դա լուծում է Արցախի կարգավիճակի հարցը: Այս հարցը կարող է երկու պատասխան ունենալ.

ա) Լավրովն ահազանգ է հնչեցնում, որ Նիկոլ Փաշինյանն Արցախը հանձնում է Ադրբեջանին:

բ) Ռուսաստանն իսկապես հրաժարվել է իր իսկ մշակած բանակցային առաջարկներից, որոնք ներկայացրել է Հայաստանին և Ադրբեջանին:

Հիշեցնենք, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համագումարի ընթացքում՝ հոկտեմբերի 29-ին, Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ հույս ունի՝ «Ռուսաստանի Դաշնությունը իր առաջարկությունները կպաշտպանի»: Ի դեպ, Սերգեյ Լավրովը ՀՀ վարչապետի հենց այս հայտարարությանն էր բավական կոպիտ արձագանքել իր ասուլիսի ընթացքում: «Ուստի, երբ այս պայմանավորվածությունը (խոսքը Պրահայի քառակողմ հայտարարության մասին է – Հ. Մ.-Շ.) ստորագրելուց հետո մեր հայ գործընկերները մեզ ասում են. «Թող Ռուսաստանը հաստատի իր առաջարկները Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ», ինքներդ էլ հասկանում եք, որ դա ոչ թե բանակցություններ վարելու, այլ բոլորովին այլ օպերայից է»,- ասել է ռուսաստանցի նախարարը[4]:

Վերադառնալով վերը նշված երկու տարբերակներին՝ նշենք, որ, անկախ Լավրովի հայտարարությունների ու Ալմա Աթայի հռչակագրի կամայական մեկնաբանության պատճառից, փաստը մնում է այն, որ հայ-ադրբեջանական բանակցային գործընթացում Արցախի կարգավիճակի հարցը լուրջ վտանգի է ենթարկվել. մի կողմից՝ Արցախին որևէ կարգավիճակ տալու գաղափարին դեմ է Ադրբեջանը, որը, ի դեպ, կարողացել է այդ հարցում ստանալ միջազգային հանրության հավանությունը, մյուս կողմից՝ Հայաստանն այդ խնդիրը լուծելու փոխարեն բանավեճի և նույնիսկ փոխադարձ

քննադատությունների մեջ է մտել Արցախին որևէ կարգավիճակ տալուն օժանդակող թերևս միակ երկրի՝ Ռուսաստանի հետ: Եվ սա շատ մեծ սպառնալիք է հայկական երկրորդ պետության համար: Իսկ այն, որ Ռուսաստանը պատրաստ է և նույնիսկ որոշակի քայլեր է ձեռնարկել Արցախին ապագայում որևէ կարգավիճակ շնորհելու ուղղությամբ, հաստատվում է ոչ միայն Լավրովի՝ հիշատակված ասուլիսում արտահայտած մտքերով, այլև ՌԴ նախագահ Վ. Պուտինի այն հայտարարությամբ, որ եթե հայ ժողովուրդն ու իշխանությունները գտնում են, որ «Ղարաբաղն ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք պետք է հաշվի առնել և ներառել ապագա խաղաղության պայմանագրում, այդպես ևս կարելի է»[5]:

Չնայած Նիկոլ Փաշինյանի բոլոր հերքումներին՝ նրա և Ռուսաստանի ղեկավարի՝ միմյանց ուղղված փոխադարձ մեղադրանքներից ու բանակցային գործընթացին տրված գնահատականներից պարզ է դառնում, որ կա հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորմանն ուղղված բանակցային փաստաթղթերի երկու տարբերակ՝ ռուսական ու արևմտյան: Վալդայան ակումբում Պուտինը նշել է, որ, այսպես կոչված, վաշինգտոնյան համաձայնագիրը «նախատեսում է Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի ինքնիշխանության ճանաչումը»[6]: Ռուսական տարբերակը, ըստ նույն գնահատականների, ենթադրում է, որ Արցախը կարող է կարգավիճակ կամ, ինչպես հենց Պուտինն է ասում, «որոշակի առանձնահատկություններ» ունենալ: Ըստ ամենայնի, պաշտոնական Երևանը երկու հնարավոր տարբերակներից ընտրել է առաջինը՝ արևմտյանը:

Հոկտեմբերի 31-ին Սոչիում կայացած Փաշինյան-Պուտին-Ալիև եռակողմ հանդիպումից հետո հայկական քաղաքական դաշտում սկսեցին լուրեր շրջանառվել այն մասին, թե Փաշինյանի ու Ալիևի դիրքորոշումն անակնկալ է եղել ռուսական կողմի համար: Չգիտեմ՝ որտեղից էր այդ տեղեկատվությունը հասանելի դարձել ընդդիմադիրներին, բայց խոսում էին այն մասին, որ Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարները շատ միաբան էին Պուտինի հետ հանդիպմանը և «փաստի առաջ են կանգնեցրել նրան»: Լավրովի վերոնշյալ հայտարարություններով այդ լուրերը, ցավոք, հաստատվել են, ինչը նշանակում է, որ Հայաստանի իշխանությունն ինքն է Արցախը հանձնում Ադրբեջանին: Եվ շատ բնական է, որ Պրահա-Սոչի-Երևան (ՀԱՊԿ գագաթնաժողով)-Մոսկվա (ՌԴ-ի և Ադրբեջանի արտգործնախարարների հանդիպում) բանակցային հերթական շրջափուլից հետո Ադրբեջանի իշխանությունները սկսել են ավելի պահանջկոտ լինել Արցախի նկատմամբ: Այսպես՝ դեկտեմբերի 3-ին տեղեկատվություն տարածվեց այն մասին, որ քաղաքացիական հագուստով մի խումբ ադրբեջանցիներ Շուշի-Քարինտակ խաչմերուկում փակել են Ստեփանակերտ-Գորիս ճանապարհը: Ադրբեջանական կողմը դեպքի առնչությամբ նշել է, որ Լաչինի միջանցքը փակած քաղաքացիական անձինք Ադրբեջանի էկոլոգիայի և բնական պաշարների նախարարության ներկայացուցիչներն էին, որոնք պնդում էին, թե Արցախում շահագործվող ոսկու հանքերը բնապահպանական վնաս են հասցնում Ադրբեջանին[7]:

Մինչ այդ՝ դեկտեմբերի 2-ին, Հայաստանում իշխող «Քաղաքացիական պայմանագիրը» հրաժարվել էր ստորագրել ընդդիմության՝ խորհրդարան բերած ԱԺ հայտարարության տեքստը՝ պահանջելով, որ դրանից հեռացվեն «Արցախի Հանրապետություն», «ինքնորոշման իրավունք», «Ադրբեջանի ագրեսիա» արտահայտությունները[8]:

Այս ամենը հաստատում է մեր վերոնշյալ թեզն այն մասին, որ ՀՀ իշխանությունները լրիվ հրաժարվել են Արցախի շահերը պաշտպանելու առաքելությունից: Պաշտոնական Երևանը նույնիսկ չի արձագանքել ռուսական կողմի այն մեղադրանքներին, որ Արցախի կարգավիճակի հարցում հենց Հայաստանի դիրքորոշումն է խնդրահարույց դարձել հայկական երկրորդ պետության և նույնիսկ Ռուսաստանի համար: Իսկ հիմա անընդհատ տեղեկություններ են տարածվում այն մասին, որ մինչև տարեվերջ Հայաստանի ու Ադրբեջանի միջև կարող է խաղաղության պայմանագիր ստորագրվել: Ու եթե Պրահայի քառակողմ հայտարարությունը, որն ինքնին շատ վատն է հայկական կողմի համար, դեռ դատավճիռ չէ Արցախի համար, ապա, այսպես կոչված, խաղաղության պայմանագիրը կարող է պարզապես վերջ դնել հայ ժողովրդի վերջին 33 տարվա պայքարին և ջուրը գցել այդ տարիներին ունեցած մեր բոլոր ձեռքբերումները:

Իրավիճակը փրկելու հնարավորության պատուհանը դեռ բաց է հայ ժողովրդի համար: Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինի ուղերձը շատ հստակ էր. եթե հայերը կամենան, իրադարձությունները կարող են նաև այլ ընթացք ունենալ: Բայց հայ ժողովուրդ ասելով ոչ ես, ոչ էլ Պուտինը ՀՀ գործող իշխանություններին նկատի չունենք: Ճիշտ հակառակը՝ Արցախը փրկելու մեր ժողովրդի ցանկությունը Հայաստանում տեղի ունենալիք իշխանափոխությամբ կարող է միայն արտահայտվել: Այլ տարբերակ պարզապես չկա: Իսկ այդ հնարավորության պատուհանը, որը, ինչպես նշեցինք, դեռ բաց է, ամեն պահի կարող է փակվել: Այս վիճակը երկար չի պահպանվի: Ավելին՝ դրա ձգձգումը միայն վնասներ է բերում Հայաստանին և Արցախին: Ուստի մեր էլիտան պետք է շատ արագ կողմնորոշվի և ժողովրդին ոտքի հանելու նոր հնարավորություններ գտնի: Հակառակ պարագայում ամեն ինչ կարելի է կորսված համարել:

Հղումներ

1. «Լավրով. Պրահայի փաստաթուղթը փաստացի լուծում է Ղարաբաղի կարգավիճակի հարցը», 01.12.2022, https://mediamax.am/am/news/karabakh/49553/ (մուտք՝ 05.12.2022):
2. «Վարչապետ Փաշինյանի, նախագահ Ալիևի, նախագահ Մակրոնի և նախագահ Միշելի՝ 2022 թվականի հոկտեմբերի 6-ին կայացած հանդիպման հայտարարությունը», 07.10.2022, https://www.primeminister.am/hy/press-release/item/2022/10/07/Nikol-Pashinyan-Announcement/ (մուտք՝ 05.12.2022):
3. «Այմա Աթայի հռչակագիր», https://www.irtek.am/views/act.aspx?aid=43899 (մուտք՝ 05.12.2022):
4. «Լավրով. Պրահայի փաստաթուղթը փաստացի լուծում է Ղարաբաղի կարգավիճակի հարցը»:
5. «Հայաստանը խաղաղության պայմանագրի որ տարբերակն էլ ընտրի, եթե այն կհանգեցնի խաղաղության, մենք միայն կողմ ենք. Պուտին», 27.10.2022, https://www.armtimes.com/hy/article/246890 (մուտք՝ 05.12.2022):
6. Նույն տեղում:
7. «Իրավիճակն Արցախում: Ինչ է տեղի ունեցել և ինչ է կատարվում հիմա», 03.12.2022, https://times.am/704094/ (մուտք՝ 05.12.2022):
8. «ԲԴԱ-ն հայտարարության մեջ ջնջել է Արցախի Հանրապետություն բառակապակցությունը, փոխարենը ավելացրել՝ «Ղարաբաղի հայություն». Իշխան Սաղաթելյան», 02.12.2022, https://www.yerkir.am/public/hy/article/2022/12/02/3840 (մուտք՝ 05.12.2022):

Խաղաղությո՞ւն, թե՞ խայտառակություն: Արտաքին քաղաքականությո՞ւն, թե՞ խեղկատակություն

Վարդան Հակոբյան
Դիվանագետ, վերլուծաբան

ՀՀ արտաքին քաղաքականության կամ այն իրականացնողների վարքագծի մասին խոսելիս հնարավոր չէ խուսափել վերնագրում օգտագործված «խայտառակություն», «խեղկատակություն» և նման բառերից: Դրանք դժվար է բնութագրել քաղաքագիտական, դիվանագիտական հասկացություններով, ավելի տեղին են հոգեբուժական և իրավական սահմանումները:

Գալով իշխանության՝ Ն. Փաշինյանը զրոյացրեց ՀՀ արտաքին քաղաքական բոլոր ձեռքբերումները, նվազագույն մակարդակի իջեցրեց մեր հարաբերությունները դաշնակիցների, միջազգային կազմակերպությունների և գործընկեր պետությունների հետ, երկիրը դուրս դրեց տարածաշրջանային քաղաքական գործընթացներից: Որպես հետևանք՝ ապահովեց քաղաքական, ռազմական, դիվանագիտական բոլոր պայմանները՝ Արցախը Ադրբեջանին վերադարձնելու համար: Իսկ հասարակությանը շեղելու նպատակով քողարկում էր իր այդ քայլերը փողոցային և հեռուստատեսային շոուներով, խրախճանքներով, որքան աղմկահարույց, այնքան էլ անհիմն դատական հետապնդումներով, ճոռոմ խոստումներով: Նա մեկընդմեջ անում էր ազգային և պետական շահերը հարվածի տակ դնող հայտարարություններ, որոնք էլ ներկայացնում էր որպես ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններ: Այսպես, աղաղակելով, թե «Արցախը Հայաստան է և վերջ», վերվերի պարելով Շուշիում, զենքի փոխարեն ելակ մատակարարելով զինվորին և բազմաթիվ այլ «մազալու» բաներ անելով, նա արցախյան հակամարտությունը ներկայացնում էր որպես ներադրբեջանական միջէթնիկական հակամարտություն, որի կարգավորումը պետք է ընդունելի լինի երեք ժողովուրդների համար, իսկ արցախյան ազգային-ազատագրական պայքարը և հաղթանակը՝ որպես ՀՀ-ի կողմից ադրբեջանական տարածքների գրավում: Տեղի տալով թուրք-ադրբեջանական հորդորներին՝ նա աստիճանաբար արժեզրկեց Մինսկի խմբի միջնորդական ջանքերը և խաղից դուրս դրեց բանակցային այդ ձևաչափը, առաջին տեղ մղեց տարածքային ամբողջականության սկզբունքը և առ ոչինչ դարձրեց Արցախի ինքնորոշման հարցը: Անտեսելով, արհամարհելով ՌԴ առաջարկները, դիվանագիտական հորդորներն ու քաղաքական ջանքերը՝ բանակցությունների միջոցով կանխելու Ադրբեջանի հարձակումը, ենթարկվելով արևմտյան հորդորներին՝ փորձեց ամեն կերպ խաղից դուրս թողնել Հայաստանի հիմնական դաշնակցին: Այդ մասին է վկայում նաև նոյեմբերի կեսերին նրա կողմից ռուսական խաղաղապահների՝ Արցախում մնալու ժամկետների հարցի բարձրացումը, երբ նա

հայտնեց, որ Սոչիի եռակողմ հանդիպման ժամանակ առաջարկել է Արցախում խաղաղապահների գործունեության ժամկետը երկարաձգել 5-ից մինչև 25 տարի: Այս առաջարկը տարօրինակ է և ոչ տեղին, քանի որ ժամկետի ավարտին դեռ երեք տարի կա: Սակայն Փաշինյանը շտապում է նախազգուշացնելու, որ եթե Ռուսաստանը որոշի դուրս բերել խաղաղապահներին, ապա դրանով նա կխոստովանի, որ ի վիճակի չէ կատարելու իր առաքելությունը, և պարտավորված կլինի տեղը զիջել միջազգային խաղաղապահ զորախմբերին: Ո՛չ Ռուսաստանն է հայտարարել, որ դուրս է բերում խաղաղապահներին Արցախից, ո՛չ էլ ազերիներն են հանդես եկել նման պահանջով: Իրականում այս տարօրինակ առաջարկներով Փաշինյանը փորձում է հիմք նախապատրաստել Արցախում ռուսական զորախմբին միջազգային խաղաղապահներով փոխարինելու համար: Բնականաբար, ռուսների կողմից նման նայիվ խորամանկությունները գնահատվում են որպես քաղաքական շանտաժ: Նրանք շատ լավ տեսնում են, թե ով է կանգնած դրա ետևում: Փաշինյանի ջերմագին շփումները Պուտինի հետ չեն կարող թաքցնել նրա հետևողական փորձերը՝ դուրս թողնելու ռուսներին բանակցություններից և դրանք տեղափոխելու բրյուսելյան սեղանի շուրջ: Այդ մասին են վկայում նաև ԵՄ և ԵԱՀԿ դիտորդների այցերը հայ-ադրբեջանական սահման, հայաստանցի բարձրաստիճան պաշտոնյաների հաճախակի դարձած հանդիպումները ադրբեջանցիների հետ արևմտյան մայրաքաղաքներում:

Այսպիսի վարքագիծը պատահական չէ և հետապնդում է որոշակի նպատակներ՝ արմատապես փոխելու հայկական երկու պետությունների աշխարհաքաղաքական կողմնորոշումները, խճճելու դրանք լիբերալ գլոբալիստական ցանցի մեջ:

Այս իշխանությունները գոհ են իրենց արածից և

բարձր են գնահատում իրենց վարած արտաքին քաղաքականությունը: Այսպես՝ օրերս Ալեն Սիմոնյանը անկեղծորեն (իսկ լիբերալի դեպքում դա նույնն է, թե ցինիկորեն) լրագրողներին ասաց. «Մենք ստացել ենք հայ հասարակության համաձայնությունը, որպեսզի անցնենք խաղաղության դարաշրջանին: Հետևաբար մենք ամեն օր աշխատում ենք, որպեսզի օր առաջ խաղաղություն բերենք մեր ժողովրդին»: Իսկապես, իշխանության գալու առաջին օրերից նրանք հայտարարում էին, թե ժողովուրդներին պետք է պատրաստել խաղաղության, բայց տարան պատերազմի և խայտառակ պարտության:

Ճիշտը ստի, ցանկալին իրականի հետ խառնելով, մեղադրելով ընդդիմությանը, թե «երեսուն տարի ինչ են արել, մեզ բերել հասցրել են էս վիճակին», ԱԺ նախագահն ասում է, որ «պատերազմից երկու տարի անց մենք շատ հաջող բանակցում ենք, գրանցում ենք դիվանագիտական հաղթանակներ, ինչպես տեսնում եք, օրինակ, ԱՄՆ-ի, Ռուսաստանի նախագահի ակտիվ ներգրավվածությունը մեր խնդիրների կարգավորմանը»: Այսպիսի խեղկատակությունն արժանի չէ որևէ քննադատության: Սակայն մի դեպքում Ալենը չի ստում, երբ ասում է, որ իրենք ստացել են հասարակության համաձայնությունը: Այո՛, ստացել են, համենայնդեպս «երջանիկ քաղաքացիների» կողմից: Ինչ վերաբերում է «հաջող բանակցություններին» և «դիվանագիտական հաղթանակներին», ապա այդ ինքնագնահատականները իրենց հիմքում որևէ ձեռքբերում չունեն: Դրանք ընդամենը արտաքին քաղաքական և դիվանագիտական գործունեության նմանակում են: Օրեր առաջ ԱԳ փոխնախարար Պ. Հովհաննիսյանը, խոսելով բանակցությունների մասին, հայտնեց, որ չկան ֆրանսիական, ռուսական կամ ամերիկյան տարբերակներ, այլ սեղանին դրված են բացառապես Բաքվի և Երևանի տարբերակները: Հպարտ քաղաքացիների համար հպարտանալու ևս մեկ առիթ. նրանց ինքնիշխան ղեկավարները դեմ առ դեմ բանակցելու են ադրբեջանցիների հետ և սեփական առաջարկներով են հանդես գալու: Ի՞նչ ֆրանսիական, ի՞նչ ռուսական կամ ամերիկյան տարբերակ: Նույն փոխնախարարի խոսքերով՝ վարչապետն առաջարկել է խաղաղության պայմանագրի փոխարեն ստորագրել շրջանակային պայմանագիր, որը կպարունակի երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորման ընդհանուր սկզբունքներ: Այդ սկզբունքների թվում է 1991 թ. Ալմա Աթայում ընդունված հռչակագրին համապատասխան միմյանց տարածքային ամբողջականության ճանաչումը: Իսկ հետո նա թվարկում է բանակցությունների ընթացքի հետևյալ ուղղությունները՝ խաղաղության պայմանագրի նախապատրաստում, սահմանազատում և սահմանագծում, հաղորդակցության ուղիների ապաշրջափակում, Լեռնային Ղարաբաղում անվտանգության և մարդու իրավունքների ապահովում: Այս ընդհանուր ֆրազներից, որոնցում ոչ մի կերպ չեն արտացոլվում ՀՀ իրական շահերը, ի՞նչ պատկերացում կարելի է կազմել այս վարչախմբի վարած քաղաքականության և դիվանագիտության վերաբերյալ: Սրանց համար սահմանագծումը և սահմանազատումը ինքնանպատակ են դարձել: Կարևոր չէ, թե ինչպես կանցնի սահմանը, այդքան տարածքներ զիջել են և դեռ էլի կզիջեն, միայն թե ազերիները համաձայնեն ստորագրել խաղաղության պայմանագիրը: Իսկ ի՞նչ է նշանակում Լեռնային Ղարաբաղում անվտանգության և մարդու իրավունքների ապահովում, եթե այդ տարածքը ճանաչում ես ադրբեջանական, իսկ բնակիչներին՝ Ադրբեջանի քաղաքացիներ: Այս մոտեցումները, որոնց մասին խոսում է փոխնախարարը, թելադրված են հենց Ադրբեջանի կողմից և ոչնչով չեն արտահայտում Հայաստանի շահերը: Դրանք պարտված կողմին առնում են վերջնագրով սահմանված շրջանակի մեջ:

Վարչապետը ամիսներ առաջ խորհրդարանում հայտարարեց, որ եթե նույնիսկ իրեն մեղադրեն դավաճանության մեջ, միևնույն է, պատրաստ է ստորագրելու պայմանագիրը՝ հանուն համապարփակ խաղաղության: Մինչդեռ Ադրբեջանը լրջորեն չի էլ քննարկում այս մոտեցումները և ՀՀ իշխանություններին չի դիտում որպես բանակցություններում հարցեր լուծող կողմ: Ալիևը հազիվ է զսպում իր քմծիծաղը, երբ Բրյուսելում, Մոսկվայում կամ Պրահայում Ն. Փաշինյանը խանդավառված խոսում է համապարփակ խաղաղությունից, վազվզում է մի մայրաքաղաքից մյուսը, մի երկրի ղեկավարից մյուսի մոտ՝ ամեն մեկին համապատասխան խոստումներ տալով: Ալիևը նաև լավ գիտի, որ Հայաստանի հետ Ադրբեջանի սահմանը ինքը գծելու է ոչ թե Նիկոլի, այլ ռուսների, ամերիկացիների հետ և ստիպված է լինելու հաշվի առնել նաև իրանցիների կարծիքն այդ գործում: Այնպես որ երբ փոխնախարարը, իհարկե կատարելով իր ղեկավարի հրահանգը, ասում է, թե «բանակցությունների սեղանին դրված են բացառապես Բաքվի և Երևանի տարբերակները», դժվար թե որևէ քաղաքական գործիչ դրան լուրջ վերաբերվի: Մինչդեռ գնալով ավելի ու ավելի է աճում մեր տարածաշրջանում դերակատար պետությունների ակտիվությունը հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման հարցում: Մեկը մյուսի ետևից եռակողմ հանդիպումներ են անցկացվում Մոսկվայում, Բրյուսելում, Վաշինգտոնում: Նախաձեռնություններով և հայտարարություններով հաճախ հանդես են գալիս Թուրքիան և Իրանը: Եվ, իհարկե, բոլորն էլ հորդորում են երկու երկրներին հնարավորինս արագ հասնել կայուն խաղաղության: Անշուշտ, պետություններից յուրաքանչյուրը ակնկալում է, որ խաղաղության հաստատումը չի հակասի իր հետապնդած շահերին և ձգտում է առավելագույնս ներգրավվելու գործընթացում: Հիմնական խաղացողներին քաջ հայտնի է, որ հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորումը հնարավոր չէ առանց Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման: Եթե այն լուծված չէ, ապա վաղ թե ուշ խաղացողներից որևէ մեկը կփորձի օգտագործել այդ հանգամանքը հոգուտ իր քաղաքական շահերի: Դրանում մեծ փորձ ունի Ռուսաստանը, որը խորապես հասկանում է, որ, կորցնելով Ղարաբաղը

Հանդիպում Պրահայում

որպես աշխարհաքաղաքական գործոն, կկորցնի իր ազդեցությունը Հայաստանի և Ադրբեջանի վրա ու դուրս կմղվի Հարավային Կովկասից: Այդ պայմաններում ՌԴ միակ խաղաքարտը, ճիշտ կլինի ասել՝ հաղթաքարտը, մնում է Արցախը, իսկ ավելի կոնկրետ՝ դրա կարգավիճակի հարցը: Այս հանգամանքները փորձառու դիվանագետին հատուկ նրբանկատությամբ, բայց և հեգնանքով իր վերջին հարցազրույցում ներկայացրեց Ս. Լավրովը: Խոսելով 1991 թ. Ալմա Աթայի հռչակագրով ընդունված միութենական հանրապետությունների սահմանների անխախտելիության մասին՝ նա ասաց, որ «Այդ ժամանակ Լենինյան Ղարաբաղի Ինքնավար Մարզն Ադրբեջանի ԽՍՀ մաս էր կազմում», և այդպիսով հիշեցրեց Ալիևին ու Փաշինյանին, որ գոյություն ունի ԼՂ կարգավիճակի հարց: Հիշեցնենք, որ բոլորովին վերջերս հենց Ղրիմի, Դոնեցկի և Լուգանսկի կարգավիճակի ճանաչումը հիմք հանդիսացավ ռուսների համար հանրաքվեով վերադարձնելու դրանք:

Նույն հարցազրույցում անդրադառնալով Հայաստանի, Ադրբեջանի, Ֆրանսիայի և Եվրախորհրդի նախագահների՝ Պրահայում ընդունած հայտարարությանը՝ նա ասաց, որ «դա թեթևացնում է հետագա աշխատանքը, քանի որ լուծում է այն հարցը, թե ինչպես պետք է մոտենալ ԼՂ կարգավիճակի խնդրին: Եվ իզուր չէ, որ ՀՀ ղեկավարությունը վերջին շրջանում խոսում է ոչ այնքան ԼՂ կարգավիճակի, որքան այն մասին, որ պետք է ապահովել ԼՂ-ում հայ բնակչության իրավունքները: Բաքուն պատրաստ է դրան: Բաքուն պատրաստ է Ղարաբաղի հայերին տալու այն իրավունքները, որոնք ունեն Ադրբեջանի մյուս քաղաքացիները»: Այս մի քանի նախադասությամբ Ս. Լավրովը տալիս է ՀՀ իշխանությունների վարած արտաքին քաղաքականության ծաղրանկարը:

Ս. Լավրովի վերը բերված հեգնական դատողություններից կարելի է նաև ենթադրել, որ Ռուսաստանը Հարավային Կովկասում իր դիրքն ու հեղինակությունը պահպանելու համար որպես կարևոր գործոն կօգտագործի Արցախի կարգավիճակի հարցը: Դա գործոն է նաև Իրանի ձեռքում՝ թուրքական ծավալապաշտությանը դիմագրավելու համար: Սակայն այդ դեպքում անհրաժեշտ է, որ առնվազն Արցախը և ՀՀ ընդդիմադիր քաղաքական ուժերն ընդառաջ գնան դրան, օգտագործեն ընձեռված արտաքին քաղաքական հնարավորությունները՝ Արցախի կարգավիճակի հարցը միջազգային օրակարգ վերադարձնելու համար: Եթե այս իշխանությունները, հետևելով ազերիներին, որդեգրել են «Չկա Ղարաբաղ, չկա խնդիր» մոտեցումը և հրաժարվել են Արցախից, ապա ազգային ուժերը պետք է լարեն բոլոր ճիգերը՝ այն բանակցությունների սեղան վերադարձնելու և խաղաղության պայմանագրի կնքումը դրանով պայմանավորելու համար:

ՀՀ արտաքին քաղաքականությամբ 2000-ականների սկզբին որդեգրվել էր փոխլրացման սկզբունքը, այն է՝ որպես դիվանագիտական գործիք համադրել հարավկովկասյան տարածաշրջանում դերակատար պետությունների շահերը ի նպաստ սեփական խնդիրների լուծման: Այս իշխանությունները նույնպես օգտագործում են այդ սկզբունքը, սակայն հակառակ ուղղությամբ սպասարկում են այլ պետությունների շահերը ի հաշիվ Հայաստանի՝ վատնելով մեր պետության և ազգի կարողականությունն ու հարստությունը:

Հղում

1. Տես تاکید ایران بر ضرورت حل مسالمت‌آمیز مناقشه میان آذربایجان و ارمنستان, IRNA, 03.10.2022, https://www.irna.ir/news/84903413/ (մուտք՝ 15.10.2022):
2. Տես Zakir Həsənov İran ordusunun Baş Qərargah rəisi ilə telefonla danişib, Report, 03.10.2022, https://report.az/herbi-xeberler/azerbaycanin-mudafie-naziri-ile-iran-silahli-quvvelerinin-bas-qerargah-reisi-arasinda-telefon-danisigi-olub/ (մուտք՝ 15.10.2022):
3. Տես بخشی از نیازهای دفاعی جمهوری آذربایجان از ایران تامین می‌شود, Farsnews, 15.04.2014, https://www.farsnews.ir/amp/13930126000512 (մուտք՝ 15.10.2022):
4. Տես Իրանի պաշտպանության նախարարի ադրբեջանյան այցի առաջին օրվա ամփոփում, Razm.info, 20.04.2015, https://razm.info/63149 (մուտք՝ 15.10.2022):
5. Տես Яшар Айдемиров: Военная помощь наших иранских братьев незаменима для нас, Oxu.az, 03.05.2016, https://ru.oxu.az/politics/130043 (մուտք՝ 15.10.2022):
6. İlham Əliyev silah aldığımız ölkələrin adını açıqladı, Sabahinfo, 07.06.2016, https://www.sabahinfo.az/posts/detail/bilham-eliyev-silah-aldigimiz-olkelerin-adini-aci-qladib-10070 (մուտք՝ 15.10.2022).
7. Տե՛ս باکو 30 میلیون دلار از باب تسلیحات جنگ قراباغ به ایران بدهکار است, Azariha, 04.04.2017, http://azariha.org/1979/ (մուտք՝ 15.10.2022):
8. Տես Зачем иранский генерал приезжал в Азербайджан?, Vzglyad.az, 22.02.2018, https://vzglyad.az/news/103811/ (մուտք՝ 15.10.2022):
9. Տես RPT-INSIGHT-Azerbaijan eyes aiding Israel against Iran, Reuters, 01.10.2012, https://www.reuters.com/article/iran-israel-azerbaijan-idUSL6E8KU0YE20121001 (մուտք՝ 15.10.2022):
10. Տես Азербайджан не станет площадкой для нанесения ударов по Ирану, заверил министр обороны Азербайджана, https://russian.eurasianet.org/node/59226# (մուտք՝ 15.10.2022):
11. Տես Zakir Hasanov: Israel will not attack Iran through Azerbaijan, Turan, 15.04.2014, https://www.turan.az/ext/news/2014/4/free/politics_news/en/20962.htm (մուտք՝ 15.10.2022):
12. Տե՛ս «فردا؛ آغاز مرحله اصلی رزمایش اقتدار نیروی زمینی سپاه با شعار «ایران مقتدر», Tasnim, 16.10.2022, https://www.tasnimnews.com/fa/news/1401/07/24/2789089/ (մուտք՝ 15.10.2022):
13. Տե՛ս اهداف ضد ایرانی گائتز از سفر به باکو, Rahbordemoaser, 06.10.2022, https://rahbordemoaser.ir/fa/news/153157 (մուտք՝ 15.10.2022):
14. Տե՛ս Զևավորվել է Իրանի և Ադրբեջանի պաշտպանական համագործակցության հարցերով համատեղ հանձնաժողով, Razminfo, 24.10.2017, (մուտք՝ 15.10.2022):
15. Տե՛ս سفیر جمهوری آذربایجان به وزارت خارجه احضار شد, 21.10.2011, https://www.mehrnews.com/news/1438994/ (մուտք՝ 15.10.2022):

Իրանի և Ադրբեջանի Հանրապետության հարաբերություններում վերսկսված լարվածության շուրջ

Լիանա Պետրոսյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի դասախոս, պատմ. գիտ. թեկնածու

Իրանի Իսլամական Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև հեռավար կամ «բանավոր պատերազմը» նոր թափով է բռնկվում, ինչի վառ ապացույցը ադրբեջանական կիսապաշտոնական աղբյուրների կողմից Իրանի թյուրքախոսներին տրամադրվող աջակցությունն է, որի նպատակը Իրանից Ատրպատականի թյուրքախոսների անջատումն է: Մասնավորապես, Սամարղանդում Թուրքական պետությունների կազմակերպության նիստի ժամանակ Ի. Ալիևը հանդես է եկել բացահայտ հակաիրանական հայտարարություններով, որոնցում նաև նշել է, որ ժամանակն է զբաղվելու թյուրքական պետությունների տարածքից դուրս գտնվող թյուրքալեզուների իրավունքների և անվտանգության պաշտպանությամբ[1]: Ավելի ուշ «Նախիջևանի ժողովրդական շարժման» անունից նամակ է հրապարակվել, որով Իրանին կոչ էր արվում քայլեր ձեռնարկելու Նախիջևանն Իրանին կցելու համար[2]: Այս նամակի հրապարակումից հետո Ադրբեջանի Հանրապետության անվտանգային ծառայությունները Թեհրանի հասցեին մի շարք մեղադրանքներ են հընչեցրել, ինչն էլ ավելի է սրել երկու պետությունների հարաբերությունները:

Հատկանշական է, որ Բաքվի և Թեհրանի հարաբերությունները սրվել էին դեռևս 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո: Թեև Իրանը բազմիցս հայտնել է իր աջակցությունը 1990-ականներին երկու կողմերի միջև առաջին պատերազմում Ադրբեջանի կորցրած տարածքների վերադարձի հարցում, սակայն այժմ նա կարծես թե անհանգստացած է տարածաշրջանում Ադրբեջանի ծավալապաշտական նկրտումներով և արտաքին ուժերի՝ Թուրքիայի և Իսրայելի, ինչպես նաև Արևմուտքի ու ԱՄՆ-ի դիրքերի հնարավոր ամրապնդմամբ:

Թեհրանն անհանգստացած է հատկապես Իսրայելի հետ Ադրբեջանի ակտիվ կապերով: Իրանում այն կարծիքին են, որ Ադրբեջանի կառավարությունն իր տարածքները Իսրայելին որպես բազա է տրամադրել հակաիրանական գործողությունների համար: Իսրայելը, որն արդեն «անկայունության գոտի» է ստեղծել Իրանի շուրջ՝ իր կողմը գրավելով Քրդստանին, Արաբական Միացյալ Էմիրություններին և Բահրեյնին, ծրագրում է օգտագործել Ադրբեջանի տարածքը Իրանի հյուսիսային շրջաններն ապակայունացնելու համար, ուստի Իրանը հայտարարել է, որ իր համար անընդունելի է պետական սահմանների ցանկացած փոփոխություն:

Վերջին շրջանում իրանա-ադրբեջանական հարաբերությունների սրումը, ըստ երևույթին, կապված է Իրանի գերագույն առաջնորդ այաթոլլահ Ալի Խամենեիի հուլիսյան հայտարարության հետ, որում հոգևոր առաջնորդը մտահոգություն էր հայտնում «Զանգեզուրի միջանցք» կոչվող ճանապարհի կառուցման առիթով: Այս ճանապարհը պետք է անցնի Իրանի հետ Հայաստանի սահմանով, ինչը, անշուշտ, հակասում է Իրանի շահերին ու հետաքրքրություններին: Ներկայումս Ադրբեջանն ու Հայաստանը բանակցում են ճանապարհի կարգավիճակի և դրա երկայնքով երթևեկության վերահսկողության ոլորտում լիազորությունների բաշխման հարցի շուրջ, սակայն Ադրբեջանը հաճախ է խոսում թյուրքական աշխարհի հետ կապվելու՝ միջանցքի առավելությունների մասին, ինչն Իրանին անհանգստացնում է պանթուրքիզմի տարածման առումով: Բացի այդ՝ Ադրբեջանը պարբերաբար սպառնում է ուժով տիրել անհրաժեշտ տարածքին, եթե չկարողանա ստանալ Հայաստանի ցանկալի համաձայնությունը, իսկ հայ-ադրբեջանական հերթական պատերազմից, բնականաբար, անմասն չի մնա նաև Իրանը:

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ «Զանգեզուրի միջանցքի»՝ որպես աշխարհաքաղաքական սպառնալիքի առումով Իրանի անհանգստությունը պայմանավորված է մի քանի հանգամանքով.

- Իրանը կարող է կորցնել Հայաստանի հետ սահմանային և ուղիղ տրանսպորտային կապը և որոշ չափով՝ ազդեցությունը Կովկասում:
- Իրանը տնտեսական կորուստներ կունենա, երբ դադարի կապող օղակ լինել Ադրբեջանի և Նախիջևանի միջև, ինչը կնվազեցնի նաև Թեհրանի ազդեցությունը Բաքվի վրա:
- Իրանը կարող է կորցնել առավելությունները՝ պայմանավորված Ասիայի և Եվրոպայի միջև երթուղու գործոնով:
- Զանգեզուրի երթուղու հեռանկարային օգտագործումը թուրքմենական գազը Թուրքիա և Եվ-

ռոպա տեղափոխելու համար կարող է նվազեցնել իրանական գազի պահանջարկը:

Իրանի քաղաքական շրջանակները պարբերաբար հայտարարում են, որ Իրանը դեմ չէ բուն ճանապարհի գոյությանը, սակայն միաժամանակ Թեհրանը հայտարարում է, որ Հարավային Կովկասում սահմանների փոփոխությունն անընդունելի է, իսկ հայ-իրանական սահմանը «կարմիր գիծ» է: Թեհրանը Հայաստանի տարածքային ամբողջականությանն աջակցություն է հայտնում նաև այլ միջոցներով, որոնցից մեկը Հայաստանի Սյունիքի մարզի Կապան քաղաքում իրանական հյուպատոսության բացումն էր: Նույն օրը Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը լրագրողներին ասել է, որ Թուրքիան Շուշիում հյուպատոսություն է բացելու:

Պետք է նաև նշել, որ վերջերս իրանական մամուլում մեծացել է հակաադրբեջանական հրապարակումների թիվը: Մինչ Իրանի վերաբերյալ ադրբեջանական հրապարակումները որակվում են որպես անջատողական, ադրբեջանական լրատվամիջոցները վերակենդանացրել են «միասնական Ադրբեջանի» մասին խոսույթը և շրջանառության մեջ դրել կեղծ «Հարավային Ադրբեջան» տերմինը: Այսպես՝ «Caliber.az»-ում, որը կապված է Ադրբեջանի նախագահի վարչակազմի հետ, «Ժամանակը եկել է. Հարավային Ադրբեջանը պետք է անջատվի Իրանից» վերնագրով հոդված է տպագրվել (Ադրբեջանի և Թուրքիայի կողմից հովանավորվող անջատողական խմբավորումները «Հարավային Ադրբեջան» են անվանում Իրանի հյուսիսային նահանգները), իսկ հեռուստահաղորդավարուհին ողջունել է «Հարավային Ադրբեջանին»՝ հանելով հիջաբը Թավրիզի եղանակի տեսությունը ներկայացնելիս[3]: Ավելի ուշ արդեն ադրբեջանական հատուկ ծառայությունների հետ առնչվող «Haqqin.az» կայքը հոդված է հրապարակել՝ «Հարավային Ադրբեջանը ձգտում է անկախության» վերնագրով: Դրանում նշվում էր, որ Բաքուն պատրաստ է աջակցելու այդ գործընթացին: «Ադրբեջանական պետությունն ունի բավականաչափ մոբիլիզացիոն ուժ՝ պաշտպանելու իր հայրենակիցների իրավունքները»[4],- գրում է հոդվածի անանուն հեղինակը:

Իրանական «Sahar TV»-ն, որը հեռարձակվում է ադրբեջաներեն, պատասխանել է հաղորդումներով, որոնցում պնդում են, որ Ադրբեջանը պատմականորեն Իրանի մաս է, և Նախիջևանի բնակիչները ցանկանում են միանալ Իրանին[5]: Նոյեմբերի 18-ին Ադրբեջանն ավելի է զայրացրել Իրանին Թել Ավիվում դեսպանատուն բացելու որոշմամբ՝ ընդունված Իսրայելի հետ աճող պաշտպանական համագործակցության առիթով: Բաքուն դժվար թե կարողանար այսքան անտեսել Թեհրանի կարմիր գծերը՝ չիմանալով, որ թիկունքում լուրջ աջակցություն ունի:

Ինչ վերաբերում է ադրբեջանական սոցիալական ցանցերին, ապա դրանցում էլ հակաիրանական հռետորաբանության բուռն ալիք է նկատվում: Մասնավորապես նշվում է, որ Իրանը կրկին Ադրբեջանը փոխանակեց Հայաստանի հետ և դրանով ցույց տվեց, որ ընտրել է այն քաղաքական վեկտորը, որով առաջնորդվում է Երևանը: Քաղաքական բոմոնդի գնահատականը, իհարկե, ավելի տարբերակված է, սակայն հակաիրանական հայտարարությունների ընդհանուր միտումը պահպանվում է: ԻԻՀ խորհրդարանում մի շարք պատգամավորներ էլ իրենց հերթին սպառնալից հայտարարություններ են հնչեցնում Ադրբեջանի Հանրապետության հասցեին:

Հակաիրանական հայտարարությունների առնչությամբ Թեհրանում Ադրբեջանի Հանրապետության դեսպան Ա. Ալիզադեն կանչվել է ԱԳՆ՝ ԱՀ որոշ պաշտոնյաների և ՋԼՄ-ների հակաիրանական հայտարարությունների վերաբերյալ բացատրություն տալու համար[6]: Սրան հաջորդել է Իրանի պաշտոնական հայտարարությունը. ԻԻՀ ԱԳՆ խոսնակ Ն. Քանանին պաշտոնական մամուլի ասուլիսի ժամանակ ադրբեջանական պաշտոնյաների հայտարարությունների վերաբերյալ նշել է, որ ԻԻՀ-ում ԱՀ դեսպան Ա. Ալիզադեն կանչվել է ԱԳՆ, որտեղ նրան է հանձնվել ԻԻՀ խիստ բողոքի նոտան այդ երկրի ՋԼՄ-ներում տեղ գտած հրապարակումների վերաբերյալ: Բացի այդ՝ ԱԳՆ խոսնակը հավելել է, որ «Չհաշվարկված և սխալ հայտարարությունների կապակցությամբ ԻԻՀ լռությունը և փոխադարձ գործողությունների բացակայությունը պայմանավորված են նրանով, որ պաշտոնական Թեհրանը չի փորձում իր խնդիրները զգացական ոլորտում լուծել»[7]:

Պետք է նկատի ունենալ, որ Իրանի դեմ Բաքվի հարձակումները սկսվեցին երկրի ներսում բողոքի ցույցերի ժամանակ, երբ թվում էր, թե Իրանը խոցելի է դարձել: Հենց այս շրջանում է, որ Ադրբեջանը և Թուրքիան անջատողական տրամադրություններ են սերմանում թյուրքախոսների շրջանում՝ հույսը դնելով արևմտյան մամուլում շրջանառվող այն թեզի վրա, ըստ որի՝ Իրանում զանգվածային ցույցերի շարունակումը կարող է հանգեցնել իշխանափոխության կամ համակարգային փոփոխությունների: Փաստացի երկու երկրների թշնամական երկխոսությունն ուղեկցվում է նաև ռազմական սադրանքներով: Հոկտեմբերի վերջին Իրանի զինված ուժերը զորավարժություններ

Սամարղանդում թուրքական պետությունների կազմակերպության նիստի ժամանակ

են անցկացրել Ադրբեջանի հետ սահմանին, որոնց ընթացքում վարժանքներ են կատարել Արաքս գետի վրայով (Ադրբեջանի և Իրանի սահմանի հիմնական հատվածն անցնում է Արաքս գետով)[8]: Դրան հետևել են Ադրբեջանի զինված ուժերի հատուկ նշանակության ստորաբաժանումների զորավարժությունները երկրի հարավում՝ Իրանի սահմանի մերձակայքում[9]:

Ադրբեջանի հետ սահմանին իրանական զորավարժություններին արձագանքել է նաև Ի. Ալիևը՝ Շուշիում կայացած հանդիպման ժամանակ հայտարարելով, որ Ադրբեջանի հետ սահմանային հատվածում զորավարժություններ իրականացնող ուժերը պետք է հասկանան, որ Բաքվին վախեցնել չի հաջողվի[10]: Նա նաև մի շարք մեղադրանքներ է հնչեցրել Իրանի հասցեին:

Կողմերի փոխադարձ մեղադրանքներն ու սպառնալիքները այն աստիճանի են հասել, որ վերջերս Իրանը Ադրբեջանին մեղադրեց երկրում ահաբեկչական գործողություններ իրականացնելու մեջ: Այսպես՝ ԻԻՀ տեղեկատվության նախարարությունը Շիրազում տեղի ունեցած ահաբեկչության կազմակերպիչների վերաբերյալ պաշտոնական զեկույց է հրապարակել, որի համաձայն՝ ահաբեկչության հիմնական կազմակերպիչը եղել է Ադրբեջանի Հանրապետության քաղաքացի: Վերջինս ԻԻՀ է մուտք գործել Բաքվի Հեյդար Ալիևի անվան օդանավակայանից և Իրանի ներսից համակարգել ահաբեկչական գործողությունը[11]: Ադրբեջանի Հանրապետության ՊԱԾ-ն իր հերթին հայտարարել է Իրանի հետ կապված լրտեսական ցանցի բացահայտման և դրա անդամների ձերբակալության մասին: Հայտարարության մեջ նշվում էր, որ 5 անդամներից բաղկացած այդ ցանցը փորձել է Կասպից ծովում տեղակայված ԱՀ ռազմածովային ուժերի, այդ պետության նավթատար ուղիների ու նավթային ենթակառուցվածքների, ռազմական այլ օբյեկտների և «ազատագրված» տարածքների վերաբերյալ տեղեկատվություն հայթայթել[12]:

Ինչ վերաբերում է իրավիճակի հետագա զարգացմանը, ապա կարելի է կանխատեսել Հայաստանի և Իրանի փոխգործակցության էլ ավելի ամրապնդում, ինչին, ամենայն հավանականությամբ, լրջորեն չի խոչընդոտի Արևմուտքը, որն ավանդաբար թույլատրելի և ընդունելի էր համարում Հայաստանի ակտիվ կապերն Իրանի հետ: Թվում է, թե նույնիսկ Իրանի և Ադրբեջանի միջև հարաբերությունների հետագա սրման դեպքում բանը չի հասնի բացահայտ զինված հակամարտության: Նախ՝ դրա հասցրած վնասն ակնհայտորեն կգերազանցի այն օգուտները, որոնք կարող է ստանալ Իրանը, երկրորդ՝ Իրանը զբաղված է բողոքի մեծ ցույցերով, ուստի նրա առաջնորդների ուշադրությունը մոտ ապագայում կուղղվի հիմնականում ներքաղաքական խնդիրների կարգավորման վրա, և վերջապես՝ Ռուսաստանը, որին հաջողվել է լավ հարաբերություններ հաստատել ու պահպանել այս բոլոր երկրների հետ, կարող է կայունացնող գործոն դառնալ Իրանի, Հայաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի միջև: Նշված երկրներին ձեռնտու է Ռուսաստանի հետ առևտրատնտեսական հարաբերությունների պահպանումն ու զարգացումը, ինչն անհնար կլինի նոր լայնածավալ և երկարատև զինված հակամարտության պայմաններում, ինչն էլ իր հերթին չի ծառայի կողմերի շահերին: ■

Հղումներ

1. Տես «Выступление президента Ильхама Алиева на IX саммите Организации турецких государств в Самарканде», https://www.youtube.com/watch?v=cGewWPLT_3E (մուտք՝ 01.12.2022):
2. Տես «Азербайджан и Нахичевань должны вернуться в состав Ирана», https://tolishmedia.com/2022/11/35447 (մուտք՝ 01.12.2022):
3. Տես https://caliber.az/post/103471/ (մուտք՝ 01.12.2022):
4. «Южный Азербайджан стремится к независимости!», https://haqqin.az/news/258047 (մուտք՝ 01.12.2022).
5. Տես https://azeri.sahartv.ir/news/iran (մուտք՝ 01.12.2022):
6. Տես «Посол Азербайджана вызван в МИД Ирана», https://ru.irna.ir/news/84938576/%D0%9F%D0%BE%D1%81%D0%BE%D0%BB-%D0%90%D0%B7%D0%B5%D1%80%D0%B1%D0%B0%D0%B9%D0%B4%D0%B6%D0%B0%D0%BD%D0%B0-%D0%B2%D1%8B%D0%B7%D0%B2%D0%B0%D0%BD-%D0%B2-%D0%9C%D0%98%D0%94-%D0%98%D1%80%D0%B0%D0%BD%D0%B0 (մուտք՝ 01.12.2022):
7. «Тегеран предупредил Баку: «Никто не должен интерпретировать терпение Ирана как слабость»», https://verelq.am/ru/node/117946 (մուտք՝ 01.12.2022).
8. Տես «Иран на границе с Азербайджаном проведет крупномасштабные военные учения», https://armenpress.am/rus/news/1094809.html (մուտք՝ 01.12.2022):
9. Տես «Азербайджан проводит учения на границе с Ираном», https://www.7or.am/ru/news/view/245579/ (մուտք՝ 01.12.2022):
10. Տես «Алиев: Баку провел учения на границе с Ираном для демонстрации того, что не боится Тегерана», https://armeniatoday.news/region-ru/554779/ (մուտք՝ 01.12.2022):
11. Տես https://tn.ai/2800343 (մուտք՝ 01.12.2022):
12. Տես «В Азербайджане сообщили о разоблачении иранской шпионской сети», https://regnum.ru/news/polit/3746158.html (մուտք՝ 01.12.2022):

«Սյունիքի միջանցքը», «Գոբլի պլանը» և թուրք-ադրբեջանական տանդեմի շահերը

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն

2020 թ. արցախյան պատերազմից հետո թուրք-ադրբեջանական խոսույթում լայն տարածում գտավ, այսպես կոչված, «Սյունիքի միջանցքի» գաղափարը, որը ենթադրում է Ադրբեջանի հարավարևմտյան շրջանների կապը Նախիջևանի հետ: Թե՛ Ադրբեջանի և թե՛ Թուրքիայի նախագահները հայտարարել են, որ այդ գաղափարը պետք է կյանքի կոչվի հնարավորինս արագ: Այժմ թուրք-ադրբեջանական տանդեմը փորձում է ստանալ «Սյունիքի միջանցքը» ուժի կիրառմամբ կամ դրա սպառնալիքով, ինչի վառ վկայությունն են վերջին շրջանում Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի կողմից իրականացվող պարբերական ագրեսիան և ներխուժումը Հայաստանի ինքնիշխան տարածք:

«Գոբլի պլանի» նախապատմությունը

Սյունիքի կամ Զանգեզուրի միջանցքի ստեղծման գաղափարը նոր չէ: Այն շրջանառության մեջ է դրվել դեռ 1990-ականների սկզբներին, սակայն պատմական և աշխարհաքաղաքական այլ իրողությունների պայմաններում: Պատմությանն այն հայտնի է «Գոբլի պլան» անունով: Այս պլանն առաջ էր քաշվել դիվանագետ Փոլ Գոբլի կողմից 1992 թ. և ենթադրում էր Հայաստանի և Ադրբեջանի միջև տարածքների փոխանակում:

Փոլ Գոբլը ԱՄՆ պետդեպարտամենտի ազգերի գծով փորձագետ էր մինչև 1991 թ. վերջը, այնուհետև աշխատանքի էր անցել «Քարնեգի» հիմնադրամում որպես փորձագետ: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ վերջին շրջանում Փոլ Գոբլը դասավանդել է Ադրբեջանի դիվանագիտական ակադեմիայում[1], ինչը կասկածի տակ է դնում նրա՝ որպես փորձագետի անկողմնակալ վերաբերմունքը ղարաբաղյան հակամարտության հարցում, մանավանդ որ նա ադրբեջանցի դիվանագետներին դասավանդել է «Ղարաբաղյան ճգնաժամ» դասընթացը:

«Գոբլի պլանը» նա մշակել էր 1992 թ., երբ նոր էր հեռացել Պետդեպարտամենտից և աշխատանքի անցել «Քարնեգի» հիմնադրամում: Այդ ժամանակ ԱՄՆ նախկին պետքարտուղար Սայրուս Վենսի օգնականը դիմել էր Գոբլին՝ խնդրելով պատրաստել ամփոփագիր իր՝ Հարավային Կովկաս նախատեսված այցին ընդառաջ: Գոբլի խոսքերով՝ ամփոփագիրը կազմել էր 5-8 էջ՝ ներառելով Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը՝ սկսած ստալինյան սահմանագծումներից: Ամփոփագրում ներկայացված էր, թե «ինչպես է Ստալինը ինստիտուցիոնալիզացրել Հայաստանի և Ադրբեջանի միջև լարվածությունը՝ բաժանելով Ադրբեջանի ոչ սահմանակից հատվածը հայկական տարածքի միջոցով Զանգեզուրում և հայկական տարածքը, որը, այնուհանդերձ, Բաքվի վերահսկողության տակ էր Ղարաբաղում»[2]: Ըստ Գոբլի՝ սա հետապնդում էր մեկ նպատակ՝ օգտագործել երկու երկրների միջև լարվածությունը ի շահ Մոսկվայի:

Գոբլը այն կարծիքին էր, որ պետք է առաջարկել խնդրի երկարաժամկետ լուծում, քանի որ ցանկացած կարճաժամկետ լուծում չի հանգեցնի հակամարտության վերջնական կարգավորման և աղետալի հետևանքներ կունենա: Իր առաջարկության մեջ, տարածքների ժողովրդագրությունից ելնելով, Գոբլը նշում էր, որ Լեռնային Ղարաբաղում բնակվող հայերի տեղահանումը կանխելու համար Արցախը պետք է դառնա «Հայաստանի մաս կամ ինչ-որ ձևով Հայաստանի շարունակություն»: Իսկ դրա համար անհրաժեշտ էր տարբերակներ գտնել Ադրբեջանին տալու այն, ինչ Բաքվին էր պետք, քանզի «ոչ մի կառավարություն չի կարող տալ իր տարածքից մեծ հատվածներ և պահպանել իշխանությունը»[3]:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման Գոբլի առաջարկը հրապարակվեց 1992 թ. ամռանը: Ըստ Գոբլի՝ կողմերը պետք է սկսեին դիտարկել տարածքների փոխանակման հնարավորությունը, ներառյալ հետևյալ զիջումները.

«ԼՂԻՄ-ի մի մասը պետք է հանձնվեր Հայաստանին՝ բացառությամբ ադրբեջանաբնակ տարածքների և այն տարածքի, որտեղ դեպի Բաքու հոսող գետի ակունքներն են, որոնք պետք է մնային Ադրբեջանի վերահսկողության տակ:

Ադրբեջանի և Նախիջևանի միջև ցամաքային կամուրջը, որը գտնվում էր Հայաստանի տարածքում,

Փոլ Գոբլ

պետք է հանձնվեր Ադրբեջանի վերահսկողությանը»[4]:

Այսպիսով՝ «Գոբլի պլանը» ենթադրում էր Արցախի միացում Հայաստանին և, այսպես կոչված, «Սյունիքի միջանցքի» տրամադրում Ադրբեջանին, որով վերջինս կկապվեր Նախիջևանի և Թուրքիայի հետ:

Հոդվածում առանձնակի շեշտադրված էր այն գաղափարը, որ հակամարտության բոլոր շահագրգիռ կողմերը պետք է գիտակցեն, որ Հայաստանն ու Ադրբեջանը չեն կարող ինքնուրույն կարգավորել իրավիճակը: Իսկ Միացյալ Նահանգների՝ հակամարտության կարգավորման գործընթացում ներգրավման հիմքում պետք է լիներ այն իրողության գիտակցումը, որ ԱՄՆ-ն չի կարող պարտադրել կողմերին որևէ լուծում չպետք է առաջնորդվի այն թյուր ենթադրությամբ, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կայուն լուծման հնարավոր չէ հասնել[5]:

Թուրքիայի նախագահի առաջարկը և թուրքական շահերը

Ղարաբաղյան հակամարտության շահագրգիռ կողմերից մեկն էր և այժմ էլ շարունակում է մնալ Թուրքիան: Նա, ինչպես ներկայումս է պնդում, որ, այսպես կոչված, «Սյունիքի միջանցքի» նախագիծը անհապաղ պետք է կյանքի կոչվի, նույն կերպ էլ 1990-ական թվականներին առաջ էր մղում տարածքների փոխանակման գաղափարը, ըստ որի՝ ի վերջո այդ միջանցքը պետք է հանձնվեր երկու թուրքական պետությունների վերահսկողությանը:

Տարածքների փոխանակման գաղափարը Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալը քննարկման առարկա էր դարձրել դեռևս 1992 թ. ապրիլի 28-ին՝ Սպիտակ տանը ԱՄՆ նախագահ Ջորջ Հ. Ու. Բուշի հետ հանդիպման ժամանակ: Նա նախագահ Բուշին առաջարկում էր փոխանակել Լեռնային Ղարաբաղը «Հայաստանի այն հատվածի հետ, որը բաժանում է Ադրբեջանի երկու մասերը», քանի որ, ըստ Օզալի, Լեռնային Ղարաբաղի բնակչության 80 %-ը հայեր էին, և 20 %-ը՝ ադրբեջանցի, իսկ Ադրբեջանին (և Թուրքիային) անհրաժեշտ էր ուղիղ կապ Նախիջևանի հետ: Ի պատասխան պետքարտուղար Բեյքերի հարցին, թե այդ պարագայում ինչ կլինի այդ տարածքում բնակվող հայերի հետ, Օզալը նշել էր, որ ընդհանուր առմամբ առավելագույնը 50.000 մարդ ստիպված կլինի տեղափոխվել: «Հակառակ պարագայում այս պատերազմը հավերժ կշարունակվի: Թուրքիան լավ հարաբերությունների կարիք ունի Հայաստանի հետ, և Հայաստանն ունի Թուրքիայի հետ լավ հարաբերությունների կարիքը: Այդպես վարվելու մեկ այլ պատճառ էլ կա. Կենտրոնական Ասիայի հանրապետությունները Եվրոպայի հետ կապի կարիք ունեն: Նոր ռուսները ցանկանում են լինել ցարական շրջանի ռուսների պես, որ բոլոր ճանապարհները տանեն Մոսկվա: Ռուսաստանը կարող է սպառնալիք դառնալ միջինասիական նորանկախ երկրների համար: Ռուսաստանը կարող է ցանկանալ դրանք վերադարձնել իր կազմ: Հույս ունեմ՝ ամեն ինչ Ռուսաստանի ձեռքում չեք թողնի»[6],- պնդում էր Օզալը:

Ըստ էության, Թուրգութ Օզալը հավակնոտ ծրագիր ուներ, որով պետք է միջինասիական էներգետիկ ենթակառուցվածքները կապվեին Եվրոպայի հետ Ադրբեջանի և Թուրքիայի միջոցով՝ շրջանցելով Ռուսաստանը: Իրենց հերթին միջինասիական պետություններն ավելի կազատվեին Ռուսաստանի ազդեցությունից: Ըստ Օզալի՝ այս ծրագրի իրականացման համար հենց Ադրբեջանը առանցքային դեր ուներ, և միջանցքի տրամադրումը շահավետ կլիներ նաև Հայաստանի համար[7]: Ակնհայտ էր, որ Թուրքիան ավելի մեծ հետաքրքրություն ուներ և ունի այս առումով, քան Ադրբեջանը, քանի որ այդ միջանցքով Թուրքիան կապվելու է թյուրքական աշխարհի հետ և իրագործելու է իր պանթյուրքիստական ծրագիրը, Ռուսաստանի փոխարեն նրանից է կախված լինելու Եվրոպայի էներգետիկ անվտանգությունը, ինչպես նաև նվազեցնելու է ռուսական ազդեցությունը Հարավային Կովկասում:

Ներկայումս այս նույն գաղափարը, իհարկե որոշ տարբերություններով, առաջ է մղում Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, որի իրականացումը նորից կապվում է «Սյունիքի միջանցքի» հետ: Այս միջանցքի տրամադրումը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման մի նոր նախապայման դարձավ 2020 թ. արցախյան երկրորդ պատերազմից հետո՝ ավելանալով Թուրքիայի նախկինում առաջ քաշած նախապայմաններին: Մասնավորապես, Թուրքիայի խորհրդարանի 2020 թ. նոյեմբերի 17-ի հատուկ նիստի ընթացքում հստակ արձանագրվեց, որ Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման նոր նախապայման կա, այն է՝ այսպես կոչված «Սյունիքի միջանցքի» տրամադրումը: Այդ նախապայմանը

հետագայում բարձրաձայնվեց նաև Թուրքիայի նախագահի մակարդակով: Թուրքիայի նման շահագրգռվածության պատճառն այն է, որ միջանցքը հնարավորություն կտա Անկարային առավել ինքնուրույն քաղաքականություն վարելու ամբողջ Եվրասիայում: Մասնավորապես, եթե Սյունիքով տրվում է միջանցք, այն ոչ միայն ավտոճանապարհ է, այլև ենթադրում է այլ ենթակառուցվածքների ստեղծում, այդ թվում՝ երկաթուղի ունենալու հեռանկար: Դրա միջոցով Թուրքիան կվերածվի Եվրասիայի գլխավոր էներգետիկ հաբի, այլ կերպ ասած՝ Ասիայից դեպի Արևմուտք ձգվող խոշոր էներգետիկ ենթակառուցվածքները, որոնք շրջանցում են Ռուսաստանը, կանցնեն Թուրքիայի տարածքով[8]:

Ներկայումս Թուրքիան փորձում է միջանցքի հարցը բարձրաձայնել Ադրբեջանի միջոցով՝ առանձնապես ցույց չտալով իր սեփական շահագրգռվածությունը: Ադրբեջանի «հաղթանակի օրվա» կապակցությամբ Շուշիում տեղի ունեցած միջոցառման ժամանակ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը նշել է. «Հայաստանը պարտավորություն է ստանձնել, որպեսզի ճանապարհային կապ ապահովի Ադրբեջանի արևմտյան շրջանների և Նախիջևանի Ինքնավար Հանրապետության միջև: Անցել է երկու տարի, չկա տեխնիկա-տնտեսական հիմնավորում, գործողություն, երկաթգիծ, ճանապարհ: Որքա՞ն պետք է սպասենք»[9]: Բայց թե ինչ պարտավորության մասին է խոսում Ալիևը, հայտնի չէ: Եթե խոսքը նոյեմբերի 9-ին ստորագրված եռակողմ հայտարարության մասին է, ապա այդ փաստաթղթում որևէ անդրադարձ չկա միջանցքի տրամադրմանը: Փոխարենը հայտարարության մեջ նշված է «տրանսպորտային հաղորդակցությունների» բացման մասին, ինչի հետևանքով Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը կկապվի Ադրբեջանի արևմտյան շրջանների հետ[10]: Այդուհանդերձ, «տրանսպորտային հաղորդակցություններ» եզրույթը չի ենթադրում Սյունիքի միջանցքի տրամադրում, ինչին դեմ են Հայաստանի ժողովուրդը և հայկական սփյուռքը: Չի բացառվում, որ Ադրբեջանի նախագահը բանավոր համաձայնություն է ստացել Հայաստանի իշխանություններից:

Պաշտոնապես հայկական կողմը հայտարարում է ճանապարհի տրամադրելու պատրաստակամության մասին, այլ ոչ թե միջանցքի[11], որով էլ պայմանավորված են Ադրբեջանի կողմից Հայաստանի ինքնիշխան տարածքի նկատմամբ պարբերաբար թույլ տրվող ոտնձգությունները: Պատահական չէ, որ ագրեսիայի հիմնական ուղղությունը և թիրախը Հայաստանի Սյունիքի մարզն է: Ըստ էության, թուրք-ադրբեջանական տանդեմը փորձում է հասնել միջանցքի ձեռքբերմանը ուժի կիրառման միջոցով, ինչի հետևանքով ներկայումս Ադրբեջանի կողմից օկուպացված են Հայաստանի որոշ տարածքներ: ■

Հղումներ

1. Տես Paul Goble, biography, https://jamestown.org/analyst/paul-goble/ (մուտք՝ 14.11.2022):
2. Հարցազրույց Փոլ Գոբլի հետ, 2020 թ., https://www.youtube.com/watch?v=qkU-DCA7BjE (մուտք՝ 14.11.2022):
3. Նույն տեղում:
4. Goble P., Coping with the Nagorno-Karabakh Crisis, “The Fletcher Forum”, Summer 1992, pp. 19-28.
5. Տես նույն տեղում:
6. Նախագահ Ջ. Բուշի և Թուրքիայի նախագահ Թ. Օզալի հանդիպման գաղտնագերծված սղագրությունը, https://bush-41library.tamu.edu/files/ memcons-telcons/1992-04-28--Ozal.pdf (մուտք՝ 15.11.2022):
7. Տես Սարգսյան Ս., Հայաստանն ու Բուշն անձամբ (1988-1992): Հայ-ամերիկյան շփումների գաղտնագերծված մանրամասներ, “Newmag”, 2022, էջ 253-257:
8. Տես Գեղամյան Վ., Հայ-ամերիկյան քաղաքագիտական առաջին ֆորում, 2021, http://usarmenia.am/ (մուտք՝ 15.11.2022):
9. «Զանգեզուրի միջանցքը Հայաստանի պարտավորությունն է»,- պնդում է Ալիևը, https://www.azatutyun.am/a/32120701.html (մուտք՝ 16.11.2022):
10. Տես Заявление Президента Азербайджанской Республики, Премьер-министра Республики Армения и Президента Российской Федерации, http://kremlin.ru/events/president/news/64384 (մուտք՝ 16.11.2022):
11. Տես Մենք Հայաստանի տարածքով որևէ մեկին միջանցք չենք տալու. Փաշինյան, https://armenpress.am/arm/news/1091991/ (մուտք՝ 16.11.2022):

Թուրքական «Ճանկ-սուր» օպերացիան և նոր քաղաքական զարգացումները

Նարե Գևորգյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի աշխատակից

Նոյեմբերի ավարտը նշանավորվեց Սիրիայում և Իրաքյան Քրդստանում Թուրքիայի ռազմական գործողության մեկնարկով, որը կրում է «Ճանկ-սուր» ծածկանունը: Նոյեմբերի 20-ի գիշերը Թուրքիայի ռազմաօդային ուժերի հարվածների թիրախը եղել են Սիրիայի հյուսիսում և Իրաքում գտնվող քրդական տարածքները: Թուրքիայի պաշտպանության նախարարության տվյալներով՝ ահաբեկիչները դրանք օգտագործում են որպես հենակետ՝ հանրապետության վրա հարձակվելու համար: «Anadolu» գործակալությունը հայտնում է, որ Թուրքիայի գլխավոր շտաբի պետ Հուլուսի Աքարն անձամբ է ղեկավարել «Ճանկ-սուր» գործողությունը: Երկրի ռազմական գերատեսչությունը հայտարարել է, որ գործողության նպատակներն են «թուրքական ժողովրդի և անվտանգության ուժերի վրա հարձակումների կանխումը, սահմանների անվտանգության ապահովումը և այդ համատեքստում ահաբեկչության վերացումը»: Հուլուսի Աքարը «A Haber» հեռուստաալիքով հեռարձակված ելույթի ժամանակ ասել է, որ հաջողությամբ ոչնչացվել են ահաբեկիչների թաքստոցները, բունկերները, թունելներն ու պահեստները: Ռազմական գերատեսչությունում հայտնել են, որ «Ճանկ-սուր» գործողությունն իրականացվել է «ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածով նախատեսված ինքնապաշտպանության իրավունքին համապատասխան»:

Սիրիայում քրդական աշխարհազորայինները հայտնել են, որ թուրքական ռազմաօդային ուժերը հարվածել են սահմանամերձ Քոբանի քաղաքին, որը «Սիրիայի դեմոկրատական ուժեր» (SDF) խմբավորման վերահսկողության տակ է, և սիրիա-թուրքական սահմանին գտնվող այլ քաղաքների: Իրաքից հեռարձակվող «Rudaw» հեռուստաալիքը, վկայակոչելով «Սիրիայի դեմոկրատական ուժերի» գլխավոր հրամանատարությանը, հաղորդել է, որ Սիրիայի հյուսիսային՝ Հալեպ, Ռաքքա և Հասաքա նահանգներում առնվազն 30 մարդ է զոհվել՝ 15 խաղաղ բնակիչ և սիրիական բանակի 15 զինծառայող[1]:

Իրանական «Isna» լրատվական գործակալության փոխանցմամբ՝ Թուրքիայի պաշտպանության նախարարությունը հայտարարություն է տարածել, որ Հյուսիսային Իրաքում «Claw Lock» գործողության մեկնարկից ի վեր վնասազերծվել է Քրդստանի աշխատավորական կուսակցության (PKK) անդամ 289 զինված անձ: Այդ գործողության ընթացքում ոչնչացվել է նաև PKK-ի 330 թաքստոց, որտեղ եղել է զենք և զինտեխնիկա[2]: Մինչդեռ հակամարտության երկու կողմերը չեն հաստատում միմյանց վիճակագրությունը, իսկ թուրքական կառավարության քննադատները կարծում են, որ հրապարակված տվյալները չեն

համապատասխանում իրականությանը[3]:

«Մենք մի գիշեր հանկարծակի կգանք». այս նախադասությունը մի քանի տարի ծառայել է որպես Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի նախընտրական լոզունգ, հատկապես այն բանից հետո, երբ նա երեք ռազմական արշավ սկսեց Սիրիայի հյուսիսում 2016 թ. հեղաշրջման անհաջող փորձից հետո:

Դեռևս հունիսին Էրդողանը հայտարարել էր, որ ծրագրվում է թուրքական նոր ռազմական գործողություն, որի թիրախը կլինեն սիրիա-թուրքական սահմանի այն շրջանները, որոնք վերահսկվում են քրդերի գլխավորած Սիրիայի դեմոկրատական կուսակցության (SDF) կողմից, որպիսիք են Քոբանը (Այն ալ-Արաբ), Թալ Ռիֆաթը և Մանբիջը: Այնուամենայնիվ, գործողությունը, չնայած մոտ էր թվում, չիրականացավ, քանի որ Ռուսաստանը, Իրանը և Արևմուտքը հետ մղեցին Թուրքիայի ծրագրերը:

Թուրքական վերջին գործողության, այսպես ասած, շարժառիթը նոյեմբերի 13-ին Ստամբուլի կենտրոնում գտնվող Իսթիքլալ հետիոտնային փողոցում տեղի ունեցած ահաբեկչությունն էր: Պայթյունի հետևանքով զոհվել է 6, վիրավորվել ավելի քան 80 մարդ, այդ թվում՝ 3 ռուս: Անկարան հարձակման համար մեղադրել է PKK-ին: Թուրքական իշխանությունները հայտարարել են, որ Ստամբուլի ամենաբանուկ և զբոսաշրջային շրջաններից մեկում՝ Իսթիքլալ պողոտայում, 6 խաղաղ բնակիչների մահվան պատճառ դարձած հարձակման հետաքննության նախնական արդյունքները մատնանշում են PKK-ին և «Ժողովրդի

պաշտպանության ուժերին» (YPG), որոնք կազմում են «Սիրիայի դեմոկրատական ուժեր» խմբավորումը: PKK-ն համարվում է «ահաբեկչական» խմբավորում Թուրքիայում, ԱՄՆ-ում և Եվրամիությունում, սակայն SDF-ին, ի թիվս այլոց, աջակցում է ԱՄՆ-ն ԻԼԻՊ-ի (ISIS) դեմ պայքարի շրջանակներում: Փողոցներում տեղադրված տեսախցիկները նկարահանել են, թե ինչպես է կինը թողնում պայթուցիկով պայուսակը և արագ հեռանում դեպքի վայրից: Ենթադրյալ ահաբեկիչը, որը սիրիացի (Դեյր-էզ-Զորից) արաբ է, խոստովանել է, որ նախքան մահաբեր հարձակումն իրականացնելը երկու ամիս մարզվել է YPG-ի կողմից սիրիական Մանբիջ քաղաքում, որը թուրքական նախատեսվող ռազմական գործողության մեկ այլ թիրախ է[4]:

Թուրքիայի ներքին գործերի նախարարությունը հայտարարել է, որ հարձակումն իրականացնելու հրամանը տրվել է Քոբանիից: PKK-ն հերքել է իր մասնակցությունը պայթյունին: Խմբավորման ներկայացուցիչներն ասել են, որ իրենք «ուղղակիորեն չեն հարվածի խաղաղ բնակչությանը»[5]: Իսկ PKK-ի կողմնակիցները կարծում են, որ Անկարան կօգտագործի ռմբակոծությունը՝ արդարացնելու իր երկար սպասված ռազմական արշավը Քոբանիում:

Միաժամանակ երկուշաբթի՝ կեսօրին, թուրքական Քարքամիշ քաղաքը հրթիռային հարձակման է ենթարկվել Սիրիայի քուրդ զինյալների կողմից: Թուրքիայի ներքին գործերի նախարար Սուլեյման Սոյլուն «CNN Turk»-ին ասել է, որ հարձակումն իրականացրել են PKK-ի ներկայացուցիչները, ինչի հետևանքով սպանվել է Թուրքիայի 3 քաղաքացի, այդ թվում՝ 1 երեխա[6]:

«Մենք շարունակում ենք օդային օպերացիան և մեզ համար ամենահարմար պահին ցամաքային ուժեր կկիրառենք ահաբեկիչների դեմ»,- խորհրդարանում ունեցած ելույթում ասել է Ռ. Թ. Էրդողանը[7]:

YPG-ի գլխավորած «Սիրիայի դեմոկրատական ուժերի» հրամանատար Մազլում Աբդին «Al-Monitor» լրատվական կայքին տված հարցազրույցի ժամանակ նշել է, որ իր հայրենի քաղաքը՝ Քոբանին,

կլինի ցանկացած ցամաքային հարձակման «իսկական թիրախը», որը ռազմավարական կարևոր նշանակություն ունի Թուրքիայի համար: Նա նաև քննադատել է Ռուսաստանի և Վաշինգտոնի «թույլ արձագանքը» թուրքական օդային հարվածներին[8]:

Աբդին հայտարարել է, որ «Թուրքիայի կառավարությունն օգտագործում է Ստամբուլում տեղի ունեցած պայթյունը որպես պատրվակ՝ հարձակվելու «Սիրիայի դեմոկրատական ուժերի» վերահսկողության տակ գտնվող տարածքների վրա», և պահանջել է միջազգային հետաքննություն անցկացնել այս պայթյունի հանգամանքների բացահայտման համար: Նա հավելել է, որ մինչ Թուրքիան պատրաստվում է այս հարձակմանը, իրենք նույնպես պատրաստ են դրանով զբաղվելու, և եթե նման հարձակում իրականացվի, ապա լայնածավալ պատերազմ կսկսվի, սակայն իրենք չեն ցանկանում, որ տարածաշրջանում լարվածությունը սրվի, և ռազմական գործողություններ իրականացվեն:

«Սիրիայի դեմոկրատական ուժերի» հրամանատարը նաև հայտարարել է. «Թուրքիայի կառավարությունը վճռական է ցամաքային ռազմական գործողություններ իրականացնելու հարցում, և եթե այդ հարցում միջազգային վճռական դիրքորոշում չլինի, Թուրքիան ավելի լայնածավալ հարձակումներ կսկսի: Սիրիան Արաբական միության մի մասն է, և Թուրքիան փորձում է ավելի շատ տարածքներ գրավել Սիրիայից, և արաբական երկրները պետք է հստակ ու վճռական դիրքորոշումներ ունենան այս հարցում»[9]:

«Ճանկ-սուր» օպերացիան առանձնանում է նախկինում իրականացված գործողություններից ոչ միայն ռազմական բնույթով, այլև մի շարք տնտեսական գործոններով: 2017-2018 թթ. Թուրքիայի գործողությունները տարբերվում էին մասշտաբներով, կենտրոնացած էին տարածքների օկուպացիայի վրա, որոնցից ամենանշանակալին, անկասկած, Աֆրինի լեռնային շրջանն էր:

Անկարայի տարածքային պահանջները ժամանակին հիմնված էին Մանբիջ փոքրիկ քաղաքի ձեռքբերման վրա, սակայն տարածքային հարցը մի քանի տարի չկարողանալով հօգուտ իրեն լուծել՝ Թուրքիան փոխեց

իր հոետորաբանությունը՝ անցնելով, այսպես կոչված, նոր տարբերակի քննարկմանը, ինչն էլ ենթադրում է «Ադանայի դաշնագիր» և այդ տարածքներում Քրդստանի աշխատավորական կուսակցության և իշխող ուժերի դեմ ռազմական գործողություններ՝ հրետանային և օդային հարվածների տեսքով:

Վերջին գործողությունների հիմնական ռազմական թիրախներ դարձան նավթավերամշակման և եկամտի աղբյուր հանդիսացող քաղաքները: Նոյեմբերի 24-ի գիշերը թուրքական ավիացիան ավելի քան տասը հարված է հասցրել Հասակա և Դեյր-էզ-Զոր նահանգներում նավթի արդյունահանման և վերամշակման օբյեկտներին: Ըստ էության, Սիրիայի հարավ-արևելքի հումքային ենթակառուցվածքի մնացորդները մի քանի տարի եղել են և՛ գայթակղիչ, և՛ կապող օղակ ողջ տարածաշրջանի տարբեր ուժերի միջև: Իսկ այն, որ Թուրքիան որոշեց հարվածել հենց այդ հանգույցին, ցույց է տալիս թե՛ Անկարայի մտադրությունների խորությունը, թե՛ ռազմաքաղաքական հայեցակարգի փոփոխությունն այդ ուղղությամբ, քանի որ երկու դեպքում էլ ԱՄՆ-ն էր պատասխանատու այդ ենթակառուցվածքի անվտանգության համար: Սիրիական նավթը պատմականորեն համաշխարհային շուկաներում գնագոյացման կարևոր գործոն չի եղել, սակայն գազի արդյունահանման հետ ամբողջությամբ ծածկել է Սիրիայի ազգային տնտեսության կարիքները և ապահովել արտահանման եկամուտներ[10]:

Ըստ որոշ լրատվականների՝ նոյեմբերի 23-ին սիրիական նավթագազային օբյեկտների վրա թուրքական կործանիչների և անօդաչու թռչող սարքերի հարձակման հետևանքով 12 նավթավերամշակման գործարան է խոցվել: Հարակից մի շարք դաշտերում հրդեհներ են բռնկվել: Հրթիռային հարվածների հետևանքով Ղամիշլիում զոհվել է Քրդստանի աշխատավորական կուսակցության բարձրաստիճան հրամանատար Ռեզան Գելոն: Հարձակման թիրախ է դարձել նաև Ալ-Խոլ ճամբարը, որտեղ էին ապաստանել ԻՊ զինյալների ընտանիքների անդամները: Հաղորդվում է, որ փախուստի փորձի ժամանակ 6 մարդ ձերբակալվել է[11]:

Թուրքական զինված ուժերի գործողությունները Սիրիայի հյուսիսում և Իրաքում դեռևս շարունակվում են, և այս պահին դրանց ավարտի նախանշաններ չկան: Էրդողանի վարչակազմը դիտարկում է հարևան պետությունների տարածքներում գործողությունների ցամաքային փուլին անցնելու տարբերակները: Թուրքիան ակնկալում է, որ ռազմաօդային գործողությունները դեկտեմբերին կավարտվեն, որից հետո թուրքամետ ուժերի աջակցությամբ լայնածավալ ցամաքային արշավ կսկսի Սիրիայում և Իրաքում:

Թուրքիայի հարավում բուֆերային գոտի ստեղծելու և իրենց տարածքն ապահովելու թուրքերի ցանկությունը հղի է տարածաշրջանն ապակայունացնելու և այլ վտանգներով, ինչը պայմանավորված է ոչ միայն քրդական կազմավորումների միջև եղած հակասությամբ, այլև իսլամական պետության զինյալների ակտիվացմամբ:

Հղումներ

1. Տես https://aif.ru/politics/world/chto_takoe_operaciya_kogot-mech (մուտք՝ 28.11.2022):
2. Տես https://bit.ly/3Ba0kEN (մուտք՝ 28.11.2022):
3. Տես https://bit.ly/3XNjREG (մուտք՝ 28.11.2022):
4. Տես https://www.aljazeera.com/news/2022/11/18/analysis-is-turkey-set-for-a-new-military-operation-in-syria (մուտք՝ 28.11.2022):
5. https://aif.ru/politics/world/chto_takoe_operaciya_kogot-mech (մուտք՝ 28.11.2022).
6. Տես նույն տեղում:
7. Տես https://www.reuters.com/world/middle-east/erdogan-says-turkey-will-launch-syria-land-operation-when-convenient-2022-11-23/ (մուտք՝ 28.11.2022):
8. Տես նույն տեղում:
9. https://t.me/ir_Azariha/15537?fbclid=IwAR1sr_oJUiYz9yFcLFk-m1jdFSxtzJeu-FM428xb4MQXCUTYN2-JvURfhYRw (մուտք՝ 28.11.2022).
10. Տես https://topwar.ru/205671-operacija-kogot-mech-i-udary-po-jekonomike-nepriznannoj-avtonomii-sirii.html (մուտք՝ 28.11.2022):
11. Տես https://t.me/rybar/41455 (մուտք՝ 01.12.2022):

Հայկական պետականությունների անկումը հայ ազնվականության ոչնչացման հետևանք

Անի Մելքոնյան
Պատմաբան

Հայաստանի այսօրվա վիճակն ու բավականին մշուշոտ թվացող ապագան երբեմն հարց են առաջացնում, թե ինչու ենք հայտնվել նման իրավիճակում:

Պատասխաններից մեկն այն է, որ Հայաստանում ազնվականության փոքր շերտ կա. ազնվական ասելով նկատի չունենք միջնադարյան ընկալմամբ իշխանի կամ նախարարի ժառանգ կամ որևէ պաշտոնյա, այլ ***պետականության գաղափարը կրող***, որպիսիք մերօրյա Հայաստանում, ցավոք, քիչ են:

Հայոց պատմության մեջ բազմաթիվ են ժամանակաշրջանները, երբ Հայաստանը թագավոր կամ թագավորական հարստություն (դինաստիա) չի ունեցել, բայց պահպանել է իր պետականությունն ու ինքնիշխանությունը: Դա եղել է ուժեղ ազնվականության (զինվորականություն, մտավորականներ, առաջադեմ հոգևորականներ) գոյության շնորհիվ: Օտար նվաճողների համար հասկանալի էր, որ քանի դեռ հայության մեջ գոյություն ունի պետականության գաղափարը կրող շերտը՝ ազնվականությունը, իրենք չեն կարող լիովին հնազանդեցնել Հայաստանը, և պատահական չէր, որ Անիի թագավորության անկումից հետո Բյուզանդիան ձեռնամուխ եղավ տարատեսակ միջոցներով հայկական պետականությունը վերացնելուն և քայլեր ձեռնարկեց հայ ազնվականությանը երկրից հեռացնելու ուղղությամբ: Հայկական զորքերը ցիրուցան արվեցին, մի մասն էլ տարվեց տերության խորքերը: Թեև 11-րդ դարի կեսերին արդեն Բագրատունյաց թագավորությունը գոյություն չուներ, բայց Հայաստանի մի շարք վայրերում՝ Կարսում, Տաշիր-Ձորագետում, Սյունիքում, Արցախում, Տայքում, Սասունում և Սպեր-Բաբերդում, շարունակում էին պահպանվել հայկական իշխանությունները, որոնք ձգտում էին վերականգնելու կենտրոնացված հայկական պետականությունը, ինչը խոչընդոտում էին նախ Բյուզանդիան, ապա՝ սելջուկ-թյուրքերն ու մոնղոլները, որոնք էլ ձեռնամուխ եղան հայ ազնվականության բնաջնջմանը. «….Որ նվաճողն արշավում էր Հայաստան՝ առաջին գործը համարում էր ազնվականությանը բնաջնջելը. այդպես են վարվել թե արաբները, թե պարսիկները, թե թուրքերը: Հուստինիանոսի բոլոր ռեֆորմներն ուղղված էին հենց ազնվականության վրա»[1]: Պետականության գաղափարը կրող շերտի վերացմամբ Հայաստանը հայտնվեց ծանր վիճակում. զրկված լինելով ազնվականությունից՝ երկիրը մխրճվեց քոչվորական խավարի մեջ ու ընկավ հետադիմության գիրկը: Այդ առումով «….ամենասև գործը կատարեցին մոնղոլները, ինչից հետո՝ 12-13-րդ դարերում, մեր պատմության ամենաողբերգական շրջանը սկսվեց:

Վերացավ երկրի տերը»[2]:

Զաքարյան իշխանապետության վերացումն ու մոնղոլական տիրապետությունը ավելի մեծ աղետի առաջ կանգնեցրին հայ ժողովրդին. նրա մտածող, առաջնորդող ու ղեկավարող շրջանակները կազմակերպված ձևով վերացվեցին, իրենց դիրքերը հիմնականում պահպանեցին Օրբելյանները Սյունիքում, Դոփյանները՝ Վերին Խաչենում, Հասան-Ջալալյանները՝ Ներքին Խաչենում (ահա այն հարցի պատասխանը, թե ինչու է պետականության գաղափարը կրող շերտը պահպանվել հիմնականում Սյունիքում և Արցախում, և ինչից էր, որ Հայաստանի նորագույն պետականության ստեղծման գործում մեծ էր արցախցի ու սյունեցի գործիչների դերը): Օտար տիրապետության հաստատումը հանգեցրեց հայ ազնվականների ժառանգական տիրույթների (այլ կերպ ասած՝ հողային սեփականության իրավունքի) կորստին, նրանց թուլացմանն ու աստիճանաբար պատմության ասպարեզից հեռանալուն և, դրանով պայմանավորված, նաև հայրենիքի գաղափարի թուլացմանը, որից էլ պետք է բխեին մեր ժողովրդի հետագա դարերի տառապանքներն ու դժբախտությունները: Շատ չխորանալով հայոց պատմության ամենաաղետալի շրջանի մանրամասնությունների մեջ՝ նշենք միայն, որ հայ ազնվականության, ասել է թե՝ պետականության գաղափարը կրող շերտի բնաջնջումը հանգեցրեց նրան, որ ավելի քան 600 տարի հայ ժողովուրդը մի կերպ պահպանեց իր գոյությունը օտար նվաճողների լծի տակ, ստրկական պայմաններում՝ զրկված մարդկային ամեն տեսակի իրավունքներից:

Մկրտիչ Փորթուգալյան

Հայ ազնվականություն (թեև փոքրաթիվ) սկսեց ձևավորվել շատ ավելի ուշ շրջանում արտաքին գործոնների ազդեցությամբ: Արևմտահայ միջավայրում իրավիճակ փոխելու և ազգային ազնվականություն (էլիտա) ձևավորելու գործում առաջին քայլերը կատարեցին եվրոպական բուհերում ուսանած մի քանի հայ երիտասարդներ՝ Նահապետ Ռուսինյանը, Սերովբե Վիչենյանը (Սերվիչեն), Նիկողայոս Պալյանը և Գրիգոր Օտյանը, որոնք «Ազգային սահմանադրության» հեղինակներն էին: Այդ գործում մեծ դեր կատարեցին Մկրտիչ Խրիմյանն ու «Արմենիա» թերթի խմբագիր Մկրտիչ Փորթուգալյանը: «Հին և միջնադարյան հայկական պետականությունն իր փառահեղ ավանդույթներով լիովին ոչնչացված էր: Հայությունը մուտք էր գործել նոր դարաշրջան՝ առանց պետական համակարգերի և մտածողության…. Անհրաժեշտ էր ամեն բան սկսել զրոյից….»[3]: Այս ծանր ու բարդ գործին պետք է լծվեին ազգային-քաղաքական կուսակցությունները, որոնք մի կողմից պետք է պաշտպանեին հայության (հատկապես՝ արևմտահայության) տարրական մարդկային իրավունքները, մյուս կողմից՝ կրթալուսավորական գործունեությամբ փորձեին ձևավորել պետականության գաղափարը կրող ստվար շերտ, որի շնորհիվ էլ հնարավոր կլիներ հասնել ազգային ինքնավարության, ապա՝ անկախության: Այս գործում գերծանր պայմաններում մեծ աշխատանք կատարեցին հատկապես դաշնակցական մտավորականներն ու զինվորական գործիչները թե՛ արևմտահայության, թե՛ արևելահայության շրջանում: Տասնամյակներ տևած մաքառումների ու վայրիվերումների գնով ի վերջո ձևավորվեց հայ ազնվականությունը, որն իր ուսերին պետք է տաներ ազգային-ազատագրական պայքարի ողջ ծանրությունը: Դանդաղ ոչնչացվող արևմտահայությանը փրկելու և նրա «տնտեսական ու քաղաքական ազատագրումը» գլուխ բերելու համար ազնվականների այդ փաղանգը հուսահատ պայքարի էր նետվել՝ շատ հաճախ ոչ միայն պայքարելով թուրքական ու ռուսական կայսրությունների հայավնաս քաղաքականության դեմ, այլև ստիպված լինելով դիմակայել Հայկական հարցի առնչությամբ երկդիմի քաղաքականություն որդեգրած մեծ տերություններին:

Նոր ձևավորվող հայ ազնվականական շերտի համար ճակատագրական էր հայության մեծ ողբերգության տարին՝ 1915 թվականը: Պանթյուրքիզմի ճանապարհին սեպի պես խրված հայությանը վերջնականապես բնաջնջելու համար երիտթուրք ոճրագործները նախ պետք է հայությանը զրկեին իր ազնվական շերտից՝ ռազմական ու քաղաքական առաջնորդներից, որոնք կարող էին կազմակերպել և առաջնորդել նրան. «Ապրիլ 11-ին (նոր տոմարով՝ 24-ին – Ա. Մ.) զանգաածօրէն ձերբակալելով՝ դէպի մահ քշեց Պոլսահայ մտաւորականութիւնը»[4]: Փաստորեն, հերթական անգամ կանխամտածված կերպով թշնամին հայությանը զրկեց ազնվականական շերտից, և արևմտահայությունը մնաց առանց կազմակերպող ու ղեկավարող ուժի: Իսկ այնտեղ, որտեղ ազնվականական շերտը կարողացել էր խույս տալ ձերբակալությունից, ինքնապաշտպանական մարտեր կազմակերպվեցին, և հիմնականում բնակչության կոտորած տեղի չունեցավ, ինչի լավագույն օրինակը Վանն էր, որտեղ Արամ Մանուկյանն ու Արմենակ Եկարյանը պետական գործչի փայլուն որակներ դրսևորեցին: Գոյությունը պահպանած սակավաթիվ ազնվականությունը, խույս տալով բազմաթիվ դավադրություններից, երկարատև մաքառումներից հետո Արամ Մանուկյանի առաջնորդությամբ պետք է ծնունդ տար հայկական պետականությանը. 600-ամյա փլատակների վրա այդ փոքրաթիվ ազնվականական փաղանգը «անձև քաոսից» պիտի կերտեր իր մտապատկերում վաղուց ստեղծված հայոց պետականությունը՝ Հայաստանի Հանրապետությունը, և նաև պետականության գաղափարի ամրապնդման նպատակով ընդուներ Անկախ և Միացյալ Հայաստանի մասին հռչակագիրը, որը հետագայում պետք է նրա ուխտը դառնար: Ցավոք սրտի, Հայաստանի Հանրապետության կառավարությունը ժամանակ չունեցավ ազնվականության լայն շերտ ձևավորելու, քանի որ պետականության գաղափարից զուրկ օտարամոլ ծառայամիտները՝ հայ բոլշևիկները, ձեռք ձեռքի տալով ռուս բոլշևիկների և թուրքերի հետ, պետք է կործանեին Հայաստանի նորանկախ պետականությունը. «Հայ բոլշևիկները մեկ նպատակ էին հետապնդում՝ ինչ գնով էլ լինի վարկաբեկել ու տապալել Հայաստանի վարիչներին, ձեռք ձգել Հայաստանի իշխանությունը: Եվ այդ նպատակին հասնելու համար նրանք միջոցների մեջ խտրություն չէին դնում, փույթ չէ, թե դրանից մահացու վնաս կստանային Հայաստանն ու հայ ժողովուրդը»[5]: Արդեն նշել ենք, որ «մեր երկիրը նվաճած բոլոր ուժերը նախ և

Խրիմյան Հայրիկ

առաջ ցանկանում էին ազատվել ազնվականությունից, ոչնչացնել կամ իրավազրկել այդ խավը»[6], և ամենևին էլ պատահական չէր, որ Հայաստանի պետականության անկումից հետո Խորհրդային Հայաստանի ղեկավարները ձեռնամուխ եղան հայ ազնվականության ոչնչացմանը. նրա մի մասը տարագրվեց՝ դառնալով քաղաքական վտարանդի, իսկ մյուս մասը սպանվեց կամ տանջամահ արվեց խորհրդային բանտերում. «1921-1928 թթ. հանուն Հայաստանի անկախության մարտնչած մոտ 1500 սպա արտաքսվել, գնդակահարվել և կացնահարվել է:

...Մովսես Սիլիկյան, Թովմաս Նազարբեկյան, Աթարբեկ Բեյ Մամիկոնյան, Վարդան Թելլալյան, Մակեդոն Օհանջանյան, Սերգեյ Մելիք-Յոլչյան, Համազասպ Սրվանձտյան, Հրանտ Տեր Մարգարյան, Լևոն Ենգիբարյան…

Սպաներին որոշվեց «յուրահատուկ» ձևով սպանել՝ կացնահարել»[7]: Հայ ազնվականությանը բնաջնջելու քոչվորական տրամաբանության մեջ էին մտնում նաև Խորհրդային Հայաստանի ղեկավարների կողմից Հայաստանի Հանրապետության վարչապետ հայրենադարձված Հովհաննես Քաջազնունու նկատմամբ բռնաճնշումները, որոնց համար յուրահատուկ ազդակ հանդիսացավ 1931 թ. մայիսին «Խորհրդային Հայաստան» թերթում տպագրված Աղասի Խանջյանի հոդվածը, որում վերջինս Քաջազնունու մասին գրում էր.

«….Քաղաքացի Քաջազնունին կասկածում է, որ ինտերվենցիոնիստների շարքերում «կարող է գտնվել մի հայ մարդ»: Կարիք կա՞ ասելու, որ երկմտել այն փաստի վերաբերմամբ, թե Դաշնակցությունն ինտերվենցիան պատրաստողների առաջին շարքերում է, նշանակում է կամա թե ակամա կատարել Դաշնակցության՝ հակախորհրդային ինտերվենցիայի կազմակերպման այդ ջերմ գործակցի դավերն ու ոտնձգությունները….»[8]: Քաջազնունին, լինելով Հայաստանի Հանրապետության երբեմնի վարչապետը, ընկալվում էր որպես հայկական պետականության գաղափարի կրող և այդ գաղափարը կրող քաղաքական ուժի երբեմնի անդամ, ուստի ժողովրդի մեջ Հայաստանի անկախ պետականության մասին հուշերը սպանելու համար պետք էր «չեզոքացնել» նրան, և ահա՛ «Խորհրդային Հայաստան» թերթի 1931 թ. մայիսի 23-ի համարում կարդում ենք.«….քաղաքացի Քաջազնունին ճիգ էր թափում վիճարկել ընկ. Ա. Խանջյանի հոդվածը այն մասին, որ Քաջազնունու դիրքերը երկդիմի են, որ նա կոծկում է Դաշնակցության, որպես հակախորհրդային ինտերվենցիայի պատրաստման գործակցի դերը»[9]:

Մեկ այլ ելույթում նույն Խանջյանը Քաջազնունուն այլ մեղադրանք է ներկայացնում.

«….Նա և նրա նմանները չեն ուզում կամ չեն կարողանում հաշտվել շինարարության սոցիալիստական իմաստի ու բովանդակության հետ, շարունակելով զարդարված մնալ սոսկ լոյալության փետուրներով»[10]:

Չխորանալով մանրամասների մեջ՝ ասենք միայն, որ Քաջազնունու մասին հետագա տարիներին էլ չմոռացան, և 1937 թ. հուլիսի 29-ին նա ձերբակալվեց: Դեկտեմբերի 5-ին ՀԽՍՀ ՆԳԺԿ եռյակը «….մեղադրյալ Հ. Քաջազնունու հանդեպ կայացրել է գնդակահարության դատավճիռ՝ անձնական գույքի բռնագրավմամբ»[11]: Սակայն առողջական վիճակի հետագա վատթարացման հետևանքով (պաշտոնական վարկածով՝ ծերունական թուլություն, տուբերկուլյոզ և գրիպ) նախկին վարչապետը մահանում է բանտային հիվանդանոցում 1938 թ. հունվարի 15-ին՝ 70 տարեկան հասակում:

Հայկական պետականության գաղափարը կրող մտավորականության բնաջնջումը շարունակվեց նաև խորհրդային հետագա տասնամյակների ընթացքում, բայց, չնայած դրան, հայրենադարձների և «երկաթե վարագույրից» այն կողմ՝ արտերկիր անցնելու թույլտվություն ունեցող մտավորականների՝ գաղտնի Հայաստան բերած արգելված գրականության շնորհիվ ընդհատակյա պայմաններում ձևավորվեց ազնվականության՝ ազգային պետականության գաղափարը կրողների մի նոր շերտ, որն իր գոյության մասին ազդարարեց 1965 թ.՝ Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի ժամանակ, իսկ հետո՝ 1988 թ. փետրվարից սկսած, երբ սկսվեց Արցախյան շարժումը, այդ շերտն էր, որ իր ուսերին տարավ արցախյան պատերազմի ողջ ընթացքը. «….1990-94 թթ. արցախյան ճակատում զոհվածներն իսկական ազնվական տղաներ էին, երկրի գենետիկական հատկանիշներ կրողները»[12], նրանց շնորհիվ էր, որ վերականգնվեց Հայաստանի պետականությունը, թեև 1990-ականներին իշխանության օղակներում

Արամ Մանուկյան

հայտնվեցին մարդիկ, որոնք, դժվար է ասել, որ որևէ կապ ունեին ազգային պետականության գաղափարի հետ: Դրա հետևանքով պետականաշինության ուղին սխալ գծվեց, հետագա տարիներին էլ պատշաճ ուշադրություն չդարձվեց ազնվականության (ազգային էլիտա) ձևավորման խնդրին, և ի վերջո «թավշյա հեղափոխության» հետևանքով դարձյալ սխալ մարդիկ հայտնվեցին պետության կառավարման օղակներում ու սկսեցին վարել հայ ազնվականությանը բնաջնջելու մեզ արդեն ծանոթ քաղաքականությունը, ինչի ականատեսն ենք մենք 2020 թվականից առ այսօր:

Կարող է հարց առաջանալ. ունենք այսօր ազնվականություն, և ի՞նչ անել, որպեսզի նրա շարքերը ստվարանան: Ազնվականություն այսօր, թեև փոքրաթիվ կազմով, բայց ունենք, կա մի շերտ, որն ազգային պետականության գաղափարի կրողն է, այդ պետականության պահպանման համար պայքարից չվախեցողը, և Հայաստանի հետագա իշխանություններից պահանջվում է ստվարացնել այդ ազնվականության շարքերը, աճեցնել պետականության գաղափարները կրող՝ երկրի տերերի՝ ապահովելու Հայաստանի՝ որպես պետության հետագա գոյությունը, քանզի «ծառան բոլորի համար ծառա է, տերն է, որ պետություն ու ազգ է պահում»[13]: Մեզ երկրի տերեր են պետք, ոչ թե մշտապես օտարներին հպատակվելու պատրաստ ծառաներ, որովհետև «Հոգիով սնանկներն են, որ կրնան լքել անկախութեան գաղափարը….»[14]: Հոգով սնանկները չեն կարող հայրենիք ու պետություն պահել, ուստի որքան արագ նրանք հեռանան պետության կառավարման ղեկից, այնքան արագ հնարավոր կլինի փոքրաթիվ ազնվականներով նորից «անձև քաոսից» պետություն կերտել և ձեռնամուխ լինել Հայաստանի բնակչության շրջանում ազնվականական շերտի (պետականության գաղափարը կրող խավի) ստվարացմանն ու բյուրեղացմանը, որն էլ իր՝ ազդեցիկ գործոն դառնալու շնորհիվ կապահովի Հայաստանի հետագա գոյությունն ու վերելքը: ■

Հղումներ

1. Մովսիսյան Ա., Հայոց պետականության անկումն սկսվեց ազնվականության ոչնչացումից, https://livenews.am/press/2021/100688/10/18/04/ (մուտք՝ 19.11.2022):
2. Նույն տեղում:
3. Մովսիսյան Ա., Հայոց 5000-ամյա պետականությունը, Եր., 2016, էջ 64:
4. Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Բ. տպ., Բէյրութ, 1958, էջ 12:
5. Վրացյան Ս., Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի միջև, Եր., 2022, էջ 71:
6. Մովսիսյան Ա., Հայոց 5000-ամյա պետականությունը, էջ 64:
7. https://evnreport.com/arm/raw-unfiltered-arm/eclipse-am/ (մուտք՝ 19.11.2022):
8. «Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբ.՝ Վ. Ղազախեցյան, Եր., 1999, էջ 256:
9. Նույն տեղում:
10. Նույն տեղում, էջ 258:
11. «Հովհաննես Քաջազնունու մեծ ողբերգությունը: Մաս երկրորդ: Ստալինյան բռնաճնշումներից մինչև արդարացում (փաստաթղթեր)», https://vemjournal.org/wp-content/uploads/2020/07/16-%D4%B1%D6%80%D5%AD%D5%AB%D5%BE-2017-1.pdf (մուտք՝ 19.11.2022):
12. Մովսիսյան Ա., Հայոց պետականության անկումն սկսվեց ազնվականության ոչնչացումից, https://livenews.am/press/2021/100688/10/18/04/:
13. Նույն տեղում:
14. Ռուբէն Դարբինեան. «Մեր Պատասխանը Յովհաննէս Քաջազնունիի», http://www.aniarc.am/2015/12/03/ruben-darbinian-last-part/ (մուտք՝ 19.11.2022):

Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ

ա) Գրականություն

1. «Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբ.՝ Վ. Ղազախեցյան, Եր., 1999:
2. Մովսիսյան Ա., Հայոց 5000-ամյա պետականությունը, Եր., 2016:
3. Վրացյան Ս., Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի միջև, Եր., 2022:
4. Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Բ. տպ., Բէյրութ, 1958:

բ) Համացանցային նյութեր

1. https://livenews.am/press/2021/100688/10/18/04/.
2. https://evnreport.com/arm/raw-unfiltered-arm/eclipse-am/.
3. https://vemjournal.org/wp-content/uploads/2020/07/16-%D4%B1%D6%80%D5%AD%D5%AB%D5%BE-2017-1.pdf.
4. http://www.aniarc.am/2015/12/03/ruben-darbinian-last-part/.

ՄԱԿ-ում Հայոց ցեղասպանության հարցի քննարկումները և ընդունված բանաձևերը

Արմեն Մարուքյան
Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Հայոց ցեղասպանության հարցը ՄԱԿ-ում քննարկվել է դեռևս 1948 թ., երբ ծավալվում էր «Ցեղասպանություն հանցագործության կանխարգելման ու դրա համար պատժի մասին» կոնվենցիայի ընդունման գործընթացը, որն ավարտվեց դրա ընդունմամբ[1]: Հետագայում ևս ժամանակ առ ժամանակ այդ հարցը կրկին հայտնվել է տվյալ հեղինակավոր միջկառավարական կառույցի ուշադրության կենտրոնում: Թեև Սառը պատերազմի տարիներին ՄԱԿ-ում ուժերի հարաբերակցությունն արևմտյան երկրների օգտին էր, այդուհանդերձ, Գլխավոր ասամբլեայի բարձր ամբիոնից Հայոց ցեղասպանության ճանաչման մասին հայտարարություններ են հնչել Կիպրոսի Հանրապետության արտաքին գործերի նախարարի կողմից[2]: 1965 թ. հունվարի 25-ին և 27-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի լիագումար նիստում երկու անգամ ելույթ ունեցավ Կիպրոսի արտաքին գործերի նախարար Կիպրիանին, որը, անդրադառնալով Թուրքիայի արտգործնախարարի՝ կոտորածներին վերաբերող արտահայտություններին, նշեց, որ Թուրքիայի ներկայացուցիչը բարոյական իրավունք չունի խոսելու կոտորածներից, քանզի հենց տվյալ տարում ողջ աշխարհի հայությունը նշում է 1915 թ. Թուրքիայում մեկուկես միլիոն անմեղ հայերի զանգվածային կոտորածների 50-րդ տարելիցը: Ի պատասխան՝ Թուրքիայի արտգործնախարարը փորձեց հայտնի ցեղասպանագետ Ա. Թոյնբիի աշխատություններից մեջբերումներով ժխտել հայերի կոտորածների վերաբերյալ մեղադրանքները: Հունվարի 27-ի ելույթում Կիպրոսի արտգործնախարարը քննադատեց Թուրքիայի արտգործնախարարի արտահայտությունը, որը հայերի ցեղասպանությունն անվանել էր «այսպես կոչված կոտորած»: Կիպրիանին թուրք գործընկերոջը խորհուրդ տվեց կարդալու Ա. Թոյնբիի բոլոր աշխատությունները, որոնցում նա բազմաթիվ տեղեկություններ կգտներ հայերի ջարդերի մասին և շատ այլ բաներ, որոնք հազիվ թե նրան դուր գային[3]:

ՄԱԿ-ում Հայոց ցեղասպանության շուրջ քննարկումները վերսկսվեցին 1970-ական թթ. սկզբներից, երբ ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի խտրականության կանխարգելման և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ենթահանձնաժողովում նախաձեռնվեցին «Ցեղասպանություն հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի բարեփոխմանն ուղղված աշխատանքները: 1971 թ. ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովը հաստատեց «Ցեղասպանություն հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան բարեփոխելու նպատակով հետազոտություն կատարելու և զեկույց ներկայացնելու առաջարկը:

Ենթահանձնաժողովը նշանակում է տվյալ հարցով հատուկ զեկուցողի՝ Ռուանդայի ներկայացուցիչ Նիկոդեմ Ռուհաշիանկիկոյին: 1972 թ., երբ նա առաջին անգամ իր զեկույցը ներկայացրեց ՄԱԿ-ի մարդու իրավունքների ենթահանձնաժողովի 25-րդ նստաշրջանին, նրանում Հայոց ցեղասպանության մասին հիշատակում չկար: Այդ մասին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կուրտ Վալտհայմին գրած նամակում տեղեկացնում է հայ պատմաբան Զավեն Մնրլյանը, որը նամակներ է ուղարկում նաև ենթահանձնաժողովի նախագահ Ջորջ Բրանտին և անձամբ զեկուցողին: Ենթահանձնաժողովի նախագահը պատասխանում է, որ առաջարկը հաշվի է առնվել, և հայերի ցեղասպանության փաստը ներառվել է զեկույցի տեքստում[4]:

1973 թ. սեպտեմբերի 16-ին Ժնևում բացված ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի ենթահանձնաժողովի 26-րդ նստաշրջանում հատուկ զեկուցող Ն. Ռուհաշիանկիկոն ներկայացնում է իր զեկույցի նոր տարբերակը, որի 30-րդ պարբերության մեջ պատմական փաստերի շարքում հայերի նկատմամբ Օսմանյան կայսրությունում կատարվածը որակվում է որպես «հանցագործություն, որը համարվում է XX դարի առաջին ցեղասպանությունը»[5]: Զեկույցն արժանացավ բարձր գնահատականի և միաձայն ընդունվեց ենթահանձնաժողովի կողմից: Սահմանված ընթացակարգի համաձայն՝ այն պետք է քննարկվեր և ընդունվեր նաև մարդու իրավունքների հանձնաժողովում, որի անդամները, ի տարբերություն ենթահանձնաժողովի անդամների, իրենց կառավարությունների ներկայացուցիչներն էին, որոնք արտահայտում էին իրենց կառավարությունների, այլ ոչ թե իրենց դիրքորոշումը, բայց իրավունք չունեին վետո կիրառելու հատուկ զեկուցողի հետազոտության կամ դրա առանձին դրույթների նկատմամբ:

1974 թ. մարտի 6-ին Ռուհաշիանկիկոյի զեկույցը՝ 30-րդ պարբերությամբ հանդերձ, ներկայացվում է ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի 30-րդ

նստաշրջանին: Դրանում Հայոց ցեղասպանության հիշատակումը հանգեցրեց թուրքական կողմի հուժկու հակազդեցությանը: Թուրքիայի ներկայացուցիչ Օսման Օլչայը պահանջեց զեկույցը վերադարձնել վերամշակման և տեքստից հանել 30-րդ պարբերությունը[6]: Թուրքական կողմն իր դիրքորոշումը հիմնավորում էր նրանով, որ հին վերքերը փորփրելը վտանգավոր է, ինչը կարող է ատելություն առաջացնել, որ պատմական իրադարձությունների ամբողջական պատկերի ճշգրիտ վերականգնումն անհնար է և այլն[7]: Հակառակ հաստատված կարգի, համաձայն որի՝ հատուկ զեկուցողների ուսումնասիրություններում ներկայացված դրույթները փոփոխության չէին կարող ենթարկվել, Թուրքիայի ներկայացուցիչը պահանջեց զեկույցից հանել նաև 28-րդ և 29-րդ պարբերությունները, որոնք վերաբերում էին կրոնական հիմքով ցեղասպանություններին: Թուրքիայի այս պահանջին միացան ԱՄՆ-ի, Պակիստանի, Իտալիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի, Իրաքի, Իրանի, Հնդկաստանի, Ռումինիայի, Էկվադորի և Նիգերիայի պատվիրակները, իսկ ԽՍՀՄ-ի, Խորհրդային Բելառուսի և Մեծ Բրիտանիայի պատվիրակները պահանջեցին դոնփակ նիստ հրավիրել[8]: Ի վերջո թուրքերը ԱՄՆ-ի աջակցությամբ և ԽՍՀՄ ներկայացուցչի լուռ համաձայնությամբ կարողացան հասնել նրան, որ զեկույցը վերադարձվեց վերամշակման, ինչն առաջին հերթին ենթադրում էր 30-րդ պարբերության վերացումը[9]:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների վարչության տնօրեն հոլանդացի Թեո վան Բովենը, որն անձամբ մասնակցել է բոլոր քննարկումներին սկզբում որպես ենթահանձնաժողովում Նիդերլանդների ներկայացուցիչ, այնուհետև՝ որպես դրա անդամ, մեկնաբանելով այդ զարգացումները, ափսոսանք հայտնեց, որ թուրքական պետությունն իր արատավոր շահերը պաշտպանելու նպատակով իսկական դիվանագիտական արշավ սկսեց 1974 թ. ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի նստաշրջանից առաջ, ինչը հայ ժողովրդի պատմական ճակատագրի նենգափոխման պատճառ դարձավ[10]:

Հատուկ զեկուցողի հետազոտության մեջ հայերի ցեղասպանության՝ իբրև տվյալ հանցագործության բոլոր հաջորդ դեպքերի համար նախադեպի հիշատակումը, որը ցեղասպանության մասին կոնվենցիայի կատարելագործման հիմք էր, խուճապ առաջացրեց ոչ միայն Թուրքիայի, այլև ՆԱՏՕ-ի նրա դաշնակիցների և նույնիսկ հակառակ ճամբարի առաջատար ԽՍՀՄ-ի մոտ, որոնք, մոռանալով միմյանց միջև եղած լուրջ հակասությունները, միավորվում են այդ հիշատակումը չեզոքացնելու համար: ԱՄՆ-ի ու նրա դաշնակիցների դիրքորոշումը հիմնավորվում էր նրանով, որ Թուրքիան ԱՄՆ-ից հետո թվաքանակով երկրորդ բանակն ուներ ՆԱՏՕ-ում, վերահսկում էր խորհրդային նավատորմի ելքը Միջերկրական ծով, ԱՄՆ-ի ռազմավարական հենարա-նն էր ԽՍՀՄ-ի հետ սահմանին, նրա տարածքում էր տեղակայված ԱՄՆ-ի ռազմաօդային ուժերի ամենամեծ ռազմակայանը, որտեղից իրականացվում էր նաև խորհրդային ռազմավարական միջուկային ուժերի ռադիոէլեկտրոնային և տիեզերական հետախուզությունը, և այնտեղից էր ստացվում այդ հետախուզության միջոցով ձեռք բերված տեղեկությունների հիմնական մասը: Այդ էր պատճառը, որ ԱՄՆ-ի ներկայացուցիչն անգամ կասկածի տակ էր առնում հայերի ցեղասպանության փաստը[12]:

Եթե ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի երկրների շարժառիթներն ու փաստարկները Սառը պատերազմի պայմաններում ինչոր չափով կարելի էր հասկանալ, քանզի նրանք փորձում էին այդ կերպ պաշտպանել իրենց ռազմավարական դաշնակցին, ապա ԽՍՀՄ դիրքորոշումն առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ, սակայն այն ևս ուներ իր բացատրությունը: Այդ կերպ ԽՍՀՄ-ն նպատակ էր հետապնդում թույլ չտալու պետությունների պատասխանատվության սկզբունքի ամրագրումը միջազգային իրավունքում, ինչը կարող էր ծանր հետևանքներ ունենալ նաև իր համար, քանզի դեռ ցեղասպանության մասին կոնվենցիայի քննարկման ժամանակ իր հասցեին նույնպես հնչում էին ցեղասպանություն իրականացնելու մեղադրանքներ քաղաքական այլախոհության հետապնդումների և ազգային փոքրամասնությունների հարցում խտրականության առնչությամբ:

Հաշվի առնելով այդ հուժկու հակազդեցությունը՝ դեմ արտահայտված երկրների հայկական համայնքները սկսում են աշխատանքներ տանել իրենց իշխանությունների դիրքորոշումների վրա ներազդելու ուղղությամբ: Բացի այդ՝ հայկական տարբեր համայնքներից նամակներ էին հղվում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, որոնց կցվում էին Հայոց ցեղասպանությունը հաստատող փաստագրական նյութեր՝ պահանջելով անպայման վերականգնել զեկույցի 30-րդ պարբերությունը:

30-րդ պարբերության շուրջ բանավեճը շարունակվեց 1975 թ. սեպտեմբերին Ժնևում: Այս անգամ Ավստրիայի, Դանիայի, Մեծ Բրիտանիայի, Մեքսիկայի, Նիգերիայի, Ֆրանսիայի և Հարավսլավիայի փորձագետները արտահայտվեցին պարբերության պահպանման օգտին, սակայն որոշում ընդունվեց երեք տարով՝ մինչև 1978 թ. ենթահանձնաժողովի 33-րդ նստաշրջանը, սառեցնել հարցի քննարկումը:

1978 թ. ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի ենթահանձնաժողովը կրկին անդրադարձավ 1973 թ. ներկայացված զեկույցին: Քննարկման ժամանակ հատուկ զեկուցող Ն. Ռուհաշիանկիկոն հայտարարեց, թե հայերի ցեղասպանության վկայություններ չի հայտնաբերել, և միակ ճանաչված դեպքը հրեաների ցեղասպանությունն է Երկրորդ աշխարհամարտի տարիներին: Ակնհայտ էր, որ հատուկ զեկուցողի դիրքորոշման փոփոխությունը պայմանավորված էր այն ճնշումներով, որոնց նա ենթարկվել էր առաջին հերթին թուրքական կողմից: Ն. Ռուհաշիանկիկոյի վրա ճնշումներ գործադրելու փաստը հաստատում է նաև դեպքերի անմիջական մասնակից հոլանդացի Վան Բովենը, որն ափսոսում էր, որ թուրքական կառավարությունն ազդեցություն է ունեցել առանձին փորձագետների անկախ ու անաչառ դիրքորոշման վրա: Միևնույն ժամանակ նա

հավատում էր, որ առանձին անհատների, խմբերի և ոչ կառավարական կազմակերպությունների շնորհիվ պատմական արդարությունը և աշխարհի խիղճը դեռ չեն թաղվել, նույնիսկ որոշ կառավարությունների դիրքորոշումներն ավելի են ճշգրտվել, և ՄԱԿ-ում բացվել են նոր հնարավորություններ, որ ճշմարտությունն ու արդարությունը հաղթանակեն[12]: Չնայած այն հանգամանքին, որ բազմաթիվ երկրների ներկայացուցիչներ առարկեցին դրան՝ գտնելով, որ կոնվենցիայի բարեփոխումն ու դրա արդյունավետության բարձրացումն առանց պատմական փորձը հաշվի առնելու ուղղակի անհնարին է, այնուամենայնիվ, Թուրքիան ու նրան սատարող երկրները հասան այն բանին, որ զեկույցից ամբողջությամբ դուրս բերվեց հիմնահարցի պատմությանը վերաբերող 30-րդ պարբերությունը: Այսպիսով՝ Թուրքիային հաջողվեց զեկույցից ժամանակավորապես դուրս մղել Հայոց ցեղասպանության մասին հիշատակող պարբերությունը:

Համաձայն սահմանված ընթացակարգի՝ զեկույցը 1979 թ. մարտին կրկին ներկայացվեց մարդու իրավունքների հանձնաժողովին, որից հեղինակը դուրս էր թողել 30-րդ պարբերությունը, ինչը բողոքի այնպիսի մեծ ալիք բարձրացրեց, որը թերևս սպասելի չէր զեկուցողի համար: Սակայն ռուանդացի հատուկ զեկուցողն այլևս չփոփոխեց իր զեկույցը, և ենթահանձնաժողովը, համաձայն ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի 1983 թ. 33-րդ բանաձևի, նշանակեց մեկ այլ զեկուցողի՝ հանձնարարելով ցեղասպանություն հանցագործության կանխարգելման ու դրա համար պատժի ուսումնասիրությունը հիմնովին վերանայել և ներկայացնել նոր զեկույց: 1983 թ. մայիսի 27-ին նոր հատուկ զեկուցող նշանակվեց բրիտանական խորհրդարանի նախկին պատգամավոր Բենջամին Ուայթեքերը, որին հանձնարարվեց զբաղվել «Ցեղասպանություն հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան բարեփոխելու վերաբերյալ հետազոտությամբ և ներկայացնել նոր զեկույց[13]: 1984 թ. օգոստոսի 7-ին Ուայթեքերը հայտարարեց, որ նախորդ զեկույցում որոշ բացեր կային՝ պայմանավորված քաղաքական ճնշմամբ, այդ թվում՝ հայերի ցեղասպանության հարցի առնչությամբ[14]: Հատկանշական է, որ նոր զեկուցողը տեղյակ էր նախորդ զեկուցողի նկատմամբ գործադրված ճնշումների մասին և հենց դա էր համարում նախկին զեկույցի գլխավոր թերությունը:

1985 թ. հուլիսի 2-ին Բ. Ուայթեքերը ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի ենթահանձնաժողովին ներկայացրեց նոր զեկույցը «Ցեղասպանություն հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան կատարելագործելու վերաբերյալ: Հեղինակը նշում էր, որ թեև «ցեղասպանություն» բառը համեմատաբար վերջերս է առաջացել, սակայն այն վերաբերում է հին հանցագործությանը[15]:

Վերափոխված տարբերակի 24-րդ պարբերության մեջ նշվում է, որ նացիստական գազանությունները, ցավոք, չեն եղել XX դարի ցեղասպանության եզակի օրինակ: Հեղինակն այդ հանցագործության օրինակների թվին է դասել 1904 թ. գերմանացիների կողմից իրագործված հերերոների կոտորածները, 1915-1916 թթ. օսմանցիների կողմից հայերի կոտորածները և այլն[16]: Հերերոների 1904 թ. կոտորածի հիշատակումով հեղինակը փաստորեն ձեռնպահ էր մնում Հայոց ցեղասպանությունը XX դարի առաջին ցեղասպանություն անվանելուց, ինչն ամրագրված էր ռուանդացի զեկուցողի հետազոտության 30-րդ պարբերության մեջ:

Հեղինակը նաև ստիպված է եղել հայերի կոտորածների վերաբերյալ զեկույցի տողատակում տալ որոշ պարզաբանումներ. «Առնվազն մեկ միլիոն, այսինքն՝ ըստ էության հայ բնակչության կեսից ավելին անկախ կազմակերպությունների ու ականատեսների հավաստի տվյալներով սպանվել է կամ մահվան քարավաններ է ուղարկվել: Դա հաստատվում է ԱՄՆ, Գերմանիայի և Մեծ Բրիտանիայի արխիվային փաստաթղթերով, ինչպես նաև այն ժամանակ Օսմանյան կայսրությունում ծառայող, այդ թվում՝ նրա դաշնակից Գերմանիայի, դիվանագետների վկայություններով»[17]: Որպես նշվածի ապացույց զեկուցողը մեջբերում է Գերմանիայի դեսպան Վանգենհայմի 1915 թ. հուլիսի 7-ի հեռագիրը, որում նշված է, որ թուրքական կառավարությունն իրականում նպատակ էր հետապնդում ոչնչացնելու հայերի տեսակը Օսմանյան կայսրությունում: Բ. Ուայթեքերը եզրակացնում էր, որ թեև հաջորդ թուրքական կառավարությունը կոտորածների համար պատասխանատու որոշ անձանց հանձնեց դատարանին ու նրանց մեղավոր ճանաչեց կատարվածում, թուրքական ներկա պաշտոնական տեսակետը հանգում է նրան, որ ցեղասպանություն չի եղել, թեև եղել են շատ զոհեր և տեղահանություններ, որոնք պայմանավորված էին պատերազմով, և բոլոր հակառակ պնդումները կեղծիք են[18]:

Այս անգամ ևս փորձեր արվեցին ճնշումներ գործադրելու զեկուցողի վրա՝ ստիպելու նրան իր զեկույցից հանել հայերի կոտորածների՝ իբրև ցեղասպանության հիշատակումը, սակայն ապարդյուն: Ի տարբերություն ռուանդացի զեկուցողի՝ անգլիացի զեկուցողը ցուցաբերեց անկախ հետազոտողին վայել անաչառություն ու սկզբունքայնություն: Ուայթեքերն իր պարզաբանումներում զետեղել էր նաև թուրքական տեսակետը, թերևս այն նպատակով, որ 24-րդ պարբերության՝ հայերի ցեղասպանության մասին դրույթը դուրս չմղվի տեքստից, ինչպես եղավ նախկին զեկույցի դեպքում: Տողատակում ներկայացնելով 1915 թ. դեպքերի թուրքական վարկածը՝ Ուայթեքերը հենց Օսմանյան կայսրության դաշնակից Գերմանիայի դեսպան Վանգենհայմի զեկուցագրերից մեջբերումներով չեզոքացնում է այն:

1985 թ. օգոստոսի 5-30-ն ընթացած ենթահանձնաժողովի 38-րդ նստաշրջանում կրկին սկսվեցին Հայոց ցեղասպանության շուրջ քննարկումները, երբ Բ. Ուայթեքերը ներկայացրեց իր զեկույցը, որի 24-րդ պարբերության մեջ հիշատակվում էր Հայոց

ցեղասպանության փաստը: Մահմեդական երկրների՝ Եգիպտոս, Հորդանան, Մարոկկո, Բանգլադեշ, և որոշ եվրոպական երկրների մասնագետներկայացուցիչները Հայոց ցեղասպանության հիշատակման պատճառով դեմ արտահայտվեցին 24-րդ պարբերությանը: Օգոստոսի 19-ին ենթահանձնաժողովի նիստում ելույթ ունեցան նաև չորս հայեր՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի միջազգային հարցերի հանձնաժողովի ներկայացուցիչ, պրոֆեսոր Շավարշ Թորիկյանը, Գերության դեմ մարդու իրավունքների պաշտպանության կազմակերպության ներկայացուցիչ Հրայր Պալյանը, Բնիկ ժողովուրդների համաշխարհային կազմակերպության ներկայացուցիչ Հարութ Սասունյանը և «Ազգերի և ժողովուրդների միջև եղբայրական միություն» միջազգային շարժման ներկայացուցիչ Ռոբերտո Մալխասյանը, որոնք պատմական փաստերի հիման վրա պաշտպանեցին Հայոց ցեղասպանության փաստի հիշատակումը զեկույցի 24-րդ պարբերության մեջ:

Թորիկյանը և Սասունյանն իրենց ելույթներում նաև անդրադարձ կատարեցին այն փաստին, որ ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովը դեռ 1948 թ. իր նիստերում անդրադարձել է հայերի կոտորածներին: Այդ քննարկումների մասին փաստերը տեղ են գտել հանձնաժողովի փաստաթղթերում, որոնք հայտնաբերել ու առաջին անգամ շրջանառության մեջ է դրել Զ. Մնըրլյանը[19]: Ի պատասխան՝ Թուրքիայի ներկայացուցիչը կրկնեց թուրքական պաշտոնական վարկածը, համաձայն որի՝ կատարվածն ընդամենը հայկական ապստամբության ճնշում է եղել: Նրա տեսակետը պաշտպանեցին նաև թուրք մասնագետ Թուրքայա Աթայովը և Պակիստանի ներկայացուցիչը:

Օգոստոսի 20-ին պատասխան ելույթում զեկույցի հեղինակ Բ. Ուայթեքերը նշեց, որ ութ տարի զբաղվել է հայերի ցեղասպանության ուսումնասիրությամբ, հետազոտել է արխիվային փաստաթղթեր, այդ թվում՝ Օսմանյան կայսրության դաշնակից տերությունների՝ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի արխիվները, որոնք վկայում են հենց ցեղասպանության մասին, որի կազմակերպիչները դատապարտվել են հենց թուրքական ռազմական դատարանների կողմից: Զեկուցողը եզրակացրեց, որ եթե ենթահանձնաժողովում ելույթ ունեցող մասնագետները չպետք է քաջություն ունենան ասելու ճշմարտությունը, ուրեմն նրանց մասնակցությունն անիմաստ է, քանզի ենթահանձնաժողովի պարտականությունն է զոհերին պաշտպանել կառավարություններից, այլ ոչ թե հակառակը[20]: Զեկույցին փորձեց հակադարձել Թուրքիայի ներկայացուցիչը, սակայն հույն նախագահող Էրիկա Թայեսը ձայն չտվեց նրան՝ հայտարարելով, որ հարցի շուրջ քննարկումներն ավարտված են: Օգոստոսի 21-ին վերջապես անցկացվեց քվեարկություն, և զեկույցն ամբողջությամբ ընդունվեց ձայների 14 «կողմ», 1 «դեմ» և 4 «ձեռնպահ» հարաբերակցությամբ: Կողմ էին քվեարկել Արգենտինան, Ֆրանսիան, ԱՄՆ-ն, Մեքսիկան, Հարավսլավիան, Չինաստանը, Ճապոնիան, Նիգերիան, Եթովպիան, Գանան, Հնդկաստանը, Բելգիան, Կանադան և Էկվադորը: Ձեռնպահ էին քվեարկել Հորդանանի, Կուբայի, Մարոկկոյի և Բանգլադեշի ներկայացուցիչները, ևս վեց երկրների մասնագետպատվիրակներ քվեարկությանը չմասնակցեցին: Դեմ քվեարկած ԽՍՀՄ ներկայացուցիչն իր դիրքորոշումը հիմնավորեց նրանով, որ իր կառավարությունը համաձայն չէ Ուայթեքերի զեկույցում տեղ գտած այն առաջարկների հետ, որոնց նպատակն է փոփոխություններ մտցնել ՄԱԿ-ի ցեղասպանության մասին կոնվենցիայի մեջ[21]: Կողմ քվեարկած ԱՄՆ-ի պատվիրակ Ջոն Քերին և Մեքսիկայի ու Բելգիայի պատվիրակները քվեարկություններից առաջ և նիստերի ընթացքում հայանպաստ դիրք էին գրավել:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի ենթահանձնաժողովում ձեռք բերված այս կարևոր հաջողության հիմքն այն էր, որ եթե 1970-ական թթ. 30-րդ պարբերության քննարկումներն ընթանում էին առանց հայերի գործուն մասնակցության, ապա թուրքական կառավարության ջանքերով այդ պարբերության տապալումը 1980-ական թթ. հանգեցրեց Սփյուռքի ներուժի համախմբմանն ու ավելի նպատակային պայքարին, ինչի շնորհիվ համասփյուռքյան միասնական ջանքերով հաջողվեց 30-րդ պարբերությունը վերահաստատել 24-րդ պարբերության տեսքով:

ԽՍՀՄ կազմալուծումից, Հայաստանի՝ միջազգային իրավունքի սուբյեկտ և ՄԱԿ-ի լիիրավ անդամ դառնալուց հետո հնարավորություն ընձեռվեց այդ կազմակերպության բարձր ամբիոնից տվյալ հարցի վերաբերյալ հնչեցնելու արդեն Հայաստանի պաշտոնական դիրքորոշումը: 1998 թ. սեպտեմբերի 25-ին Հայաստանի Հանրապետության նախագահ Ռ. Քոչարյանը ելույթ ունեցավ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 53-րդ նստաշրջանում և ՄԱԿ-ի բարձր ամբիոնից բարձրացրեց նաև Հայոց ցեղասպանության ընդունման և դատապարտման անհրաժեշտության հարցը: 1998 թ. դեկտեմբերի 2-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 53-րդ նստաշրջանը միաձայն ընդունեց «Ցեղասպանության կանխարգելման և պատժելիության կոնվենցիայի 50-ամյակի մասին» Հայաստանի և հինգ այլ երկրների ներկայացրած ցեղասպանության դատապարտման 53/43-րդ բանաձևը, որում երախտագիտություն էր հայտնվում բոլոր այն երկրներին, որոնք վավերացրել էին կոնվենցիան, առաջարկվում էր կոնվենցիային միանալ այն երկրներին, որոնք դեռ չէին արել դա: Կոչ էր արվում բոլոր երկրներին ընդլայնելու և ակտիվացնելու ջանքերը այդ դրույթների կատարման ուղղությամբ, ինչպես նաև շարունակելու կոնվենցիայի դրույթների ուսումնասիրումը՝ վեր հանելով դրանց իրագործման խոչընդոտներն ու նախանշելով դրանց հաղթահարման ուղիները ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակում[22]: Նույն օրը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում Կիպրոսի մշտական ներկայացուցիչը հանդես եկավ «Անկախ կատարման ժամկետից և զբաղեցրած դիրքից ծանր միջազգային հանցագործությունների մեջ մեղադրվող անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու մասին» զեկույցով: Դրանում ընդգծվում էր, որ 1915-

1923 թթ. Օսմանյան կայսրությունում 1.5 մլն հայերի կոտորածը ցեղասպանության օրինակ է, որի դեմ, ցավոք, ջանքեր են գործադրվում, որպեսզի այն չդիտարկվի իբրև տվյալ հանցագործության պատմական օրինակ: Կիպրոսի ներկայացուցիչը ակնհայտորեն ակնարկում էր ենթահանձնաժողովում Հայոց ցեղասպանության՝ իբրև տվյալ հանցագործության պատմական փաստի հիշատակման պատճառով միջազգային ծանր հանցագործություն համարվող ցեղասպանության մասին ՄԱԿ-ի 1948 թ. կոնվենցիան բարեփոխելու համար նախաձեռնված գործընթացի՝ Թուրքիայի կողմից տապալման քայլերը: Կիպրոսի ներկայացուցիչն իր ելույթում նշեց նաև, որ եկել է ցեղասպանություն հանցագործությունից տուժած ժողովրդի նկատմամբ արդարացի լինելու և նրա արժանապատվությունը պաշտպանելու ժամանակը, որ բոլոր երկրները միասնաբար հանդես գան ցեղասպանության համար մեղավոր պետությանը պատասխանատվության կանչելու հարցում: Բանախոսն ընդգծում էր, որ, հաշվի առնելով ոչ վաղ անցյալի պատմությունը, առաջ է եկել ցեղասպանության կոնվենցիայի գործադրման անհրաժեշտությունը[23]:

2001 թ. ապրիլի 25-ին Ժնևում ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի 57-րդ նստաշրջանը միաձայն ընդունեց Հայաստանի նախաձեռնությամբ ներկայացված՝ «Ցեղասպանություն հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի մասին բանաձևը, և, նկատի ունենալով այն տառապանքները, որոնք արդեն իսկ ցեղասպանությունը պատճառել է մարդկությանը, և այն, որ դեռևս կա ցեղասպանության կրկնության վտանգ, մեկ անգամ ևս շեշտվում է այդ կոնվենցիայի մնայուն նշանակությունը և կիրառման կարևորությունը, ինչպես նաև որոշվում է անդրադառնալ այդ հարցի քննարկմանը 2003 թ. կայանալիք 59-րդ նստաշրջանի ընթացքում:

2008 թ. մարտի 28-ին 58 պետությունների, այդ թվում՝ Հայաստանի նախաձեռնությամբ Ժնևում ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովն ընդունել է ևս մեկ բանաձև ցեղասպանության կանխարգելման վերաբերյալ, որը նպատակաուղղված էր քննարկելու ՄԱԿ-ի համակարգում ցեղասպանության վաղ կանխարգելման և նախազգուշացման ներդաշնակ մեխանիզմների մշակումը:

Միանգամայն բնական է, որ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում 53/43-րդ բանաձևի ընդունումից հետո՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ, Հայաստանը պետք է ակտիվացներ իր ջանքերը միջազգային այդ հեղինակավոր կառույցի կողմից ցեղասպանություն հանցագործության դատապարտման վերաբերյալ հերթական փաստաթղթի ընդունման ուղղությամբ: Նախ և առաջ 2015 թ. ապրիլի 15-ին «ՀՀ տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքում կատարվեց փոփոխություն, որով դեկտեմբերի 9-ը՝ «Ցեղասպանություն հանցագործության կանխարգելման ու դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի 1948 թ. կոնվենցիայի ընդունման օրը, հռչակվեց ցեղասպանությունների դատապարտման և հիշատակի օր: Հայաստանի այս նախաձեռնությունը հասավ իր տրամաբանական ավարտին, երբ սեպտեմբերի 11-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 69-րդ նստաշրջանի 103-րդ լիագումար նիստում կոնսենսուսով ընդունվեց Հայաստանի ներկայացրած բանաձևը, որով դեկտեմբերի 9-ը հռչակվեց ցեղասպանության զոհերի հիշատակի, արժանապատվության և այդ հանցագործության կանխարգելման միջազգային օր[24]: Հատկանշական է, որ Գլխավոր ասամբլեայում Թուրքիայի և Ադրբեջանի ներկայացուցիչները չհամարձակվեցին Հայաստանի նախաձեռնած բանաձևի դեմ որևէ քայլ ձեռնարկել, քանզի դրանով հենց իրենք կհաստատեին իրենց՝ ցեղասպանական պետություն լինելու փաստը:

Ամփոփելով նշենք, որ Հայոց ցեղասպանության դատապարտման և դրա հետևանքների հաղթահարման հարցերի բարձրացման ու պաշտպանության տեսանկյունից անհրաժեշտ է հետևողական աշխատանքներ տանել ՄԱԿ-ի մի շարք կառույցներում և ենթակառույցներում: Այսպես.

1. ՄԱԿ-ի միջազգային իրավունքների հանձնաժողովն ավելի քան կես դար աշխատում է միջազգային հանցագործությունների համար պետությունների պատասխանատվության նորմերի մշակման ուղղությամբ, և նրա ջանքերով 1996 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան արդեն իսկ ընդունել է առաջին փաստաթուղթը՝ 56/83-րդ բանաձևը, որում «միջազգային հանցագործություն» արտահայտության փոխարեն կիրառվել է «միջազգային հակահիրավական արարք» ձևակերպումը՝ փորձելով չքրեականացնել միջազգային իրավունքի նորմեր ստեղծող սուբյեկտներին՝ պետություններին: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Հայաստանը և Սփյուռքն իրենց համապատասխան կառույցներով պետք է ակտիվորեն աշխատեն ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի խորհրդի անդամ միջազգային իրավունքի ականավոր մասնագետների հետ, որպեսզի ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ապագայում ընդունվելիք բանաձևերում հնարավոր լինի ամրագրել մեզ համար բարենպաստ ձևակերպումներ:

2. 2001 թ. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1366-րդ բանաձևի համաձայն՝ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին կից ստեղծվել է ցեղասպանության կանխարգելման հարցերով զբաղվող հատուկ խորհրդականի գրասենյակ: Հատուկ խորհրդականի իրավասությունների շրջանակներում են հետևյալ գործառույթները՝

ա) իրազեկվածության բարձրացում և ցեղասպանության կանխարգելման մասին գիտելիքների տարածում, ինչը ՄԱԿ-ին հնարավորություն կտա վերլուծելու և վերահսկելու ցեղասպանության վերաբերյալ տեղեկատվությունը, որպեսզի ՄԱԿ-ի համակարգը և միջազգային հանրությունը համատեղ գործեն ցեղասպանության կանխարգելման հարցում,

բ) տեղեկությունների հավաքում էթնիկ, ռասայական բնույթի զանգվածային կոպիտ խախտումների վերաբերյալ, որոնք չկանխարգելելու դեպքում

կարող են վերածվել ցեղասպանության: Բացի այդ՝ հատուկ խորհրդականի գրասենյակը գլխավոր քարտուղարի միջոցով Անվտանգության խորհրդին պետք է ներկայացնի նման իրավիճակներում գործողությունների մեխանիզմների ծրագրեր[25]:

Նման նեղ մասնագիտացված կառույցի գոյությունը ՄԱԿ-ում չափազանց կարևոր է ցեղասպանության ենթարկված ժողովրդի շահերն ու իրավունքները ներկայացնելու և պաշտպանելու համար, և Հայաստանը պետք է ակտիվորեն համագործակցի ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին կից գործող այս գրասենյակի հետ՝ ներկայացնելով Հայոց ցեղասպանության վերաբերյալ փաստական նյութեր, ընդգծելով, որ այդ օրինակը տվյալ հանցագործության մյուս բոլոր դեպքերի համար նախադեպ է, և նաև այն պատշաճ ձևով չդատապարտելն է, որ հանգեցրել է դրա կրկնություններին: Պետք է անընդհատ շեշտվի, որ Հայոց ցեղասպանության պաշտոնական և վերջնական դատապարտումը ՄԱԿ-ի կողմից լուրջ քայլ կլինի այդ հանցագործության կանխարգելման գործընթացում, քանզի անհնար է կանխարգելել այն հանցագործությունը, որի առաջին օրինակը դեռևս մնում է անպատիժ:

3. ՄԱԿ-ի վերը նշված ենթակառույցների հետ տարվող արդյունավետ աշխատանքը պետք է զարգացնել և հասնել նրան, որ Հայոց ցեղասպանության դատապարտման ու դրա հետևանքների հաղթահարման հարցը դառնա Գլխավոր ասամբլեայի և Անվտանգության խորհրդի քննարկման առարկա, և տվյալ հարցի նկատմամբ որդեգրվի հստակ դիրքորոշում:

4. ՄԱԿ-ի շրջանակներում Հայոց ցեղասպանության դատապարտման և դրա հետևանքների (մասնավորապես՝ հայրենազրկման) հաղթահարման ուղղությամբ տարվող աշխատանքներում անհրաժեշտ է հիմնվել այդ միջազգային կառույցի հովանավորությամբ 1976 թ. հուլիսի 4-ին Ալժիրում կայացած ազգային ազատագրական շարժումների կոնֆերանսում ընդունված «Ժողովուրդների իրավունքների միջազգային հռչակագրի» համապատասխան հոդվածների վրա: Հռչակագրի 3-րդ հոդվածում ամրագրված է, որ յուրաքանչյուր ժողովուրդ իր սեփական տարածքի պաշտպանության, ինչպես նաև արտաքսվելու դեպքում այնտեղ վերադառնալու իրավունք ունի, իսկ 4-րդ հոդվածի համաձայն՝ ոչ մի ժողովուրդ իր ազգային կամ մշակութային պատկանելության պատճառով չի կարող ենթարկվել ոչնչացման, հալածանքների, հետապնդումների, աքսորի և տեղահանության կամ դրվել այնպիսի պայմանների մեջ, որոնցով վտանգվում են նրա ինքնությունը կամ ամբողջականությունը: Փաստաթղթի 23-րդ հոդվածն արձանագրում է, որ ժողովուրդների իրավունքներին հասցված վնասները պետք է ամբողջովին հատուցվեն դրանք հասցնողի կողմից, իսկ 30-րդ հոդվածով որևէ ժողովրդի խախտված հիմնական իրավունքների վերականգնման պարտավորությունը դրվում է միջազգային հանրության անդամ պետությունների վրա[2]: Կարծում ենք, հիմնվելով ալժիրյան հռչակագրի նշված հոդվածների վրա, հնարավոր կլինի համախոհներ գտնել ՄԱԿ-ի անդամ պետությունների շարքում և դյուրացնել ցեղասպանության հետևանքով բռնազավթված հայրենիքի մեծ մասի՝ Արևմտյան Հայաստանի նկատմամբ տեղաբնիկ հայ ժողովրդի իրավունքի վերականգնման ուղղությամբ տարվելիք աշխատանքները:

5. Հայաստանը պետք է փորձի զարգացնել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում ձեռք բերված հաջողությունները և վերջինիս ուշադրությունը հրավիրի այն փաստի վրա, որ իր հարևան Թուրքիան Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականությամբ թե՛ ազգային, թե՛ միջազգային մակարդակներում լուրջ խոչընդոտներ է հարուցում ցեղասպանության մասին կոնվենցիայի դրույթների կիրառման ճանապարհին՝ այդ հանցագործության դատապարտման ու կանխարգելման տեսանկյունից: ■

Օգտագործուած աղբիւրներ

1. Տե՛ս «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества: Документы и комментарий», сост., отв. редактор, автор предисловия и комментария д.и.н., профессор Ю. Г. Барсегов, т. 2, ч. 1, М., 2003, էջ 651:
2. Տե՛ս նույն տեղում, էջ 652:
3. Տե՛ս նույն տեղում:
4. Տե՛ս Արման Գասպար, Հայ ազատագրական պայքարն ու ահաբեկչութիւնը, Լոս Անճելըս, 1989, էջ 142:
5. «Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը (1984-1987 թթ.)», կազմող և առաջաբանի հեղինակ՝ Լ. Ա. Բարսեղյան, Եր., 1998, էջ 5:
6. Տե՛ս Արման Գասպար, նշվ. աշխ., էջ 142:
7. Տե՛ս «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества», т. 2, ч. 1, էջ 694:
8. Տե՛ս Մսըրլեան Ջ., Ձանքեր՝ ՄԱԿ-ի 30-րդ պարբերութեան վերահաստատման ուղղութեամբ, «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրութ, 2012, h. ԼԲ, էջ 432:
9. Տե՛ս «Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը (1984-1987 թթ.)», էջ 5:
10. Տե՛ս «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества», т. 2, ч. 1, էջ 766:
11. Տե՛ս նույն տեղում, էջ 529:
12. Տե՛ս նույն տեղում, էջ 766:
13. Տե՛ս «Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը (1984-1987 թթ.)», էջ 33:
14. Տե՛ս «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества», т. 2, ч. 1, էջ 694:
15. Տե՛ս նույն տեղում, т. 2, ч. 2, М., 2005, էջ 82:
16. Տե՛ս նույն տեղում, т. 2, ч. 1, էջ 665-666:
17. Մսըրլեան Ջ., նշվ. աշխ., էջ 461-462:
18. Տե՛ս «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества», т. 2, ч. 1, էջ 666:
19. Տե՛ս Մսըրլեան Ջ., նշվ. աշխ., էջ 462:
20. Տե՛ս նույն տեղում, էջ 463:
21. Տե՛ս նույն տեղում, էջ 462:
22. Տե՛ս http// www.zakon2.rada.gov.ua/laws/show/995_633 (մուտք՝ 28.11.2022):
23. Տե՛ս «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества», т. 2, ч. 2, էջ 560:
24. Տե՛ս Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատարների՝ Թուրքիայի հետ հարաբերությունների համատեքստում, Եր., «Տիր» հրատ., 2015, էջ 206:
25. Տե՛ս http:/www.un.org/en/preventgenocide/adviser/index.shtml (մուտք՝ 28.11.2022):
26. Տե՛ս Տէրտէրեան Գ., Մեր հողային պահանջատիրութիւնը միջազգային հանրային իրավունքին մէջ (Տարագիր Արեւմտահայութեան Համասփիւռքեան Քոնկրէսին ՏԱՀՔ-ի Հրամայականը), Բ. տպագրութիւն, Պէյրութ, 2016, էջ 90-91:

Եվրոպական միություն (Հոդված 1)

Արփի Աբրահամյան
ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության վարչության անդամ, քաղաքագիտության և ազգային անվտանգության հարցերի մասնագետ

20-րդ դարասկզբին տեղի ունեցած երկու համաշխարհային պատերազմները նյութական և բարոյական մեծ վնաս պատճառեցին համաշխարհային տնտեսությանն ու քաղաքակրթությանը:

Մարդկությունը ձգտում էր եզրակացություններ անելու պատմության դաժան դասերից և ելքեր գտնելու պատերազմի հետևանք բազմաթիվ ճգնաժամերից:

Արևմտաեվրոպական առաջատար տերությունները որոնում էին հետպատերազմյան աշխարհում ինքնահաստատվելու նորանոր ուղիներ: Հատկանշական է, որ եվրոպական պետությունները հզոր և ահեղ հակառակորդներից պաշտպանվելու հնարավորությունը տեսնում էին միավորման մեջ:

Երկրորդ աշխարհամարտը աշխարհը բաժանեց մեծ տերությունների միջև, ձևավորվեցին ազդեցության նոր գոտիներ ու ոլորտներ: Սոցիալ-տնտեսական, քաղաքական և գաղափարական երկու տարբեր համակարգերի (խորհրդային և կապիտալիստական) հակադրման պայմաններում այդ ամենը վերածվում է դաշինքների միջև ահեղ հակամարտության, որն ստանում է Սառը պատերազմ անվանումը:

Սառը պատերազմի հետևանքով ինտեգրացման գործընթացները զարգանում են երկու հակադիր դաշինքների ներգործության հիման վրա, մայրցամաքի արևմուտքում հետպատերազմյան տարիներին առաջին անգամ ձևավորվում են ռազմաքաղաքական և մարդասիրական (հումանիտար) համագործակցության կազմակերպություններ, որոնց թվում էին 1947 թ. Բրյուսելյան դաշնագրի հիման վրա կազմավորված Արևմտաեվրոպական միությունը, 1949 թ. ստեղծված Եվրոպայի խորհուրդը՝ որպես մարդասիրական համագործակցության կազմակերպություն:

Միացյալ Նահանգների սատարումը (հիմք ընդունելով «խորհրդային սպառնալիքի» գոյությունը) բարենպաստ պայմաններ է ստեղծում «եվրոպական գաղափարի» գործնականացման համար: ԱՄՆ-ի հովանավորությամբ ստեղծվում են Եվրոպական վճարային միությունը և Տնտեսական համագործակցության եվրոպական կազմակերպությունը, որը հետագայում վերակազմավորվում է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ)[1]: 1948 թ. Հաագայում տեղի ունեցած արևմտաեվրոպական հասարակայնության վեհաժողովում ծրնունդ է առնում ազդեցիկ Եվրոպական շարժումը: 1949 թ. ստեղծվում է Եվրոպայի խորհուրդը՝ օժտված լայն, թեև փոքր-ինչ անորոշ լիազորություններով: 1948 թ. Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և Բենիլյուքսի երկրները հիմնում են Արևմտաեվրոպական միությունը:

Արևմտաեվրոպական պետությունների զգալի մասը ստորագրում է ռազմաքաղաքական դաշինքի ստեղծումը ձևակերպող հյուսիսատլանտյան ակտը, որի նպատակն էր «արևելյան դաշինքին» և նրանից բխող պոտենցիալ ռազմական սպառնալիքին հակազդելը[2]:

Միացյալ Նահանգների նախաձեռնությամբ ընտրվում է Արևմտյան Եվրոպայի անվտանգության հիմնախնդրի լուծման սկզբունքորեն այլ ուղի. ստեղծվում է Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպությունը (ՆԱՏՕ), որի կազմի մեջ է մտնում նաև Արևմտյան Գերմանիան՝ այդ ժամանակ որպես նոր պետություն ձևավորված Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը:

Այսպիսով՝ քաղաքական, տնտեսական և ռազմական ոլորտներում գրեթե միաժամանակ ստեղծվում են համաեվրոպական կազմակերպություններ:

Եվրոպայի պարագայում առաջնահերթ գերխնդիրներ դիտվեցին տարածաշրջանում խաղաղության պահպանումն ու ամրապնդումը, որոնցով էր առաջին հերթին պայմանավորված Արևմտյան Եվրոպայի հետպատերազմյան քայքայված տնտեսության վերականգնումն ու կայուն զարգացումը, իսկ դրան հասնելու միջոցը եվրոպական պետությունների միջև առողջ քաղաքական և տնտեսական համագործակցությունն էր, որի տրամաբանական զարգացման հետևանքով առաջացան ինտեգրացման առանձին ոլորտներ:

Հասարակարգային զարգացումները հիմնարար նախադրյալներ ստեղծեցին դեռևս հեռավոր անցյալում սկզբնավորված Եվրոպայի միավորման գաղափարի կենսագործման համար:

Եվրոպական միության իրավունքը սկիզբ է առել և զարգացել 1951 թ. Եվրոպական ածխի և պողպատի ընկերակցության ինտեգրացիոն կազմավորման, 1957 թ. Եվրոպական տնտեսական ընկերակցության և Եվրոպական ատոմային էներգիայի ընկերակցության ինտեգրացիոն կազմավորումների ստեղծումով:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից մի քանի տարի անց տարաձայնություններ են առաջանում Գերմանիայի նախկին տարածքում նորաստեղծ պետություն հանդիսացող Արևմտյան Գերմանիայի և Ֆրանսիայի միջև Ռուրի և Սաարի ածխահանքերի առնչությամբ: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո այդ ածխահանքերը վերցվում են Գերմանիայից և հանձնվում Ֆրանսիայի վերահսկողությանը: Քանի որ դրանք ռազմական արդյունաբերության կարևորագույն աղբյուրներ էին, Արևմտյան Գերմանիան ամեն կերպ ցանկանում էր վերականգնել իր նախկին իշխանությունը դրանց նկատմամբ: Արևմտյան Գերմանիայի և Ֆրանսիայի միջև տարաձայնությունները մեղմելու և նոր ռազմական բախումները կանխելու նպատակով Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ռոբերտ Շումանը 1950 թ. մայիսի 9-ին առաջարկում է ստեղծել վերպետական հատկանիշներով մի ինտեգրացիոն կազմավորում և այդ ածխահանքերի կառավարումը հանձնել տվյալ ինտեգրացիոն կազմավորմանը: Շումանի պլանն ավելի խոր համագործակցություն էր ենթադրում, որը կյանքի է կոչվում 1951 թ. ապրիլի 18-ին կնքված Փարիզի համաձայնագրով (ուժի մեջ է մտնում 1952 թ. 50 տարի ժամկետով): Այդ համաձայնագրով հիմնադիր 6 երկրները՝ Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան, Նիդեռլանդները, Բելգիան և Լյուքսեմբուրգը, ստեղծում են Ածխի և պողպատի եվրոպական համայնքը՝ ԱՊԵՀ, որի նպատակն է դառնում համընդհանուր կառավարման ներքո կազմակերպել անդամ երկրներում ածխի և պողպատի արտադրությունը, հատկապես՝ ռազմական արդյունաբերության ոլորտում, որպեսզի կանխվի անդամ երկրներից մեկի կողմից զենքի օգտագործումը մյուսի դեմ: Մեծ Բրիտանիան հրաժարվում է անդամակցել այդ ինտեգրացիոն կազմավորմանը, քանի որ նա դեմ էր վերպետական բնույթի համագործակցությանը և չէր ցանկանում զիջել իր ինքնիշխանությունը:

Մեծ Բրիտանիայի ջանքերով է 1949 թ. ստեղծվում միջկառավարական համագործակցության վրա հիմնված ինքնուրույն միջազգային կազմակերպություն հանդիսացող Եվրոպայի խորհուրդը, որի գլխավոր նպատակներն էին անդամ պետություններում մարդու իրավունքների պաշտպանությունը, ժողովրդավարության տարածումը, իրավունքի գերակայության ապահովումը:

«Եվրոպական ածխի և պողպատի ընկերակցության հիմնադրման մասին» պայմանագրով 6 անդամ պետությունների միջև ստեղծվում է ածխի և պողպատի ընդհանուր շուկա: Այդ պայմանագիրը կնքվում է 50 տարի ժամկետով, և 2002 թ. հուլիսի 23-ին դրա գործողությունը դադարում է[3]:

1957 թ. մարտի 25-ին կնքվում են Հռոմի համաձայնագրերը, որոնցով պայմանավորված՝ ստեղծվում են Եվրոպական տնտեսական համայնքը (ԵՏՀ) և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքը (Եվրատոմ)՝ խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի օգտագործման համար:

Ատոմային էներգիան առանձնացվում է ընդհանուր տնտեսությունից որպես համագործակցության առանձին ոլորտ, և դրա համար ստեղծվում է ինքնուրույն ինտեգրացիոն կազմավորում այն պարզ պատճառով, որ այն մեծ կարևորություն էր ներկայացնում, և այս ոլորտում անհրաժեշտ էր համագործակցությունը կարգավորել առանձին ձևաչափով:

1967 թ. հուլիսին հիշյալ երեք կազմակերպությունները (ԵՏՀ, ԱՊԵՀ, Եվրատոմ) միաձուլվում են՝ ստեղծելով Եվրոպական համայնքը (ԵՀ):

Ինտեգրացիոն գործընթացների զարգացման ուղղությամբ կատարված հաջորդ քայլը 1966 թ. անդամ պետությունների միջև լյուքսեմբուրգյան համաձայնագրի կնքումն էր:

1970-ական թվականներից սկսվում է Եվրոպական միության ընդլայնումը: Այսպես՝ 1973 թ. հունվարի 1-ին Դանիան, Իռլանդիան և Միացյալ Թագավորությունը պաշտոնապես անդամակցում են Եվրոպական միությանը:

1974 թ. դեկտեմբերի 10-ին ԵՄ առաջնորդները ստեղծում են Եվրոպական տարածաշրջանային զարգացման հիմնադրամը, որի նպատակն է Եվրոպական միության հարուստ շրջաններից գումար փոխանցել աղքատ շրջաններին՝ ճանապարհները և հաղորդակցության ուղիները վերանորոգելու, ներդրումներ ապահովելու և նոր աշխատատեղեր ստեղծելու համար, հրատապ են դառնում տարածաշրջանային աջակցության ծրագրերը:

1986 թ. փետրվարին ստորագրվում և 1987 թ. հուլիսի 1-ից ուժի մեջ է մտնում միասնական եվրոպական ակտը, որով ամրագրվում է մինչև 1993 թ. հունվարի 1-ը եվրոպական միասնական շուկա ստեղծելու գաղափարը: Միասնական եվրոպական ակտը եվրոպական ընկերակցությունների ստեղծումից հետո հիմնադիր փաստաթղթերում արմատական փոփոխություններ և լրացումներ կատարող առաջին փաստաթուղթն էր:

Սակայն կնքված համաձայնագրերը ամբողջությամբ չեն հարթում անդամ պետությունների տարաձայնու-

թյունները: Նրանց անհրաժեշտ էր մի նոր իրավական հիմք՝ համայնքների ինստիտուցիոնալ և իրավական համակարգերի լուրջ բարեփոխումների համար: 1990 թ. սկզբին Գերմանիայի և Ֆրանսիայի առաջնորդները հանդես են գալիս նոր նախաձեռնությամբ՝ գտնելու իրենց գործունեության ակտիվացմանը նպաստող նոր ուղիներ, ընդ որում՝ ոչ միայն տնտեսության, այլև արտաքին քաղաքականության և եվրոպական անվտանգության ոլորտներում: 1991 թ. դեկտեմբերին պետությունների կառավարությունների ղեկավարները հավանություն են տալիս այս առաջարկություններին և 1992 թ. փետրվարի 7-ին Մաաստրիխտ քաղաքում (քաղաք Նիդեռլանդներում) ստորագրում պայմանագիր, որն ուժի մեջ է մտնում միայն 1993 թ. նոյեմբերի 1-ին[4]:

Մաաստրիխտի պայմանագրի պաշտոնական անվանումն է «Եվրոպական միության մասին պայմանագիր»: Այս պայմանագրի կնքումը արմատական քայլ էր ինտեգրացիոն գործընթացների խորացման համատեքստում, քանի որ այն անդամ պետությունների համագործակցությունը տեղափոխում էր լիովին նոր հարթություն: Ըստ Մաաստրիխտի պայմանագրի, որ Եվրոպական միության հիմնաքարն է, ստեղծվում է նոր ինտեգրացիոն կազմավորում, որն անվանվում է Եվրոպական միություն, ձևավորվում են անդամ պետությունների միջկառավարական համագործակցության ոլորտները, սահմանվում են տնտեսական և արժութային միության ստեղծման իրավական հիմքերը, Եվրոպական տնտեսական ընկերակցությունը վերանվանվում է Եվրոպական ընկերակցություն, հիմնադրվում են Եվրոպական միության քաղաքացիության ինստիտուտը և Եվրոպական կենտրոնական բանկը, ստեղծվում է Եվրոպական միության մարդու իրավունքների պաշտպանի հաստիքը, ընդլայնվում են ԵՄ նպատակները՝ ընդգրկելով շրջակա միջավայրի պաշտպանության, սոցիալական պաշտպանության, արժութային միության ստեղծման ոլորտները, ամրագրվում է Եվրոպական միության՝ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության պարտականությունը[5]:

Այսպիսով՝ Մաաստրիխտի պայմանագիրը սկզբունքորեն նոր կազմակերպության հիմնադրման մասին փաստաթուղթ է:

Մաաստրիխտի համաձայնագրի շրջանակներում «Եվրոպական համայնք» անվանումը պաշտոնապես փոխարինվում է «Եվրոպական միություն» (ԵՄ) անվամբ: 1993 թ. հունվարի 1-ին այդ պայմանագրով միասնական շուկան և նրա չորս բաղադրիչների՝ ապրանքների, ծառայությունների, անձանց և կապիտալի ազատ տեղաշարժը դառնում են իրականություն:

1992 թ. Եվրոպական միությունը որոշում է Եվրոպական արժութային միության (European Monetary Union) ստեղծման մասին[6], ինչը ենթադրում է մեկ միասնական եվրոպական արժույթի ներմուծումը Եվրոպական կենտրոնական բանկի կառավարման ներքո:

1995 թ. հունվարի 1-ին Ավստրիան, Ֆինլանդիան և Շվեդիան անդամակցում են Եվրոպական միությանը: 1990-ական թթ. կեսերին նախկին սոցիալիստական ճամբարի երկրները՝ Բուլղարիան, Չեխիան, Հունգարիան, Լեհաստանը, Ռումինիան և Սլովակիան, մերձբալթյան երեք երկրները՝ նախկին Խորհրդային Միության հանրապետություններ Էստոնիան, Լատվիան և Լիտվան, նախկին Հարավսլավիայի Հանրապետությունից Սլովենիան և երկու միջերկրածովյան երկրներ՝ Կիպրոսը և Մալթան, նույնպես ցանկություն են հայտնում անդամակցելու Եվրոպական համայնքին: Ապագա անդամակցության շուրջ բանակցությունները սկսվում են 1997 թ. դեկտեմբերին:

1995 թ. մարտի 26-ին ԵՄ անդամ 7 երկրների միջև՝ Բելգիա, Գերմանիա, Իսպանիա, Ֆրանսիա, Լյուքսեմբուրգ, Նիդեռլանդներ և Պորտուգալիա, կնքվում է Շենգենյան համաձայնագիրը, որի նպատակը այդ երկրների սահմաններում առանց անձնագրի ճանապարհորդելն է: Շենգենյան համաձայնագրին են միացել Եվրոպական միության 25 անդամ երկրներ[7]:

Եվրոպական միության մասին պայմանագրից հետո Ամստերդամի պայմանագրի[8] կնքումը եվրոպական իրավունքի զարգացման հաջորդ փուլն էր: Եվրոպական միության անդամ երկրների ղեկավարների մասնակցությամբ կայացած միջկառավարական կոնֆերանսում ընդունվում է Ամստերդամի համաձայնագիրը (1997 թ. հոկտեմբերի 2-ին անդամ պետությունները ստորագրում են Ամստերդամի պայմանագիրը, որն ուժի մեջ է մտնում 1999 թ. մայիսի 1-ին), որը բարեփոխում է Մաաստրիխտի պայմանագիրը և Եվրոպական միության հիմնադրման մի շարք այլ փաստաթղթեր:

Ամստերդամի համաձայնագիրը պարունակում է համայնքների և միության շրջանակներում անդամ

պետությունների համագործակցության խորացմանն ու ընդլայնմանն ուղղված սկզբունքորեն կարևոր դրույթներ և բարելավում է ընդհանուր արտաքին քաղաքականության և անվտանգության ոլորտներում ստեղծված իրավիճակը: Սակայն Ամստերդամի պայմանագրում չկարգավորված ինստիտուցիոնալ սկզբունքներ կային, որոնց կարգավորման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ 2001 թ. փետրվարի 26-ին ստորագրվում է Նիցցայի պայմանագիրը[9] և ուժի մեջ մտնում 2003 թ. սկզբից:

2004 թ. հոկտեմբերի 29-ին Եվրոպական միության 25 անդամ երկրները ստորագրում են եվրոպական սահմանադրության մասին համաձայնագիրը, որը նախքան ուժի մեջ մտնելը պետք է վավերացվեր բոլոր 25 անդամ երկրների կողմից: 2005 թ. անցկացված հանրաքվեների ժամանակ ինչպես Ֆրանսիայում, այնպես էլ Նիդեռլանդներում քաղաքացիները դեմ են քվեարկում այդ սահմանադրությանը: Եվրոպական միության ղեկավարները հայտարարում են հիշյալ բանակցությունների ժամանակավոր դադարի մասին:

2007 թ. հունիսի 21-ին Եվրոպական խորհրդի անդամները հանդիպում են Բրյուսելում, որպեսզի համաձայնության գան նոր համաձայնագրի շուրջ, որը պետք է փոխարիներ մերժված սահմանադրությանը: Այդ պայմանագիրը ստորագրվում է 2007 թ. դեկտեմբերի 13-ին Պորտուգալիայի Լիսաբոն քաղաքում: Ուժի մեջ մտնելով 2009 թ. դեկտեմբերի 1-ին՝ Լիսաբոնի պայմանագիրը[10] անդամ պետությունների համագործակցությունը բարձրացնում է նոր իրավաքաղաքական հարթություն:

Լիսաբոնի պայմանագիրը եղել է ինտեգրացիոն գործընթացների խորացման և եվրոպական իրավունքի զարգացման վերջին փուլը: Այն եկավ փոխարինելու Եվրոպական միության 2004 թ. սահմանադրության նախագծին, որի ընդունման գործընթացը 2005 թ. տապալվեց Ֆրանսիայում և Նիդեռլանդներում անցկացված հանրաքվեներում բավարար ձայներ չհավաքելու պատճառով: Լիսաբոնյան համաձայնագիրը սահմանում է Եվրոպական միության՝ խաղաղության, ժողովրդավարության, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի, արդարության, հավասարության, օրենքի գերակայության ու կայունության ապահովման նպատակն ու արժեքները: Ցանկացած եվրոպական երկիր, որը հարգում է ազատության, ժողովրդավարության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, օրենքի գերակայության սկզբունքները, կարող է հավակնել դառնալու Եվրոպական միության անդամ:

1993 թ. Կոպենհագենում Եվրոպական միության խորհուրդն ամրագրում է անդամակցության գործընթացի հիմքը՝ հայտարարելով, որ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները, որոնք ցանկանում են դառնալ Եվրոպական միության անդամ, կստանան այդ հնարավորությունը, եթե պահպանում են անդամակցության նախապայմաններ սահմանված կոպենհագենյան հետևյալ չափանիշները՝

1. ժողովրդավարության, օրենքի գերակայության, մարդու իրավունքների պաշտպանության երաշխավոր հաստատությունների կայունություն (քաղաքական չափանիշներ),

2. շուկայական տնտեսության առկայություն, ինչպես նաև կարողություն՝ դիմակայելու մրցակցության ճնշմանը և շուկայի ուժերին միության ներսում (տնտեսական չափանիշներ),

3. անդամակցության պարտավորությունների ըստանձնման կարողություն, ներառյալ քաղաքական, տնտեսական և արժութային միության նպատակների իրականացումը:

Վավերացման գործընթացի ավարտից հետո՝ ծրագրված ժամկետում, պայմանագիրը մտնում է ուժի մեջ, և ասոցացված տվյալ պետությունը դառնում է անդամ պետություն[11]:

Եվրամիության և գործընկեր երկրների միջև երկկողմանի հարաբերությունների պաշտոնականացումը կատարվում է գործընկերության և համագործակցության համաձայնագրերի միջոցով: ԳՀՀ-ն բազմաբնույթ համաձայնագիր է, որում ներգրավված են 17 կողմեր՝ մի կողմից՝ գործընկեր երկիրը և մյուս կողմից՝ համայնքը՝ որպես միջազգային իրավական մարմին, և 15 անդամ պետությունները: ԳՀՀ-ն ստորագրվում է համայնքի և վավերացվում յուրաքանչյուր անդամ պետության կողմից՝ իր ազգային օրենսդրության պահանջներին համապատասխան:

ԳՀՀ-ները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների սկզբունքների վրա հիմնված իրավական դրույթներ, որոնք սահմանում են ԵՄ-ի և գործընկեր երկրների քաղաքական, տնտեսական և առևտրային հարաբերությունները: Յուրաքանչյուր ԳՀՀ տասնամյա երկկողմանի համաձայնագիր է, որը ստորագրվում և վավերացվում է ԵՄ-ի և տվյալ պետության կողմից[12]:

ԳՀՀ-ն սահմանում է համագործակցության լայն բնագավառներ քաղաքական երկխոսության, առևտրի, ներդրումների, տնտեսական, օրենսդրական և մշակութային համագործակցության ոլորտներում: Այդ երկխոսությունը կառուցվում է միջազգային խաղաղության և անվտանգության, ինչպես նաև վեճերի խաղաղ կարգավորմանը նպաստելու միացյալ պարտավորությունների վրա: ԳՀՀ-ն ընդգրկում է համագործակցության բոլոր ոլորտները՝ բացի պաշտպանությունից:

ԳՀՀ-ով նախատեսվում էր ստեղծել հետևյալ ինստիտուտները՝ խորհուրդը, կոմիտեն և խորհրդարանական կոմիտեն, որոնք հիմնվում են 1999 թ. հուլիսի 1-ին ԳՀՀ-ի ուժի մեջ մտնելուց հետո[13]:

2004 թ. մայիսին ԵՄ ընդլայնման հետևանքով փոխվում են Եվրոպական միության արտաքին սահմանները, ԵՄ-ն ձեռք է բերում սահմանակից նոր հարևան երկրներ, որից ԵՄ-ի համար բխում են նոր հնարավորություններ և մարտահրավերներ:

Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ/ENP) նպատակն է դառնում 2004 թ. ԵՄ ընդլայնման օգուտներից հարևան երկրներին բաժին հանելը՝ բոլոր շահագրգիռ կողմերի համար

կայունության ու անվտանգության ամրապնդման և բարեկեցության ապահովման նպատակով: ԵՀՔ նպատակն է աջակցել 2003 թ. դեկտեմբերի եվրոպական անվտանգության ռազմավարությամբ սահմանված ԵՄ ռազմավարական նպատակներին՝ ԵՄ հարևանությամբ անվտանգության ապահովմանը:

2004 թ. մայիսի 12-ին եվրոպական հանձնաժողովը ներկայացնում է երկրի հաշվետվությունները և ռազմավարական փաստաթուղթ, որով սահմանվում են ԵՀՔ-ի իրականացման սկզբունքները, աշխարհագրական սահմանները, մեթոդաբանությունը և տարածաշրջանային համագործակցությանն առնչվող խնդիրները: Այս փաստաթուղթը պարզաբանում է նաև ԵՀՔ-ի իրականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման ուղիները, սահմանում համագործակցության զարգացման ձևերն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են տնտեսական ու սոցիալական զարգացումը, առևտուրը և էներգետիկան:

Հիմնվելով ռազմավարական փաստաթղթի վրա՝ 2004 թ. դեկտեմբերի 9-ին հանձնաժողովը ներկայացնում է գործընկեր երկրների հետ գործողությունների ծրագրերի առաջին փաթեթը, որում սահմանված են այն գերակայությունները, որոնք վերաբերում են առանցքային ոլորտներին՝ քաղաքական երկխոսություն և բարեփոխումներ, առևտուր և ԵՄ ներքին շուկայում մասնաբաժին ձեռք բերելու համար գործընկերներին նախապատրաստելու միջոցառումներ, արդարադատություն և ներքին գործեր, էներգետիկայի ոլորտ, տրանսպորտ, տեղեկատվական համակարգեր, բնապահպանություն, գիտահետազոտական աշխատանքներ և նորարարություն, սոցիալական քաղաքականություն և անձնական շփումներ:

Երկրի հաշվետվությունները ներկայացնում են երկկողմանի համաձայնագրերի և համապատասխան բարեփոխումների իրականացման արդյունքները, նկարագրում քաղաքական, տնտեսական, սոցիալական իրավիճակն այդ երկրներում և կենտրոնանում Եվրոպական հարևանության քաղաքականության գերակա ոլորտների վրա՝ սահմանելով մեկնարկային կետ համատեղ գործողությունների ծրագրերի մշակման համար: Հարևանության ծրագրերի արդյունավետ իրականացման և համակարգման համար անհրաժեշտ էր ԵՄ-ում և գործընկեր երկրներում ստեղծել նոր գործառնական կառույցներ՝ ներքին ֆինանսավորման, արտաքին ֆինանսավորման և համատեղ կառավարման[14]:

2009 թ. մայիսի 7-ին Պրահայում կայացած Եվրոպական միության 27 և Արևելյան գործընկերության 6 երկրների ու կառավարության ղեկավարների գագաթնաժողովն ընդունում է Արևելյան գործընկերության (ԱԳ) վերաբերյալ համատեղ հռչակագիրը, որով առավել սերտ համագործակցության ու նոր նախաձեռնությունների իրականացման սկիզբ է դրվում: Արևելյան գործընկերության նպատակն է դառնում ընդլայնել համագործակցությունը Եվրոպական միության 27 անդամ երկրների և նախկին ԽՍՀՄ 6 պետությունների՝ Հայաստանի, Վրաստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Մոլդովայի և Ադրբեջանի միջև:

Արևելյան գործընկերության շրջանակներում բազմակողմ համագործակցությունն իրականացվում է 12 փորձագիտական աշխատանքային խմբերի միջոցով 4 տարբեր թեմատիկ պլատֆորմներում՝

1. ժողովրդավարություն, արդյունավետ կառավարում և կայունություն,
2. տնտեսական ինտեգրում և համապատասխանեցում ԵՄ քաղաքականությանը,
3. էներգետիկ անվտանգություն,
4. մարդկանց միջև շփումներ[15]:

Արևելյան գործընկերությունը նախատեսում է ավելի սերտ քաղաքական ասոցացում և տնտեսական ինտեգրում Եվրոպական միության հետ՝ հատկապես խթանելով շարժունակությունը, էներգետիկ անվտանգությունը, տրանսպորտի ոլորտը, գյուղատնտեսությունը, բնապահպանության շուրջ համագործակցությունն ու մերձեցման քաղաքականությունը: Ասոցացման համաձայնագրի նպատակն է խորացնել Եվրոպական միության հետ գործընկեր երկրների քաղաքական ասոցացումը և խթանել տնտեսական ինտեգրումը: Ինչպես Եվրոպական հարևանության քաղաքականության, այնպես էլ Արևելյան գործընկերության ծրագրերի նպատակն է գործընկեր երկրներին մերձեցնել ու ինտեգրել Եվրոպական միությանն ու նրա արժեքներին:

ԵՄ կարևոր առաքելությունը իր ստեղծման պահից եղել է ինտեգրման քաղաքականության իրականացումը՝ պահպանելով խաղաղության, ազատության, ժողովրդավարության և օրենքի գերակայության, հանդուրժողականության և համերաշխության սկզբունքները:

ԵՄ-ն հանդես է գալիս աջակցության մի շարք ծրագրերով, ֆինանսավորում քաղաքացիական հասարակության նորարարական նախաձեռնությունները (այդ թվում՝ երիտասարդական, բնապահպանական, կրթական և առողջապահական մի շարք նախաձեռնություններ) իրականացնող սոցիալական ձեռնարկություններին, համայնքային և նախաձեռնող խմբերին:

Ներկայիս աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական գործընթացները անմիջական ազդեցություն ունեն Եվրոպայի անվտանգային միջավայրի վրա, ի հայտ են գալիս նոր սպառնալիքներ, ինչպես նաև այլ գործոններ, այդ թվում՝ ժողովրդագրական միտումները, անօրինական միգրացիան, քաղաքական անկայունությունը (ԵՄ երկրներում՝ ցույցեր[16]), ահաբեկչությունները, ծայրահեղական խմբավորումները, էներգետիկ ճգնաժամը և այլն:

Անվտանգության առումով ԵՄ-ի համար կենսական նշանակություն ունի Անդրատլանտյան դաշինքը. ԵՄ-ին անդամակցող յուրաքանչյուր երկրի անվտանգությունն անքակտելիորեն կապված է ՆԱՏՕ-ում և ԵՄ-ում իր դաշնակիցների անվտանգության հետ:

Անդրատլանտյան դաշինքը կենսական նշանակություն ունի առհասարակ Եվրոպայի անվտանգության համար: Հետևաբար, լինելով հավաքական Արևմուտքի բաղադրիչ մաս, ԵՄ-ն որոշ չափով զրկված է ինքնուրույն որոշումներ կայացնելու հնարավորությունից, իր քաղաքականությունը մասամբ կառուցում է՝ նկատի ունենալով ԱՄՆ կենսական շահերը: Ինչպես նշվում է ԱՄՆ ռազմավարության մեջ, ԱՄՆ ազգային կենսական շահերը պարտադրում են հաստատել սերտ կապեր Եվրոպայի և արևմտյան կիսագնդի հետ, խորացնել համագործակցությունը անդրատլանտյան գործընկերությունների հետ՝ ձևավորելով ամուր, ընդհանուր օրակարգ Եվրամիության և Միացյալ Թագավորության հետ որոշիչ խնդիրների վերաբերյալ[17]:

Անդրադարձ կատարելով Եվրամիության ստեղծմանը, բուն նպատակներին և դիտարկելով ԵՄ ներկայիս քաղաքականությունը՝ կարելի է ասել, որ ԵՄ-ն շեղվել է իր սկզբունքներից:

Համաձայն Համաշխարհային տնտեսության ինստիտուտի օգոստոսյան վիճակագրության՝ Ֆրանսիան Ուկրաինային հատկացրած 233 միլիոն եվրոյի ռազմական օգնությամբ 11-րդ տեղում է աշխարհում՝ զգալիորեն զիջելով ԱՄՆ-ին (25 միլիարդ եվրո), Մեծ Բրիտանիային (4 միլիարդ եվրո) և Լեհաստանին (1.8 միլիարդ եվրո): Գերմանիան չորս անգամ ավելի մեծ օգնություն է տրամադրել, քան Ֆրանսիան[18]:

Տեսնում ենք, որ ռուս-ուկրաինական պատերազմում ԵՄ գլխավոր պետությունները զենք են մատակարարում Ուկրաինային: Այս ամենը բխում է հավաքական Արևմուտքի շահերից: Այնուամենայնիվ, Եվրոպայում կայուն անվտանգություն ու բարեկեցություն հնարավոր չէ ապահովել առանց Ռուսաստանի հետ սերտ համագործակցության: Եվրոպայի համար կենսական անհրաժեշտություն է ռուսական գազը:

Դեպի Եվրոպա ռուսական գազի արտահանման դադարեցումը՝ պայմանավորված Արևմուտքի պատժամիջոցների կիրառմամբ, Եվրոպային կանգնեցրել է տնտեսական անվտանգության մի շարք խնդիրների առաջ: Եվրոպայում գազի հարցը շարունակում է բարդ մնալ[19], թեժ ցույցեր են ընթանում եվրոպական երկրներում (Ֆրանսիա, Գերմանիա, Լեհաստան և այլն). մարդիկ պահանջում են իրենց կառավարություններից Ռուսաստանի հանդեպ պատժամիջոցների վերացում, Ուկրաինային զենքի մատակարարման դադարեցում:

Եվրոպայի բարեկեցիկ ապրող ժողովուրդը հոգևոր, էներգետիկ, սոցիալ-տնտեսական ճգնաժամ է ապրում: Կդիմակայի արդյոք Եվրոպան այս ճգնաժամին:

Կարծում եմ՝ հավաքական Արևմուտքի համառությունը նախադրյալներ է ստեղծում Եվրամիության կազմալուծման համար:

Օգտագործուած աղբիւրներ

1. Տես Հարությունյան Ա., Եվրոպական միության իրավունքի հիմունքները (ինտեգրացման գաղափարները և գործընթացները. Եվրոպական իրավունքի ձևավորումը): Մաս I, Եր., 2002, էջ 17:
2. Տես Davies N., Europe: A History, Oxford-N. Y., 1996:
3. Տես «Եվրոպական միության իրավունք», Եր., 2013, էջ 15:
4. Տես նույն տեղում, էջ 20:
5. Տես նույն տեղում, էջ 21:
6. Տես «Եվրոպական միություն», Եր., 2011, էջ 6:
7. Տես նույն տեղում:
8. Տես «Եվրոպական միության իրավունք», էջ 23:
9. Տես նույն տեղում, էջ 24-25:
10. Տես նույն տեղում, էջ 27:
11. Տես «Եվրոպական միություն», էջ 31:
12. Տես «Եվրոպական միություն՝ համապարփակ նկարագիր», Եր., 2006, էջ 188:
13. Տես նույն տեղում, էջ 265:
14. Տես նույն տեղում, էջ 195:
15. Տես «Եվրոպական միություն», էջ 38:
16. Տես https://www.youtube.com/watch?v=U9sy9IIz6Ok, https://www.youtube.com/watch?v=Su6tzRoNX-U (մուտք՝ 03.12.2022):
17. Տես RENEWING AMERICA'S ADVANTAGES, Interim National Security Strategic Guidance, 2021, https://www.whitehouse.gov/wp-content/uploads/2021/03/NSC-1v2.pdf (մուտք՝ 03.12.2022):
18. Տես https://yerkir.am/hy/article/2022/10/09/1021?fbclid=IwAR0lVAWQFjb3oCxOWT7QEbQF87XbD6mKsGLVsfZeOvu49a0Mi2q6AAnFAgM (մուտք՝ 03.12.2022):
19. Տես «Аналитики: цены на газ в Европе могут обновить максимумы в ближайшие дни», https://ria.ru/20220313/gaz-1777896061.html (մուտք՝ 03.12.2022ա):

Գ. Նժդեհի կյանքի որոշ դրվագներ Բուլղարիայում ապրած տարիներից

Սեդա Գալստյան
Հայաստանի պատմության թանգարանի նոր և նորագույն պատմության բաժնի վարիչ

Հայրենիքը չի տրվում այնպես, ինչպես ժառանգվում է հայրենական հարստությունը: Դա ձեռք է բերվում ամեն մի սերնդի և նրա առանձին անդամի կողմից. ձեռք է բերվում հայրենաճանաչումով, հայրենապաշտպանությամբ, նրան արժանի դառնալու ձգտումով: Կարելի է հայրենիքում լինել, բայց հայրենիքից չլինել, կարելի է հայրենիքում ապրել, բայց և այնպես հոգեհատորդ չլինել նրան: Կարելի է, վերջապես, իրավապես հայրենապարտ լինել, իսկ հոգեպես՝ անհայրենիք:

Գարեգին Նժդեհ

Մեծանուն հայորդու անվան հետ կապված հերոսական և ողբերգական էջերը միահյուսված են իրար: Դրանց արդար գնահատականը դեռ կտա պատմությունը՝ իր արժանի տեղը հատկացնելով նրան համամարդկային մեծերի շարքում:

Ցայսօր ավելի շատ խոսվել և գրվել է Գ. Նժդեհ (Գարեգին Տեր-Հարությունյան) հայազգի ռազմական ու պետական գործչի, Զանգեզուրի և Գողթանի ինքնապաշտպանության ղեկավարի, Լեռնահայաստանի առաջնորդի մասին, սակայն ավելի քիչ է խոսվել, և սակավ տեղեկություններ են պահպանվել նրա կյանքի ու գործունեության հաջորդ փուլի, հատկապես Բուլղարիայում ապրած տարիների մասին: Նյութերի ուսումնասիրությունը նորովի է լուսաբանում ազգային հերոսի կյանքի մի հատվածը: «Լեռնահայաստանէն ակամայ և արիւնոտ սրտով հեռանալով, ուրիշ բազմութիւններու նման Նժդեհ կը մնայ Թաւրիզ, ուր կ'ենթարկուի բոլշևիկներու հետապնդումին, ըստ այդ շրջանին հոն ապրողներուս վկայութեան: Նժդեհ շուրջ չորս ամիս պահուած կ'ապրի Թավրիզ, ապա կ'անցնի Եգիպտոս, ուրկէ կ'երթայ Պուլկարիա և հոն ալ կը հաստատուի: Գ. Նժդեհ լայն ժողովրդականութիւն կը վայելէ պուլկարահայ գաղութին մէջ, ինչպէս նաև համակրանք՝ պետական շրջանակներու և մակեդոնական յեղափոխական ղեկավարներու մօտ, որոնց հետ յաճախ կը տեսակցի հայկական հարցերու կապակցութեամբ»[1]:

Մի փոքր մանրամասնենք զորավարի կյանքի և գործունեության բուլղարյան շրջանը, որի մասին պատմող նյութերը (բուլղարերեն, ռուսերեն, հայերեն) 2009 թ. սեպտեմբերին Հայաստանի պատմության թանգարանը (ՀՊԹ) ստացել է Հայաստանի Հանրապետության կառավարությունից: Այդ թղթածրարն ամփոփում է 16 միավոր նյութ, որոնց թվում՝ 73 փաստաթուղթ և լուսանկար: Փաստաթղթերը հիմնականում ներառում են Նժդեհի կենսագրության ոչ այնքան հայտնի էջերը, լույս սփռում հերոսի կյանքի որոշ դրվագների վրա, ներկայացնում նրա նամակները, գրությունները՝ հիշողություններ, լուսանկարներ, «Ռազմիկ» ցեղակրոն թերթի համարներից հրապարակախոսական գործեր և այլն: Հատկապես կարևորում ենք Բուլղարիայի ճանաչված բանաստեղծների, արձակագիրների, հասարակական և քաղաքական գործիչների ու Գ. Նժդեհի միջև նամակագրական կապը: Փորձենք մանրամասնել, վերլուծել որոշ փաստաթղթեր: 2001 թ. բոլոր փաստաթղթերը Սոֆիայի համալսարանի բանասիրական գիտությունների դոկտոր Վիդկա Նիկոլովան, ով 1993 թ. հեղինակել է «Ոգու բանաստեղծը, սրի ասպետը» գիրքը, հանձնել է Սոֆիայում ՀՀ դեսպանատան հյուպատոս Արթուր Մադոյանին: Գրքի առաջին օրինակի վրա Նիկոլովան գրել է «Աստուած պահէ լաւ մարդոց»: Գիրքը նվիրված է բուլղարացի բանաստեղծ Թեոդոր Տրայանովին (1882-1945)՝ ծնված Բազարչիկում, ով փիլիսոփա էր, սիմվոլիստ, ուսուցիչ ու դիվանագետ, ինչպես և հայտնի հեղափոխական գործիչ Գ. Նժդեհի (1886-1955) կյանքին ու գործունեությանը և նրանց միջև հաստատված երկարամյա բարեկամությանը: Առաջին անգամ բուլղարերենով լույս տեսած այս գիրքը մեծ հետաքրքրություն է առաջացրել հենց բուլղար հասարակության շրջանում: Նիկոլովան, ով ուսումնասիրել է Տրայանովի ստեղծագործական կյանքը, գրող Վերա Բալաբանովայի արխիվում հայտնաբերել է Գ. Նժդեհի բաց նամակը՝ ուղղված բուլղար բանաստեղծին: Այդ օրվանից նա սկսել է հայ հերոսի կյանքի ու գործունեության ուսումնասիրությունը և

համոզվել, որ նրա ողջ գործունեությունը հայրենասիրության վառ օրինակ է՝ ներկայացված նրա ստեղծագործական ժառանգության էջերում: Նրա խոհափիլիսոփայական մտքերով սնվել է ոչ միայն հայրենի, այլև սփյուռքահայ երիտասարդությունը: «Ազգերի մէջ գուցէ և միայն դու իրաւունք չունիս ներքուստ պառակտուած լինելու»,- ասում էր Նժդեհը: Առաջին օրինակի վրա կան նաև գրող Վերա Բալաբանովայի մակագրությունը և ստորագրությունը, ներքևում՝ 2 բուլղարահայ քույրերի՝ Մարիանա և Վարդանուշ Ղազարյանների ստորագրությունները՝ շնորհակալական երկտողով: Գրքում տեղ է գտել նաև Տրայանովի և Բալաբանովայի նկարը՝ արված Սոֆիայում: Բուլղարիայի դեսպանատան՝ ՀՀ կառավարությանն ուղարկված փաստաթղթերի մեջ կարևորում ենք բալկանյան պատերազմների ժամանակ Նժդեհի՝ որպես մակեդոնա-օդրինական աշխարհազորի հայկական վաշտի հրամանատարի գործունեությանը նվիրված նյութերը: Դրա մասին կա վկայություն նաև Մեծ Տիռնովոյի ռազմապատմական արխիվում (ֆ. 422, ց. 1, գ. 6, թ. 24): Թուրքերի դեմ բալկանյան պատերազմում հայերի ծառայության վերաբերյալ բուլղարական կառավարության բարձր գնահատականի մասին է վկայում Սոֆիայի ռազմական նախարարության վկայականը առ այն, որ պոդպորուչիկ Գ. Նժդեհը, ով 12-րդ՝ Լոզենգրադյան դրուժինայի հայկական 2-րդ վաշտի հրամանատարն էր, պարգևատրվել է «Խիզախության համար» 4-րդ աստիճանի սպայական խաչով 25.11.1913 թ. (ՀՊԹ, նգպֆ, բ/մ 9043, 23): Այդ մասին հաղորդում է նաև «Բոլգարսկի դոբրովոլեց» թերթը՝ նշելով, որ հայկական վաշտն իսկապես կռվել է առասպելական քաջությամբ: Վաշտի հրամանատարն էր Նժդեհը, ով ուներ քաջության շքանշաններ, բայց ժամանակները ստիպում էին լինել լռակյաց ու համեստ՝ հակառակ իր բարձր ուսման: Այս փաստաթղթերում կան քիչ հանդիպող լուսանկարներ, որոնցում Գ. Նժդեհը բալկանյան պատերազմի օրերի զինվորական համազգեստով է: Նժդեհին Բազարչիկում հարազատների հետ 1931 թ. լուսանկարել են Ղազարյան քույրերը. այդ մասին պատմել է Հայկ Ասատրյանը (ՀՊԹ, բ/մ 9043, 23, 24):

Պատերազմի ժամանակ Նժդեհը դրական է արձագանքել բուլղարական զորքի մի գեղեցիկ սովորությանը, այն է՝ «զինվորների անվանացուցակների ստուգման ժամանակ նախ հիշատակել իրենց երկրի ազատագրության ճանապարհին ընկած հերոսների անունները: Երբ ստուգողը տալիս է այդ նվիրական անունները, «ընկան» պատասխանում է զորաշարքի աջ թևի 1-ին զինվորը: «Փառք» կրկնում է աջ թևի երկրորդ զինվորը, «Հավերժ փառք» ավելացնում է ամբողջ զորաշարքը»[2]: Նժդեհը համոզված էր, որ ազգի նահատակների անունների ամենօրյա հիշատակումը բարձրացնում է զինվորների բարոյահայրենասիրական ոգին: «Գ. Նժդեհը դարձաւ 20-րդ դարի հայոց ռազմարուեստի խոշորագոյն տեսաբանը: Նա վերականգնեց, հարստացրեց ու կիրարկեց հայոց կորուսեալ ու մոռացուած մարտաբառապաշարը....»[3]: Այսօր էլ նրա մարտաբառապաշարը որոշ չափով կիրառվում է մեր ազգային բանակում: Նժդեհը իրեն հատուկ եռանդով Սոֆիայում լծվում է ազգային, հանրային և կուսակցական աշխատանքների. «Տարիներով անդամ կ'ընտրուի Հ.Յ.Դ Պալքանեան կեդրոնական կոմիտէին, կը ստանձնէ ու կը վարէ պատասխանատու պաշտօններ»[4]: 1924 թ. հունիսին Սոֆիայի գերեզմանատանը բացվում է ՀՅԴ հիմնադիրներից Քրիստափոր Միքայելյանի կիսանդրին, որտեղ բոցաշունչ ճառով հանդես է գալիս Գ. Նժդեհը՝ մասնավորապես նշելով, որ այդ համեստ մարդու մեջ կար աննկուն, հերոսական ոգի, որը բոցավառվեց ու համակեց իրեն և իր ընկերներին: Նա նվիրվեց իր ժողովրդին ու ծառայեց նրան մինչ ի մահ: 1924-1925 թթ. Նժդեհը հոդվածներ է տպագրել Պլովդիվում լույս տեսնող Դաշնակցության «Հայաստան» թերթում: Այստեղ տպագրվել են առանձին գլուխներ նրա օրագրից՝ «Էջեր իմ օրագրեն», որը 1924 թ. լույս է տեսել Կահիրեում: Հետաքրքիր են մեծ զորավարի մտքի գույները, նրա բնութագրումները, զգաստության և խոհեմության կոչերը «Բաց նամակ հայ մտավորականության» շարքում, որը տպագրել է Սոֆիայում լույս տեսնող «Արաքս» թերթում (1926 թվականից համագործակցել է թերթի հետ և տպագրվել):

Ըստ այս հավաքածուի մի փաստաթղթի՝ Բուլղարիայի Բորիս 3-րդ թագավորի կողմից 1932 թ. Նժդեհին տրվել է Բուլղարիայի հպատակության մասին վկայագիր (ՀՊԹ, նգպֆ, նո. 9050, 25): Այս փաստը ևս վկայություն է Բուլղարիայում ունեցած նրա դերի և գործունեության գնահատանքի մասին:

Հավաքածուն հարուստ է հատկապես բանտից գրված անձնական բնույթի նամակներով


МИНИСТЕРСТВО НА ПРАВОСЪДИЕТО
ОТДЪЛЕНИЕ ГРАЖДАНСКО
№ 64
24 I ден 1933 година
Гр. СОФИЯ

Удостовѣрение

Министерство на правосъдието дава настоящето на Карекинъ Н. Дарджаниянъ родомъ отъ гр. Нахичеванъ, Кавказъ бивши руски поданикъ, а сега установенъ на постоянно мѣстожителство въ предѣлитѣ на Царството въ гр. София въ удостовѣрение на това, че възъ основа на чл. 10 отъ Закона за българското поданство, съ Височайши указъ отъ 27 XII 1916 г. подъ №1916, той е приетъ за български поданикъ.

Началникъ на отдѣлението:

Վկայական Գարեգին Հարությունյանին (Նժդեհ) Բուլղարիայում հպատակություն տալու մասին. 1933 թ.

(1950-ականներ), որոնք ավարտվում են հայրենիքի, Արարատի պատկերը չլքելու վեհ մտքերով: «Ամենայն բարիք քեզ և մյուսներին, որոնց բախտ է վիճակված ամեն օր տեսնելու մեր Արարատը, որի տեսիլքը ինձ չի լքում երբեք, որի վեհապանծ պատկերը ներհայեցորեն տեսնում եմ ամեն առավոտ և երեկո, ինձ հանգիստ չի տալիս: Ինչպես կուզեի մեռնել Հայաստանում՝ հայացքս Արարատին»: Ամալյային ուղղված նամակի (01.11.1955) հետգրության մեջ ասում է. «Ինձ թույլատրել են գրագրություն հաստատել ընտանիքիս հետ, արդեն գրել եմ առաջին նամակը: Պատասխանին սպասում եմ այնպես, ինչպես դու սպասում ես քո հորեղբոր ազատ արձակմանը: Կուզենամ՝ հետաքրքրվեք, և եթե կան Բուլղարիայից հայրենադարձներ, տվեք իմ հասցեն, ինձ էլ այդ մասին տեղեկացրեք: Առաջին նամակս ընտանիքիս գրել եմ հին հասցեով՝ չիմանալով՝ հիմա որտեղ են ապրում: Եթե ընտանիքս այլևս չի ապրում Սոֆիայում, դժվար թե նամակս հասնի նրանց: Մեկ անգամ ևս խնդրում եմ իմանալ հասցեն Եփիմեի (կնոջ – Ս. Գ.) և տեղեկացնել ինձ» (ՀՊԹ, նգպֆ, բնօրինակը՝ ռուսերեն, թարգմ.՝ Ս. Գ.): ՀՀ կառավարության տրամադրած փաստաթղթերում մեզ հետաքրքրեց Սոֆիայի «Տրիադիցա» համայնքի ձեռնարկը (ՀՊԹ, բ/մ 9051, 71-72), որը մշակել էր բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Նիկոլովան: Այդ ձեռնարկում վերարժևորվել է Նժդեհ պետական-քաղաքական, հասարակական գործչի, «արյունով ու ջղերով» գործող փիլիսոփայի, ռազմահոգեբանի, ազգային գաղափարախոսության ինքնապաշտպանական համակարգը ստեղծողներից մեկի դերը: Կազմակերպվել է դասախոսությունների շարք՝ «Արգելված և մոռացված» վերտառությամբ: Նպատակը մեկն էր՝ վերհիշել մոռացության մատնված գրողների, նկարիչների, լրագրողների, հասարակական-քաղաքական գործիչների անունները: Բուլղարիայի «Երևան» թերթի խմբագրությունը «արգելված և մոռացված» անունների ցանկում ներառել էր նաև Գ. Նժդեհի անունը: Առաջին իսկ դասախոսությունը նվիրված էր բանաստեղծ Թեոդոր Տրայանովին և Գ. Նժդեհին: Բանախոսը՝ «Տրիադիցա» համայնքի ատենապետ Ստոյան Կրոյչևը, հակիրճ ներկայացրել է Տրայանովի զգալի ներդրումը բուլղարական գրականության մեջ և Նժդեհի պայքարը բոլշևիկյան Հայաստանի և Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին հանձնելու դեմ: Ներկաները մեծ հետաքրքրությամբ ծանոթացել են Նժդեհի հերոսական կյանքի դրվագներին և նրա ողբերգական վախճանին: «Ինչ որ հայկական է, վեր է ամեն ինչից». սա էր Նժդեհի նշանաբանը նաև օտար հողում: Հեռավոր Բուլղարիայում ևս նրա հոգին պայքարում էր, նրա մտահոգության առանցքում Հայաստանն էր ու հայը: Դերասան Բոգդան Կլիշևը, ով խոսել է Նժդեհի մասին, ընթերցել է նրա նամակը՝ ուղղված բանաստեղծ Տրայանովին՝ որակելով այն ինքնաբուխ նամակ: Կարծում եմ՝ հետաքրքիր կլինի մեջբերումներ անել նամակից՝ գրված Սոֆիայում 1941 թ. հունվարի 21-ին մեծ բանաստեղծ Թ. Տրայանովին, որում Նժդեհը խոստովանում է, որ չնայած ծանոթ էր բուլղար ժողովրդի ցեղային կարողություններին, նրա պատմությանն ու շարժող ոգուն, նրա մշակութաստեղծ խանդավառությանը, սակայն երկտողով իրեն ուղարկված գիրքը եկավ լրացնելու բուլղար «Ոգու» և «Հոգի» մասին իր պատկերացումները: Հանճար և մարգարեականություն՝ ահա թե ինչերն են ծնունդ տվել Տրայանովի բալլադներին: «Ճշմարտօրէն մե՛ծ բանաստեղծ, որ, դժբախտաբար, ամէն սերունդի օրով աշխարհ չի գալիս»,- ասում էր Նժդեհը: Նժդեհը հիշում է, որ Ֆրանսիայում մի ամսագիր Փարիզի անկման օրերին հարց է տվել, թե ուր է մեծ բանաստեղծը, որ հանուն Ֆրանսիայի պաշտպանության կկարողանար զորահավաքի ենթարկել բոլոր սրտերը: Ավելացնում է, որ գիրքը թերթելուց հետո հավատացած է, որ երբ «բուլղար ժողովուրդը հարկադրված լինի մերկացնելու իր կատաղի սուրը, Բուլղարիայում ոչ ոք չպիտի կրկնի ֆրանսիացիների խռովքի հարցը», քանզի ապրում է մեծ բանաստեղծը՝ Ոգու բանաստեղծը, վկա նրա բալլադները: Ապա շարունակում է. «Եթէ ես լինէի վարիչը բուլղար բանակի, եկեղեցու, դպրոցի, պիտի հրամայէի, որ ամեն զօրական ու զինուոր, եկեղեցական ու հաւատացեալ, ուսուցիչ ու աշակերտ, որ ամեն բուլղար իր ծոցում կրէր ձեր բալլադների գիրքը…. միայն հանճարով ու մարգարէութեամբ օծուն նման գրքերին է յաջողում ժողովրդից շանթանման առաջնորդներ ու մահապատրաստ վիտիազներ քամել: Ձեր բալլադների հզոր շունչը կարող է հոգեվերանորոգել Ձեր ժողովուրդը, զայն վերածելով մի հոգևոր մոնոլիտի…. որովհետև գալիս են զօրաւոր ժամանակներ: Եղբայրօրէն՝ Ձօր. ՆԺԴԵՀ» (ՀՊԹ, նգպֆ, 9041, 5): Բուլղարիայում Գ. Նժդեհի ապրած տարիների լուսաբանմանն էր նվիրված Սոֆիայում 1996 թ. նրա ծննդյան 110-ամյակի առիթով Հայ դատի կազմակերպած միջոցառումը: Այնտեղ խոսվել է Նժդեհ ռազմական, քաղաքական, հասարակական գործչի դերի և մեծության մասին: Շատ գրավիչ ու տպավորիչ էր Սոֆիայի համալսարանի լեզվաբանության բաժնի դասախոս դոկտոր Նիկոլովայի ելույթը, որն ավարտվել է հետևյալ խոսքերով. «Թող մեզմե ամեն մեկը իր հոգվու մեջ մոմ մը վառե Գ. Նժդեհի փայլուն հիշատակին առջև և թող երբեք չմոռնա անոր հերոսական օրինակը» («Երևան», 1996, նո 6): Նժդեհի պատգամն էր՝ «Երբեք և ոչ մի տեղ առանց հոգևոր հայրենիքի»: «Երևան» թերթը 1991 թ. 16-21-րդ համարներում զետեղել է Նժդեհի կենսագրականը: Միջոցառմանը մասնակցած հյուրերի թվում էր նաև հոր կորուստը վերապրած զավակը՝ Նժդեհի որդին՝ Սուքիաս-Վրեժը, որի մասին կան որոշ վկայություններ ՀՊԹ-ում պահվող հավաքածուում: Խոսքը նախ նրա ծննդյան և մկրտության վկայականի մասին է. Սուքիաս-Վրեժ՝ ծնված 1936 թ. Սոֆիայում, մկրտված 1937 թ. (ՀՊԹ, բ/մ 9042, 12): Կարծում եմ՝ այս փաստաթուղթը վերջ կդնի որդու մասին այլ «ասեկոսեների»: 1994 թ. Վազգեն Տեր-Հարությունյանը՝ Նժդեհի եղբոր՝ Լևոնի թոռը, մեկնել է Բուլղարիա և տեսակցել իր ազգականին՝

Սուքիաս-Վրեժին, ով մեծ դժվարությամբ է հաղորդակցվել՝ ներսում պահելով վիրավորանքն ու հերոս հոր կորստի դառը վիշտը, այն զրկանքները, որ կրել են ինքն ու մայրը հոր ձերբակալությունից հետո: Սուքիաս-Վրեժն ականատես է եղել հոր ձերբակալությանը: Դաժան ժամանակները, տասնամյակների կաշկանդվածությունը իրենց դրոշմն էին թողել նրա բնավորության վրա: Մարդկային տարրական իրավունքներից զրկվելը, երիտասարդի երազանքների փշրվելը... և այդ բոլորն այն պատճառով, որ Գ. Նժդեհի որդին էր (պատմում է Վ. Տեր-Հարությունյանը, այդ մասին գրել է նաև Կարո Հայրապետյանը իր «Անձնվեր ազատամարտիկը» հոդվածում): Վրեժին և մորը տեղափոխել են Սոֆիայից Պավլիկենե 1945 թ.: Նժդեհի կինը աշխատել է գործարանում: Այս մասին հանդիպում ենք բանտից Ամալյային՝ եղբոր աղջկան ուղարկված Նժդեհի 1955 թ. դեկտեմբերի նամակում: Նամակում նա գրում է, որ առաջին նամակն է ստացել իր ընտանիքից, գրել են Պավլիկենեից. «....Նյութական վիճակը այնքան էլ բարվոք չէ, Վրեժիկը աշխատում է մի գործարանում, Եփիմեի առողջականը տկար է, ահա ողջ նամակի բովանդակությունը, որը ավելի շատ տխրեցրեց, քան ուրախացրեց ինձ: Երևում է տղայիս կարիքն է ստիպել աշխատել, երբ փխրուն դեռահասին դեռ պետք էր սովորել: Ճակատագիր է....» (ՀՊԹ, նգպֆ, ի պահ, 1996): Այդ տխուր ճակատագիրը դրոշմված էր տղայի աչքերի մեջ, դեմքի վրա:

Նժդեհի ծննդյան 110-ամյակի միջոցառմանը մասնակցել են նաև մակեդոնական միության անդամները, ՀՕՄ և ՀԲԸՄ ներկայացուցիչները: Այստեղ Ալիս Կրընչարովան առաջարկել է հայերին մարմարե հուշատախտակ դնել հայտնի հայ գործչի տան առջև, որտեղ նա ապրել է, աշխատել ու ձերբակալվել: Առաջարկը հետագայում կյանքի է կոչվել քաղաքապետարանի որոշմամբ, ինչը, կարծում եմ, նորից փաստում է Բուլղարիայում մեր ազգային հերոսի ըստ արժանվույն ընդունված լինելու, հայ համայնքին անմնացորդ նվիրվելու մասին: Այդ են վկայում Սոֆիայից գրած տողերը. «Որտեղ և երբ էլ մեռնեմ, հաւատա՛ իմ ազիզ ժողովուրդ, որ արտաքին վտանգներիդ ժամանակ իմ անհանգիստ հոգին այցի և օգնութեան պիտի փութայ իր հայրենի աշխարհին և ասերևութաբար քո բանակները առաջնորդէ: Ջինուոր զավակդ՝ Նժդեհ, 1937թ., Սոֆիա»[5]:

Ազգային հերոսին հանգիստ չէին տալիս թուրք-բոլշևիկները, որոնք ամեն քայլափոխի հետևում էին նրան, հատկապես այն բանից հետո, երբ ականատես են լինում 1935 թ. օգոստոսի 18-ին նրա կազմակերպած ցույցին. նրանք չէին սպասում այդպիսի բազմամարդ հավաք, որի մասնակիցները և՛ հայեր, և՛ բուլղարացիներ էին: Այս 2 ժողովուրդների եղբայրական ուխտը արձագանք է գտել նաև Բուլղարիայի մամուլում: Ջորավարը կարողացել էր հարաբերություններ հաստատել բուլղարացի բարձրաստիճան պաշտոնյաների և զինվորականների

Գ. Նժդեհն իր մտերիմների հետ. Բազարչիկ, 1931 թ.

հետ, որոնք նրան հրավիրում էին հոբելյանական օրերի տոներին, զինվորական հավաքների մասնակցելու: Ավելի ուշ Կրեմլի պետերին ուղղված նամակում Նժդեհը գրում է. «1944 թ., երբ խորհրդային բանակն արդեն Ռումինիայում էր, ես չհեռացա Սոֆիայից.... թէև որպես հրապարակախօս ունէէի հիանալի հնարաւորութիւն՝ Շվեյցարիա անցնելու.... լինելով Ռուսաստանից փախած տարագիր, ես Սոֆիայում ներկայացայ ռուսական դեսպանին և ցանկութիւն յայտնեցի օրէնքով սահմանուած կարգով վերադառնալ Ռուսաստան և մասնակցել Թուրքիայի դէմ պատերազմին»:

1944 թ. սեպտեմբերի 9-ին, երբ խորհրդային զորքերը մտնում են Սոֆիա, Նժդեհը գրում է նամակ Տոլբուխինին (ուկրաինական ռազմաճակատների գլխավոր հրամանատար), ապա նրան հաղորդում են, որ պետք է մեկնի Մոսկվա և անձամբ անի իր առաջարկը: Որպես արդյունք՝ նա հայտնվում է Լյուբյանկայում (Անվտանգության ծառայության բանտում)... ապա ամիսներ անց նրան ուղարկում են Երևան՝ հարցաքննության, որի հիման վրա Մոսկվայի դատարանը առանց դատ ու դատաստանի կայացնում է 25 տարվա ազատազրկման վճիռ...

Բանտից ուղարկված նամակներում պարզ երևում է Նժդեհի ներքին պայքարը: Որպես զինվորական և մտածող, հրամանատար ու քաղաքական գործիչ, գրող, փիլիսոփա՝ Նժդեհը չէր դադարում պայքարել թե՛ արտաքին աշխարհի և թե՛ ինքն իր դեմ: Առաջին 3 նամակներն ուղարկված են բանտից 1944 աշնանը, որոնցում Եփիմեից խնդրում է տաք գուլպաներ, ներքնազգեստ և կենցաղային մի քանի իրեր: Ավելի ուշ եղբորը գրած նամակում հայտնում է, որ բժիշկները հաստատել են այն հիմքը, որը

լիովին համապատասխանում է ՆԳՆ-ի ընդունած հրամանագրին, որով ինքը կարող է ժամկետից շուտ ազատվել: Նժդեհը եղբորը խորհուրդ է տալիս այդ հիմնավորմամբ դիմելու Գերագույն դատարան, Գերագույն խորհուրդ և այլ համապատասխան մարմինների: Գրում է, որ կարող են տեսակցություն կազմակերպել, ինչը պայմանավորված է բանտային գլխավոր վարչության թույլտվությամբ: Խնդրում է գրել հին հասցեով նամակներ, այն էլ՝ հաճախ, սակայն ծանրոց չուղարկել (ՀՊԹ, Նժդեհի անձնական նյութեր):

Նույն օրը գրած հաջորդ նամակում, դիմելով իր հարազատներին, Նժդեհն ասում է, որ նրանց խորհուրդը՝ իր ձեռագրերի հարցով դիմելու Հայաստանի գրողների միությանը, կփորձի իրականացնել, երբ իրեն կտեղափոխեն. «Քանի որ ինձ ժամանակ է հարկավոր ձեռագրերս կարգավորելու, քանի որ թեմաները բազմազան են և հարուստ՝ մտորումներ պատմության և փիլիսոփայության մասին, գրականության, ժողովրդի, առաջնորդների, մարդու և մարդու իրավունքների, զինվորների և հրամանատարների, օրենքի խոսքի, հայրենասիրության, գրական քննադատության, հավերժի և անցողիկի, Հայաստանի և հայերի մասին: Դրան զուգահեռ ես ունեմ ինքնակենսագրություն՝ «Երկխոսություն Մասիսի և իմ միջև» (ՀՊԹ, նգպֆ, Գ. Նժդեհի անձնական արխիվ): Այս երկխոսությունը շարունակվեց մինչև իր մահը:

Հավաքածուում կա հետաքրքիր բովանդակությամբ մի նամակ՝ գրված եղբորը, որում կա և՛ վիրավորանք, և՛ վեհություն, և՛ կարոտ, և՛ խղճահարություն՝ միախառնված մի կերպարում. «Ես տասնյակ տարիներ ապրել եմ առանց գրոշի, ես սովորել եմ ապրել այդպես և այնքան խանդավառված եմ, որ պատրաստ եմ ինչպես Բուդդա, ինձ զոհաբերել հանուն սոված էգ առյուծի: Ես կարիք չունեմ Լիլիայի (Լիլյա Դադայան, առաջին կնոջ՝ Գոհար Դադայանի աղջիկը, որին Նժդեհը չի տեսել – Ս. Դ.) օգնությանը, բայց եթե նա չունի գոնե տարրական էթիկա (որ հետաքրքրվեր հայրենասեր հոր ողբերգական ճակատագրով – Ս. Դ.), Աստված իր հետ, ամեն մեկին տրված չէ այրվել վեհ զգացումներով: Ես նրան այլևս չեմ գրի: Գրել եմ Օլյային, քո տված հասցեով, չի պատասխանել, երևի նամակս տեղ չի հասել: Վրեժի հանդեպ քո եղբայրական զգացմունքների համար շնորհակալ եմ: Խե՜ղճ տղաս, նա արժանի է դրան: Նա որբացավ շատ ավելի վաղ: Իսկ իմ զառամյալ աղավնյակս՝ Եփիմեն: Խղճուկ վիճակու՞մ են: Ես լուսանկարներ չունեմ և հնարավոր չէ լուսանկարվել: Ինձ մոտ կար Վրեժի, Եփիմեի և իմ նկարները, բայց հիմա նրանք Հայկական ԽՍՀ-ի ՆԳՆ-ում են: Ձեզ եմ ուղարկում հրաշքով փրկված Վրեժի փոքրիկ լուսանկարը, որը գտել եմ Լեոյի «Հայոց պատմություն» ստվարածավալ գրքի մեջ: Այն կարելի է մեծացնել: Դե ցտեսություն, համբուրում եմ բոլորիդ, Ձեր Գարեգին: 9.05.55թ.» (ՀՊԹ, բ/մ 9054, 74):



Նժդեհի բանտային լուսանկարը

Թանգարանին ի պահ տրված Գ. Նժդեհի հավաքածուում կարևորում ենք նրա քրեական գործի կարճման, արդարացման մասին փաստաթուղթը (1992 թ. մարտի 30), որին նա սպասում էր դեռ կենդանության օրոք... Վազգենը նշեց, որ այս փաստաթուղթը դեռ որևէ տեղ տպագրված չէ, և որևէ մեկը չի ցուցադրել, թանգարանն առաջինն է, որ այն ձեռք է բերում, որը ցուցադրեց կարճ ժամանակահատված: Զորավարն իր կենդանության օրոք էր սպասում այս փաստաթղթին: Դա երևում է նրա նամակներից՝ գրված եղբոր աղջկան՝ Ամալյային. «Ստացել եմ նամակդ թվագրված 18.11.55թ.

....Իմ գործերի մասին, ոչինչ որոշակի ասել չեմ կարող: Դեռ 2 ամիս առաջ ՆԳՆ-ն ինձ տեղյակ պահեց, որ գործս վերանայվում է: Չեմ ընկալում, ինչու են ուզում, որ ես մեռնեմ բանտում: Իմ ընդհանուր վիճակը օրեցօր վատանում է: Երեկվանից գտնվում եմ հիվանդանոցում: Բարևներ Թափառականից Օլյային, Գագիկին, համբուրում եմ, քո հորեղբայր՝ Գարեգին 02.12.55» (ՀՊԹ, Նժդեհի նյութերը):

Օգտագործուած աղբիւրներ

1. Աւо, Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը, նշխարներ, վկայութիւններ, Պէյրութ, 1968, էջ 229:
2. Նժդեհ Գ., Զորաշարքային կանոնադրություն, Եր., 1993, էջ 8:
3. Նժդեհ Գ., Ասոյթներ, Եր., 2002, էջ 5:
4. Աւо, նշվ. աշխ., էջ 229:
5. «Նախիջեւան» պարբերաթերթ, 2000, թիւ 15:

Հայից սփյուռքահայ (Գևորգ Պետիկյանի «Սփիւռքը...» հատորի առիթով)

Մարգարիտա Մ. Խաչատրյան

ԱՄՆ ներգաղթած հայ ծերունին զարմանքով, թե ուրախությամբ պատմում էր, որ գաղթաշխարհում իրենց գյավուր էին անվանում, Խորհրդային Հայաստանում՝ աղբար, այս երկրում՝ հայաստանցի...

2022 թվականը հռչակված է Սփյուռքի տարի...

Փորձեմ Գևորգ Պետիկյանի «Սփիւռքը...» հատորի օգնությամբ գտնել «Ի՞նչ գիտեմ Սփյուռքի մասին» հարցի իմ պատասխանը:

Գիրքը սփյուռքահայության երեք սերնդի կենսագրությունն է՝ փոթորկուն ու խաղաղ էջերով, իրագործված ու անիրագործելի երազանքներով, հայր (պապ) – որդի (հայր) – թոռ (որդի) հոգեբանական բազմաբարդ անցումներով և այլն: Եվ այս ամենը՝ հումորով, ցավի գալարումները շատ վատ սքողող ծիծաղով, ապագայի հույսերից ծնված լավատեսությամբ սնվող ժպիտով:

«Արդեօք բազմութիւն մըն ենք, որ չենք գիտեր ի՞նչ կը փնտռենք»[1],- հարցնո՞ւմ, թե՞ արձանագրում է Գևորգ Պետիկյանը:

Ահա պատասխանի տարբերակներից մեկը. «Որովհետև կը կարծեմ, որ շատ-շատեր, երբ Սփիւռք բառը լսեն, անպայման «տոլարը» իրենց աչքին առջև կը պարզուի» (էջ 25):

Գրքի հերոսը հայրենիք-Սփյուռք խաչմերուկում կանգնած հայն է, որը փորձում է կենդանի պահել անցյալի հիշատակները, կարոտի ձայնը լռեցնելու համար անցնում է Լոս Անջելես-Երևան ճանապարհը, տեսնում ու փորձում է հասկանալ հայրենիքի առօրյա կյանքը, երբեմն զայրանում ու զարմանում է՝ միշտ հաջորդ անգամ ավելի բարգավաճ երկիր տեսնելու ինքնարդարացմամբ քողարկվելով:

Այս բոլոր ապրումները, ուրախություններն ու սիրտը խոցող դժվարություններից ծնված ցավն ունեն օվկիանոսի երկու ափերին գտնվող, իրարից շատ տարբեր երկու հանգրվան՝ Հայաստան երկրի՝ օրեցօր փոքրացող մի բուռ տարածք ու Խաղաղականի երկայնքով տիրականորեն փռված Լոս Անջելես: Այս տարածքները բաժանված են ոչ միայն օվկիանոսով, այլև աշխարհում ապրող միլիոնավոր հայերին բաժանող հոգեբանական ու մշակութային տարբերություններով, որոնք ամեն օր վերածվում են ահագնացող սպառնալիքի:

Հայ անհատն աշխարհագրական այս տարածքներում ապրում է հոգեբանական վայրիվերումներ. մի տեղ նա իբր թե երկրի տեր է, մյուսում՝ քաղաքացի՝ դրանից բխող բոլոր առավելություններով ու հետևանքներով: Եվ ոչ մի տեղ հանգիստ չի գտնում:

Գրքի թեմատիկան ընդգրկուն է՝ հայաստանաբնակ հայության առայժմ անհասկանալի, փոթորկուն ու կործանման վտանգներով հղի բեկումնային ներկա, ամերիկահայության հին ու նոր սերունդների հակասական, իրարամերժ կեցության ձևեր, վերջին ճիգով հայ մնալու, հայ ապրելու նվիրական երազանք-փափագ: Սրան հավելենք օտար ափերում հայ գրականությանը ծառայելու ամենօրյա ջանքը՝ հակառակ ընթերցող չունենալու ցավին:

«Սփիւռք՝ շատերու ծանօթն ու անծանօթը», «Շնորհակալութիւն ամերիկահայերուն», «Մենք՝ ամերիկահայերս», «Թոռնուհիիս Ամերիկան և իմս» վերնագրերի համադրությունն ինքնին խոսուն է. հայաստանաբնակներից ո՞վ չունի իր պատկերացումն այն երկրի մասին, որից ծնվել է «ամերիկահայ» մակդիրը: Ահա գրողի վկայությունը. «Ապա, երբ այս Ամերիկա կոչուած երկիրը հաստատուեցանք, չեմ գիտեր՝ ո՞վ և ինչպէ՞ս մեր ճակտին դրոշմեցաւ «ամերիկահայ» մակդիրը: Այդ նախկին մեր ունեցած և կամ որակուած «ցի»երը մոռցանք: Նոյնիսկ կը յիշեմ, սկզբնական տարիներուն, մեզմէ տարիներ առաջ «հաստատուած» հայերը իրենք զիրենք մեզի կը ներկայացնէին իբրև տեղացի ամերիկացի» (էջ 106):

Չգիտեմ՝ հայության համար ցա՞վ, հպարտությո՞ւն, թե՞ ինքնահաստատման միջոց է պատմությունը: Այնինչ «Ի՞նչ պատմութիւն և ի՞նչ Ամերիկա: Մեծամոլութեան ախտէն վարակուած երկիր: Կեղծ մարդասիրութիւն և ողորմութիւն... Ձևապաշտ իրավիճակ...

Հոս է, որ ժողովուրդ մը կ'ապրի առանց աւանդութեան և սակայն աշխարհին տուած է ապրելու նոր կերպ: Երկրին մէջ հազարաւոր անտունիներ, աղքատներ և անօթիներ կան, փողոցներու մայթերուն

վրայ կը գիշերեն, իսկ երկիրը իր միլիոնները կը ծախսէ ուրիշ երկիրներու բոպիկ և անօթի մարդիկը հիւրասիրելու համար» (էջ 138-139):

Ինչ է պահանջվում այսօր հայության տարբեր շերտերից. «Սփիւռք և Հայրենիք դառնանք մէկ ամբողջութիւն: Գործնականօրէն» (էջ 29):

Դառնանք: Ինչպե՞ս, երբ մեզ հիմա շատ քիչ բան է միավորում:

Որտե՞ղ վրիպեցինք, որտե՞ղ չկարողացանք տարբերակել գլխավորը, ամենակարևորը…

Չգիտեմ:

Պետիկյանի պատասխանը սա է. «Գիտենք, որ իւրաքանչիւրս մեր ապրած սփիւռքներուն մէջ տեսակ մը նոր ինքնութիւն ընկալած ենք կամաց-կամաց և նուազած մեր հայկական ինքնութենէն» (էջ 46):

Շնորհակալություն «սփիւռքներուն» բառի համար, քանի որ այդ բառից ծնվեց կասկածս՝ հայաստանաբնակներից ում համար էր երկիրը դարձել «սփիւռքներ»-ից մեկը, որը կարելի է լքել, հեռվից սիրել ու կենաց խմել:

Ուշադիր կարդացեք. «Այսօր Հայաստանը պարտաւոր է սփիւռքահայուն համար ստեղծել ենթահողը, որպէսզի ան կարենայ առաւել ներդրում կատարել Հայաստանի մէջ: Ուստի, ժամանակն է բանալու ենթագիտակցութեան կորսուած ծալքերը՝ տեսնելու համար այս պարզ իրականութիւնը:

Պէտք է գտնել իրականութիւնը» (էջ 28):

Ո՞ր իրականությունը. այն իրականությունը, որտեղ իբր թե ապագա կա, այն մյուսը, որում գոյատևում են պապ, հայր, որդի, տուն-տեղ կորցրած ընտանիքները, թե՞ այն իրականությունը, որ Աստծո ամեն բացվող օրվա հետ մեզ ներկայացնում են մեր արյունարբու հարևան ցեղերն ու աշխարհի մեծերը, որոնք վաղուց վարժվել են ստելուն, զոհին ու դահճին «շփոթելուն»… Սրանցից ո՞ր իրականությունն է հայինը՝ հայաստանաբնակ կամ սփյուռքաբնակ…

Գրքում ներկայացվածներից հիշեցնեմ երկու իրականություն՝ պապիկի ու ամերիկածին թոռնուհու հարաբերություններից մի պատկեր. «Հայերէնով վիճած էինք: Այս մէկն ալ «բան» մըն էր» (էջ 105), և պապիկի եզրակացությունը. «Ան անմեղ զոհն էր երկրին և դարուն: Իր նմանները բոլորն ալ մէկական զոհերն էին ներկայ պայմաններուն:

Դաժան իրականութիւն էր այս մէկը:

Ուրեմն ինք գիտէր, թէ ի՞նչ էր մայիսի այս օրը: Պարզապէս իրեն համար «հայկական դրօշակ»ի օրն էր, սակայն մոռցած էր զայն յիշել» (էջ 142):

Փաստորեն, ամենաիրականը սա է՝ «Մեր կեանքը՝ զումայինը», ինչպես վերնագրված է գրքի պատմվածքներից մեկը (էջ 160-162):

Գրքում իրականության երկու երանգ էլ է ներկայացված՝ «Հայու նոր տեսակ՝ ֆէյսպուքահայ» պատմվածքով (էջ 122-126) և ամերիկյան միջավայրի այս դիպուկ պատկերով. «Գլուխս գլխարկ և դէմքս ալ դիմակ: Տիրական եղանակով և ձայնով նախ բարևեցի» (էջ 139):

Ընտրությունն ընթերցողինն է:

Մարդը փորձում է իր գոյությունը՝ երկարատև կամ կարճատև, տեղավորել ժամանակի անցողիկության և ակնթարթի հավերժության միջև՝ շատ լավ հասկանալով, որ դրանց անքակտելի կապի արդյունքն ազգերի գոյությունը, մշակութային հրաշագործություններն են ու վաղվա օրվա անմեռ Հույսը: Հույսն աստվածային է, Հույսն ԱՍՏՎԱԾ է, մեզ անհասանելի իմացության սահմաններից դուրս է, ու վայ նրան կամ նրանց (այլ բառով՝ ժողովուրդներին), ով կամ որոնք կփորձեն գոյատևել առանց այս Հույսի կամ կբովանդակազրկեն ու կփոխարինեն ուրիշ բանով՝ երկրայինով, հասանելիով՝ առանց հասկանալու, որ դա վերջի սկիզբն է:

Փորձեցի շրջանցել պատմության երկար ընթացքն ու հասկանալ այն անընմբռնելին, աներևակայելին, այն մեծ անմտությունը, որն այսօր իրականություն է մեր երկրում, որի մեջ ապրում ենք ազգովին, ո՛ւր էլ լինենք, ինչո՛վ էլ զբաղվենք, ապագայի ի՞նչ ծրագրեր էլ ունենանք…

Բոլորիս վարակել է համազգային (թե՞ համամարդկային) մի վարակ՝ ախտ, համաճարակ. մեր ծրագրերը ոչ մի կապ չունեն ՀԱՅ ՀՈՂԻ, Հայաստան երկրի այս մի պատառիկի լինել-չլինելու հեռանկարի հետ, ամեն մեկիս հոգսը մենք ենք՝ առանձին-առանձին, անջատ-անջատ: Համատարած անթասիբության (օտար բառը հատուկ եմ ընտրել) ու ստամոքսապաշտության այս թունավոր մթնոլորտում հանդուրժում ենք սուտը մեր կյանքի բոլո՛ր ոլորտներում ու բոլո՛ր մակարդակներում…

Սա է իրական իրականությունը…

***

Անցյալ դարի 70-ական թվականներն էին: Մոտավոր պատկերացում ունեի Սփյուռքի ու այնտեղ ապրող հայության մասին («սփյուռքահայ» հորջորջումը չեմ սիրում. բախտս բերել է, որ Համաստեղն ու Արամ Հայկազը Սփյուռքի հայ գրողներ են, ոչ թե սփյուռքահայ գրողներ):

Հայրս երբեմն-երբեմն զայրույթախառն զարմանքով պատմում էր 1940-ականների վերջերին Արագածի լանջին փռված իրենց աղքատիկ գյուղում հայտնված հայրենադարձների երեք ընտանիքի մասին: Գյուղը նրանց ընդունել էր գրկաբաց, տվել էր ունեցածից լավագույնը՝ իր պատկերացումով… բայց դժվարացել էին միանգամից հաղթահարել լեզվական ու կենցաղային տարբերությունները:

Տարիքն առած ու տարիքի հետ բնական իմաստնությունը բազմապատկած հայրս (սա միայն իմ կարծիքը չէ) պատմությունն ավարտում էր հոետորական երկու հարցով.

1. Երբ ամեն օր գրասենյակի դուռն էին հավաքվում ու բողոքում, չէ՞ին տեսնում գյուղացիների ծայրահեղ, ճչացող աղքատությունը, ռազմաճակատում զոհված հայրերի ու եղբայրների փոխարեն աշխատող երեխաներին ու պատանիներին, որոնք չէին դըժգոհում, օրեցօր կորցնում էին առողջություն, բայց ոչ՝ արժանապատվություն:

2. Ո՞ւր հեռացան այդ ընտանիքները…

Կատարված ողբերգությունը երկրորդ երես էլ ուներ. նրանք մեր գյուղեր բերեցին դրսի աշխարհի մասին գունավոր հեքիաթը, իսկ տասնամյակներ անց այդ հեքիաթը դարձավ մաստակ, շքեղ լուսանկարներ, ժապավեններ, ուրիշի հագած հագուստ ու կոշիկ…

Միջանկյալ ասեմ՝ տասնամյակներ առաջ արտասահմանյան լուսանկարչական սարքով նկարած մեր տունը առաջին պահին չճանաչեցի՝ առաջացնելով սաներիս ծիծաղը…

Մյուս դեպքը բացառիկ հանդիպում էր մեր տանը: Բոստոնից մի հայ երիտասարդ, որ նամակագրական կապ ուներ անգլիական թեքումով դպրոցի շրջանավարտ ազգականուհուս հետ, անցել էր կարմիր գիծը և հայտնվել մեր տանը: Ջուսպ, հավասարակշռված երիտասարդ էր, խոսում էր բառերն զգուշորեն ընտրելով: Մենք լսում էինք, հարցեր չէինք տալիս:

Հյուրասիրության ընթացքում հյուրի լեզուն բացվեց, ու պատմեց, թե ինչպես են վռնդել իրենց թաղում հայտնված թուրք խանութպանին:

Իզուր պատմեց, որովհետև մեծերն արագ կռահեցին, թե ո՛ր կազմակերպության համակիր է, եթե ոչ անդամ: Օրեր անց, երբ կրկին անցել էր օվկիանոսը, մի քանի տրցակ թղթերի մեջ, որ հետը չէր տարել, անգլերեն թուրքահոտ ամսագիր գտանք. շապիկին պատկերված էր երկրագունդը հայերի ճիրանների մեջ:

Մտածում եմ՝ մեզ ու մեր երկիրը խուճապահար լքող հայերից որ մեկն անցավ կարմիր գիծը ԱՄՆ մեծամեծ քաղաքների հայկական թաղերից թուրքերին վռնդելու ցանկությամբ:

Կատարվեց ճիշտ հակառակը. թուրքական ապրանքները վաղուց հեղեղել են մեր շուկան ու խանութները, և, փաստորեն, մենք ենք զինում մեզ ու մեր սերունդներին կոտորող բաշիբոզուկներին, իսկ այսօր հաստավիզ ու վախկոտությամբ հանրածանոթ թոթովախոս մի «ազգընտիր» մեծահարուստ թուրքապաշտության ոլորտում նորանոր բարձունքներ է նվաճում՝ գերազանցելով իր հոգևոր հայրերին…

Ինձ համար եվրոպաների բացառիկության հեքիաթը շատ շուտ մեռավ, որովհետև ուսանողական տարիներին մի քանի անգամ ճանապարհորդել եմ մերձբալթյան երկրներում: Հնարավոր չէր որևէ հարցի պատասխան ստանալ. ռուսերեն իբր թե չէին հասկանում: Անգամ «կինո» բառը…

Չեմ մոռանա վաղամեռիկ ընկերուհուս՝ Կարինե Հովհաննիսյանի հիստերիկ ծիծաղը, երբ կինոյի տոմսերը մնացին ափի մեջ, որովհետև անցնող-դարձողներից ոչ ոք մեզ չօգնեց գտնելու քիչ հեռու՝ պուրակի խորքում գտնվող շենքը: Իլֆի ու Պետրովի նշանավոր հերոսի՝ Օստապ Բենդերի պես քսից արթնացանք ու հասկացանք՝ իրականությունը շատ հեռու է մեր պատկերացրածից…

Հիմա, երբ աշխարհում բոլորիս աչքի առաջ իշխանության են գալիս տխմարներն ու մարդատյացները (չնչին բացառությամբ), հազիվ եմ զսպում ինձ, որ «չշնորհավորեմ» բոլորիս. սա ԱՍՏԾՈ թագավորությունը չէ, ուրեմն սա է՛ն մյուսի իշխանության սկիզբն է… Մենք այստեղ էլ ենք առաջինների շարքերում, ավելի ճիշտ՝ հենց առաջինը… Ապացույց վերջին 4-5 տարվա մեր երկրի պատմության «աննախադեպ» շրջադարձերը…

Մենք՝ հայերս, հատկապես այս իրավիճակում կորցնելու շատ բան ունենք, որովհետև՝

ա) Բացառիկ հանրություն ենք, որ վճարում ենք չսովորելու համար: Ու այս ամենահաղթ հոգեբանությունը մեր երեխաների մեջ սերմանում ենք մանկապարտեզից…

Սա հանցանք է ներկա ու ապագա սերունդների դեմ:

բ) Չենք տարբերակում մտավորականին բարձրագույն կրթության վկայական ունեցողից, մեր օրերում՝ նաև չունեցողից, իսկ պայուսակում Աստվածաշունչ ունենալն էլ համարեցինք հավատի ապացույց. բոլորը մտավորական են, ինչ անենք, որ սուտ են խոսում, խոսում են չէ՞…

գ) Ասֆալտային հայրենասիրությունից հասանք մինչև հայրենիքը մաս-մաս, ամեն օր ջահել կյանքեր կորցնելով թուրքին նվիրելու փաստին. մենք ոչնչացրինք մեր ապագան:

դ) Ամենահրեշավոր մեղքը գործում ենք բացառիկ համառությամբ. փորձում ենք համատեղել հեթանոսությունն ու քրիստոնեական մաքրամաքուր հավատը, դարձել ենք պարզունակ ծիսապաշտներ, որոնց չի զարմացնում ու զայրացնում ամեն օր դպրոցի հարևանությամբ հայտնվող աղանդավորների ցուցահանդես-քարոզը:

Այդ նույն աղանդավորները երկրում հեղաշրջում արեցին, աղանդավորի հաստակաշի համառությամբ կործանում են երկիր, բանակ, անկախություն, ներկա ու ապագա սերունդներ, կոռուպցիան հասցրել են աննախադեպ մակարդակի և… Թվարկումը շարունակեք ինքներդ, իսկ ես հերթական անգամ զարմանամ-զայրանամ այն քահանայի վրա, որը քարոզում է սիրել աղանդավորներին…

Սիրո այս վայ-քարոզիչը եկեղեցում հանդիպման ժամանակ ոչ թե հորդորեց, այլ ճակատիս կրակեց, որ իզուր եմ անհանգստանում. ամեն ինչ օրենքի սահմաններում է… Դպրոցական երեխային ամենօրյա ռեժիմով աղանդավորների առկայությանը վարժեցնելն ու քարոզը լսելը օրենքի սահմաններում են:

Հիմա այնքան լավ եմ հասկանում հորս, որ ամեն օր սպասում էր իր տան դուռը թակող քահանայի…

Գյուղական մանկության ու պատանեկության հուշերից ամենատաքը գյուղից գյուղ շրջող քահանայի զրույցներն էին, որոնցից մնացել էր ՄԱՐԴՈՒ հետ հանդիպման կախարդանքը…

Պատմությունը ոչինչ չի սովորեցնում մեզ նման հին ցեղերին, պարզապես ջնջում է հիշողության էջերը (սա մեզ սպառնում է հիմա թուրքական թռչող անօդաչուների տեսքով), ու բաշիբոզուկները դառնում են պատմություն կերտողներ…

Ճիշտ չենք հասկացել «Պատմական ճշմարտությունը մեռելների լռությունն է» վճռակը և խորհրդավոր լռությունը լցրել ենք պարծենկոտությամբ, ինքնաբավ ու անմիտ մեծամտությամբ (հիշեցնի՞ք ծառերից կախված եվրոպացիներին, որ զարմանքով էին նայում ներքևում խորոված ուտող հայերին…), խոսել ենք, խոսում ենք ու բամբասում, խանգարում գործ անողներին: Ու հաջողում ենք, որովհետև վաղուց ապրում ենք հոտային չգրված օրենքներով, բնազդներով: Այդ ճանապարհին նվիրում ու նվիրաբերում ենք ամեն ինչ՝ կորցրած արժանապատվությունից մինչև ՀՈՂ, ՀՈՂ, ՀՈՂ, որն անպայման ներկում ենք մեր ջահելների արյունով: Դարեր շարունակ արյուն ենք թափել ու ՀՈՂԸ պաշտպանել, վերջին տարիներին… գրեթե ամեն օր զոհ ենք տալիս ՀՈՂԸ տալուն զուգահեռ… Սա ի՞նչ հանելուկ է… Փաստորեն, արդեն քանի՞ տարի իրագործում ենք թուրքի հին երազանքը, որ այդ երևակայական թանգարանում մեզ կրկին ներկայացնի «ազգընտիր»-ը, «միակ»-ը, «աննախադեպ»-ը:

Մենք, հակառակ վերը հիշատակածս վճռակի, սկսել ենք լռել… մեռնելուց առաջ:

Լռում ենք ՏԱՆԸ:

Լռում ենք Սփյուռքում:

Լռում ենք, որովհետև վաղուց կտրել-թափել ենք մեզ իրար կապող բոլոր թելերը՝ -ցի ածանցով կազմված բառաշարքով տարբերակելով միմյանց, բաժանելով ու կիսելով…

Փոխադարձ օտարացումն սկսվում է հայությանը մասնատող որակավորումից՝ ամերիկահայ, ֆրանսահայ, գյումրեցի…

Այս անտրամաբանական տրամաբանությամբ ես դառնում եմ հայաստանցի հայ… Այս խեղկատակությունից ծնվեց «ազգընտիրի» երեք ժողովուրդների ցանկությունները բավարարելու մասին նաղլը… Իրականում կատարվեց թուրքի երազանքը, իսկ հայության երկու հատվածների ցանկության մասին ոչ միայն մոռացան, այլև բարձր ամբիոններից պատմական անուններն ու տեղանունները աղավաղեցին:

Այս ամենը համառորեն հանդուրժող հոտը մենք ենք, որ գաղափար անգամ չունենք աստվածաշնչյան քաջ հովվի մասին:

Չունենք, չենք էլ ուզում ունենալ, որովհետև ստի համատարած թագավորության մեջ կուշտ ենք… իբր թե:

Սրան հավելեք ուղղագրության արհեստական խնդիրը, որ տասնամյակներ շարունակ որոճում ենք, աղավաղում պատմություն ու անցյալ. երկրում, որտեղ համատարած գրագիտությունը քիչ-քիչ փոխում ենք օտար լեզուների իբր խորացված ուսուցման՝ մայրենիի հաշվին, պետական լեզվի կարգավիճակն ենք քննարկում՝ առանց մտածելու հետևանքների մասին… Չնայած պարտավոր եմ խոստովանել՝ տասնամյակներ առաջ սկսված «բանավեճը» ծառայեց նպատակին. հայկական դպրոցում սովորեցնում ենք ամեն ինչ՝ բացի հայերենից…

«Ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք գալիս և ո՞ւր ենք գնում» ճակատագրական հարցադրումը դարեր շարունակ ընկալել ենք որպես հոետորական, այնինչ պատասխանի որոնումը կարող է մեզ միավորել որպես հանրություն, օգնել, որ ցեղային (սա ինձ համար նույն ստամոքսայինն է) մտածողության ճահճից բարձրանանք մինչև համաժողովրդականը, որից հեռու չէ ազգայինը:

Խոսում ենք աստվածային ճշմարտությունների մասին, բայց ԱՍՏԾՈՒՆ վոնդել ենք մեր հանրային, ընտանեկան կյանքից:

Հղումներ

1. Պետիկեան Գ., Սփիւռքը…, Փասադենա, 2022 թ. էջ 107: Այսուհետ այս հատորից մեջբերումների էջերը կնշվեն տեքստում:

Կառավարե՞լ Սփիւռքը

Վրէժ-Արմէն
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Սփիւռքի տարուան վերջաւորութեան կ՚արժէ անգամ մը ևս հարցը դնել սեղանի վրայ. Սփիւռքը կրնա՞նք կառավարել, կամ աւելի լաւ բանաձևուած՝ կրնա՞յ Սփիւռքը կառավարուիլ:

Անմիջապէս և միանշանակ «այո՛» ըսելը դժուար է:

Եւ երբ հարցը կը դնենք «կրնա՞նք»-ով, ո՞վ նկատի ունինք որպէս առաջին դէմք յոգնակի ենթակայ: Ո՞վ է այդ լռելեայն «մենք»-ը: Կամ երբ հարցը կը դնենք «կրնա՞յ»-ով, այն ատեն կը հետևի երկրորդ հարցում մը՝ «որո՞ւ կողմէ»:

Գոնէ ի՛մ մտքիս մէջ երկու պարագաներուն ալ պատասխանս յստակ է. «մենք»-ը մե՛նք ենք՝ սփիւռքահայութիւնը, ո՛չ անոր այս կամ այն հատուածը, իսկ կառավարումն ալ մե՛ր կողմէ պիտի ըլլայ, բացառաբար մեր կողմէ՝ սփիւռքահայերուս կողմէ, այսինքն՝ խօսքը ինքնակառավարման մասին է:

Կամայ-ակամայ հոս ալ պիտի վերյիշեմ ողբացեալ Վահէ Օշականը, որ կողմակից էր Սփիւռքի «անկախութեան հռչակման»: Բայց ի տարբերութիւն իրեն, ես Սփիւռքը չեմ համարեր «երկիր», «Երկի՛ր», որ մէկ է ու միակ:

Միւս կողմէ անկախութիւնը, ի հարկէ, յարաբերական յղացք մըն է, և հոս ալ հարց կրնայ դրուիլ՝ անկախութիւն որմէ՞: Այլև՝ այդ ինքնակառավարման անկախութիւնը կրնա՞յ անջատուիլ ընդհանուր հայութեան ինքնակառավարման գաղափարէն, Հայաշխարհի կառավարման հասկացութենէն:

Այժմ ուրիշ հարցումներ կը դրուին մեր առջև. ո՞վ է արգիլողը, որ մենք զմեզ կառավարենք: Ի՞նչ խանգարիչ ազդակներ կրնան ըլլալ: Կամ՝ որո՞նց համար ձեռնտու չէ, որ մենք այդպիսի ինքնակառավարում մը կարենանք ի գործ դնել: Փորձենք մի քանին ընորոշել:

Սկսինք մեր թշնամիներէն, որոնք ամեն գնով պիտի ուզեն հակառակիլ ուժեղ Սփիւռքի մը գոյաւորումին: Բայց կան նաև մեր բարեկամները, այն «բարեկամները», որոնց համար տկար ու անմիաբան, պառակտուած Սփիւռք մը նախընտրելի է, որպէսզի աւելի դիւրաւ անոնք կարենան իրենց ազդեցութիւնը բանեցնել մեր վրայ, անոնցմէ իւրաքանչիւրը՝ ըստ իր շահերուն:

Կան նաև մեր բնակած բոլոր երկիրներու պետութիւնները, որոնց համար աւելի կենսական է, որ իրե՛նց հայ բնակիչները առաջին հերթին իրե՛նց հաւատարիմ քաղաքացիները ըլլան և ոչ թէ ուրիշ ազգի մը... Եւ դժուար չէ երևակայել, թէ ինչպէս իրարու թշնամի երկու հայաբնակ երկիրներու միջև հակամարտութեան մը պարագային, երկու հայ զինուորներ իրենց հրացանները իրարու դէմ ուղղելու ստիպուին: Ասիկա՝ ոչ միայն ռազմի դաշտին վրայ...

Կան նաև, դժբախտաբար, հայրենի իշխանութիւններ, որոնք անդրադառնալով

Սփիւռքի մեծ ներուժին, Սփիւռքի կառավարումը պիտի ուզեն իրե՛նց հակակշռին տակ պահել: Այդ փորձառութիւնը ապրեր ենք խորհրդային ամբողջ եօթը տասնամեակներուն և կը շարունակենք ապրիլ այսօր ալ:

Բայց կան նաև ներքին ազդակներ, որոնցմէ գլխաւորը ազգային մէկ ու միակ նպատակի մը շուրջ տակաւին համահայկական առումով համախոհութիւն չըլլալն է, բան մը, առանց որուն ինչպէ՞ս կրնանք մենք մեզ կառավարել իբր մէկ ամբողջութիւն:

Անշուշտ կան բազմաթիւ ներքին այլ արգելակներ ևս, որոնք, սակայն երկրորդական հանգամանք ունին, ինչպէս այն իրողութիւնը, որ ապրելով տարբեր երկիրներու մէջ՝ տարբեր լեզուներու, մշակոյթներու, ընկերային իրավիճակներու ալ կրողները կը հանդիսանանք: Կ՚ըսեմ երկրորդական, որովհետև անոնք յաղթահարելի կրնան ըլլալ, եթէ համաձայնութիւն գոյանայ ընդհանուր նպատակի մը շուրջ:

Իսկ եթէ ի վերջոյ այդ համաձայնութիւնը իրականութեան վերածուի, այսինքն եթէ «ինչու»-ին շուրջ համաձայնինք, այն ատեն ի հարկէ կը ծագի «ինչպէս»-ը: Ինչպէ՞ս մենք զմեզ պիտի կառավարենք:

Պարբերաբար արծարծուած է Սփիւռքը ներկայացնող մարմին մը կամ կառոյց մը յառաջացնելու հարցը, արծարծուած է հապճեպ ու նոյնքնան հապճեպ ալ տրուած մոռացութեան, քանի որ բարդ ու բազմաշերտ խնդիր է ան: Ինչպէ՞ս մէջտեղ բերել զայն: Որոնցմէ՞ կրնայ բաղկանալ: Իւրաքանչիւր հայ պիտի կարենա՞յ իր քուէն ունենալ անոր կազմութեան մէջ: Ահա խնդիրներ, որոնց պատասխանները չունինք տակաւին: «Լոկ ցանկանալով հարցեր չեն լուծուում...»:

Օժտուած ենք ազգային սահմանադրութեամբ մը, որ աւելի քան մէկուկէս դարու հեռաւորութենէ հասած է մեզի ու որոշ փոփոխութիւններով կը կիրարկուի գէթ Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կողմէ: Եւ ճիշտ այդ կաթողիկոսութեան ալ գերագոյն գլուխն է՝ Արամ Ա. վեհափառը, որ 2022-ը հռչակեց Սփիւռքի տարի: Թերևս Իրե՛ն ալ կը պատշաճի առնել առաջին քայլը նաև մեր ինքնակառավարման հարցի քննութիւնը դնելու հայութեան այժմու օրակարգին վրայ: Հրատա՛պ օրակարգին: Թերևս կը պատշաճի երկու կաթողիկոսութիւններուն միասնաբար՝ ընկերակցութեամբ յարանուանութիւններուն, այլև երեք ազգային կուսակցութիւններուն: Կամ թերևս ալ նախաձեռնողները այս վերջինները պէտք է ըլլան:

Դժբախտաբար ներկայ սահմանադրութեամբ կ՚առաջնորդուին միայն Կիլիկեան աթոռի թեմերը: Կրնա՛յ մշակուիլ նո՛ր սահմանադրութիւն մը, որ պատկանի բոլոր սփիւռքահայերուն, անոնք պատկանին կիլիկեան կամ էջմիածնական թեմերուն, թէ՝ յարանուանութիւններուն, կամ ըլլան այլադաւան կամ անկրօն: Իսկ առկայ կազմակերպութիւնները՝ կուսակցութիւնները, միութիւնները, հաստատութիւնները և մասամբ նորին. այս բոլորը կրնա՛ն ներառուիլ նման սահմանադրութեան մը մէջ: Ի՞նչ դեր պիտի վերապահուի ամեն մէկուն: Պիտի կարենա՞ն բոլորն ալ պահել իրենց ինքնուրոյնութիւնը, բայց նաև գործել միասին: Ի՞նչ համեմատութիւններով մաս պիտի կազմեն ստեղծուելիք մարմիններուն, կամ մաս պիտի կազմե՞ն, թէ՞ միայն իրենց անհատ անդամներով պիտի մասնակցին. քանի՞ ձայնի իրաւունքով: Ի՞նչ յատկութիւններ պէտք է ունենան անհատ հայերը՝ ընտրուելու համար: Մէկէ աւելի կազմակերպութիւններու պատկանելութիւն ունեցող հայեր մէկէ աւելի՞ ձայն պիտի ունենան: Եւ այլն: Հարցումներու շարքը կարելի է երկարել:

Բայց պահ մը ենթադրենք, թէ բոլոր այդ խնդիրներն ալ լուծուեցան ու կարելի եղաւ յառաջացնել Սփիւռքի խորհրդարանը, այն ատեն անո՞ր կապը ինչ պիտի ըլլայ Հայաստանի և Արցախի ազգային ժողովներուն հետ: Փոխադարձաբար ներկայացուցիչներ պիտի ունենա՞ն: Այո, Սփիւռքը անոնցմէ անկախ պիտի ըլլայ վարչականօրէն: Սակայն համահայկական առումո՞վ: Անոնց համագործակցութեամբ ալ պիտի յառաջանա՞յ Հայաշխարհի խորհրդարանը:

Ահա հարցեր, որոնց մասին պարտաւոր ենք ոչ միայն... երազել, այլև մտածել: Այսո՛ր:

Եւ վերադառնալով վերնագրի հարցումին, այլևս յստակ չէ՞ պատասխանը.

– Այո՛, եթէ... ■

Բոլշևիկները առանց ծիծաղելի լինելու վախի շարունակում են պնդել, թե Հայաստանի խորհրդայնացումը տեղի ունեցավ նոյեմբերի 29-ին՝ Հայաստանի գյուղացիության և բանվորության ապստամբության հետևանքով: Նոյեմբերի 29-ին հայ բոլշևիկների մի փոքրաթիվ խմբակ մտավ Ազրբեջանին սահմանակից Իջևան գյուղը, և ցրվեց Բաքվից բերված թռուցիկներ, որ հայտարարում էին, թե «դաշնակների» կառավարությունը տապալված է, և տեղը բռնած է խորհրդային իշխանությունը: Մինչ նույն այդ միջոցին Խորհրդ. Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչը Երևանում խաղաղ բանակցություններ էր վարում «դաշնակների» կառավարության հետ: Երեք օր վերջը՝ դեկտեմբերի 2-ին միայն, Հայաստանի կառավարության և Խորհրդային Ռուսաստանի միջև կնքված համաձայնության հիման վրա Հայաստանը հայտարարվեց խորհրդային: Ոչ մի գնդակ չարձակվեց այդ առթիվ, ոչ մի ապստամբություն տեղի չունեցավ, ոչ մեկի քիթը չարյունոտեց, իսկ Հայաստանի գյուղացիությունն ու բանվորությունը լուռ էր: Լուռ էր ու կսկիծը սրտում ողբում էր հայրենիքի կործանումը: Եւ սպասում էր «խաչապաշտ ռուսին»:

Սպասում էին, որ գա ռուսը, բայց ռուսի փոխարեն Հայաստան մուտք գործեց Հեղկոմը և հետը մի քանի հարյուր քոսոտ կարմիր բանակայիններ ու հայ բոլշևիկներ՝ շատերը ծանոթ մայիսյան խռովություններից իրենց զանազան արարքներով՝ Ս. Կասյան, Ասք. Մռավյան, Ավիս Նուրիջանյան, Աշ. Հովհաննիսյան, արյունկզակ Աթարբեկյան և ուրիշներ: Ես ասում եմ «մուտք գործեց», որովհետև Հեղկոմը իսկապես իրեն պահում էր իբրև հաղթական կերպով մուտք գործող մի ուժ, որ իր ոտքերի տակ պատրաստ էր տրորելու պարտված թշնամուն:

Հակառակ որ ժողովուրդը և նախկին իշխանության մարդիկ խիստ բարյացակամ վերաբերում ցույց տվին և պատրաստակամություն հայտնեցին ամեն բանով աջակցելու նոր կառավարությանը, Հեղկոմը առաջին օրից իսկ թշնամական դիրք բռնեց դեպի երկրի բոլոր ոչ բոլշևիկ տարրերը և իրեն պահում էր ճիշտ այնպես, ինչպես պահում է թշնամի երկիրը մտնող նվաճող մի բարբարոս ուժ:

«Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի միջև», Եր., 2022, էջ 168-169:

ԴՐՕՇԱԿ